

ՎԿԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Report on the Protection of Witnesses

ՎԿԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Report on the Protection of Witnesses

2011



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Ուսումնասիրությունը նախատեսված է պրակտիկ և տեսաբան իրավաբանների,
ուսանողների, ինչպես նաև հասարակայնության լայն շրջանների համար:

ISBN: 978-92-9235-880-8

Ուսումնասիրությունը պատրաստվել և հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն
հրապարակման մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու
եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ԵԱՀԿ
տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումների ցանկ.....	4
2. Ներածություն.....	5
3. Վկաների պաշտպանության փորձի ուսումնասիրություն.....	7
3.1 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ամերիկայի Միացյալ Նահանգներում.....	7
3.2 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ռուսաստանի Դաշնությունում.....	11
3.3 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Միացյալ Թագավորությունում.....	15
3.4 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ավստրալիայում.....	17
3.5 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Գերմանիայում.....	19
3.6 Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Իտալիայում.....	20
3.7 Ամփոփում.....	22
4. Վկաների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում.....	24
4.1 Վկայի ինքնավար հասկացությունը (կարգավիճակը), դերն ու նշանակությունը արդար դատաքննության իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի.....	24
4.2 Մեղադրյալի և վկաների իրավունքները որպես մրցակցող լեգիտիմ շահեր.....	26
4.3 Վկայի պաշտպանության ապահովումը ՀՀ ներպետական օրենսդրությամբ. առկա հնարավորություններն ու խնդիրները օրենսդրության մեջ և պրակտիկայում.....	29
5. Գործնական ուսումնասիրություն.....	44
5.1 Մեթոդաբանություն.....	44
5.2 Դիտարկման արդյունքներ.....	46
5.3 Փաստաբանների շրջանում անցկացված հետազոտության արդյունքներ.....	50
5.4 Քննիչների շրջանում անցկացված հետազոտության արդյունքներ.....	57
6. Վկաների իրավունքների պաշտպանության բնագավառում վեր հանված խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.....	59
7. Հավելվածներ.....	81
7.1 Հավելված 1 - ԱՊՀ մասնակից-պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի կողմից ընդունված մոդելային օրենք «Տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին».....	81
7.2 Հավելված 2 – Ծրագրային թիրախ հանդիսացող համայնքների աշխարհագրական տարածք.....	86
7.3 Հավելված 3 – Վկայի հարցաքննության արձանագրության ձևաթուղթ.....	87
8. Նամակներ.....	94
9. Summary of the Report on the Protection of Witnesses.....	99

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՊՀ - Անկախ պետությունների համագործակցություն

ԵԽ – Եվրոպայի խորհուրդ

ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՔԱ – Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ՀՀ ՔԴՕ – Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք

ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՌԴ - Ռուսաստանի Դաշնություն

WITSEC - "Witness Security Program" (Վկաների պաշտպանության ծրագիր)

USMS - United States Marshals Service (Միացյալ Նահանգների մարշալների ծառայություն)

USC - United States Code (Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենք)

SOCA - Serious Organized Crime Agency (Կազմակերպված ծանր հանցագործությունների գործակալություն)

NWPP - National Witness Protection Program (Վկաների պաշտպանության ազգային ծրագիր)

2. Ներածություն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակն իր հիմնադրման օրից անվճար իրավաբանական խորհրդատվություն է մատուցում և աջակցություն ցույց տալիս կազմակերպություն դիմող այն անձանց, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող էին խախտվել պետության ներկայացուցիչների կողմից:

Վկայի իրավունքների պաշտպանության հետազոտություն անցկացնելու գաղափարը ծագել է դեռևս 2006 թ.: ՀՔԱ-ի հետազոտության հիմնական նպատակը քրեական վարույթին մասնակցող անձի պաշտպանության օրենսդրական և գործնական հնարավորությունների բացահայտումն է, ինչպես նաև այն խնդիրների վերհանումը, որոնք խոչընդոտում են նման պաշտպանության արդյունավետ ապահովումը:

Այս խնդիրները բացահայտելու համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նախաձեռնեց «Վկաների պաշտպանության ծրագիրը» Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ:

«Վկաների պաշտպանության ծրագիրը» նպատակ ունի լուսաբանել Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության համակարգի մի այնպիսի կարևոր ինստիտուտ, ինչպիսին է վկաների պաշտպանությունը: Մասնավորապես, սույն հետազոտությունը միտված է վերլուծելու առկա օրենսդրությունն ու պրակտիկան, միջազգային փորձի ուսումնասիրման ու համադրման միջոցով բացահայտելու վկաների պաշտպանության ներկայիս հնարավորությունները և առաջարկելու բարելավման հնարավոր տարբերակներ:

Այսպես, վկայի իրավական կարգավիճակն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, 86-հոդվածում, որը 2006 և 2007 թթ. փոփոխվել և լրացվել է՝ տրամադրելով վկաներին առավել լայն իրավունքներ: Մասնավորապես.

1. 2006 թ. հունիսի 1-ի փոփոխություններով որպես վկա չի կարող կանչվել և հարցաքննվել մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանցամանքների հիմքով:
2. 2006 թ. մայիսի 23-ի փոփոխությամբ վկային իրավունք է վերապահվել քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ:
3. 2006 թ. նոյեմբերի 15-ի փոփոխությունների արդյունքում ամրագրվել է, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենսդրական ամրագրում ստացավ նաև այն դրույթը, որով վկան կարող է հրաժարվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց:

Այս բարեփոխումները մեծապես նպաստեցին վկաների ինստիտուտի իրավական պաշտպանվածությանը, սակայն գործնականում միշտ չէ, որ դրանք պահպանվում են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2006 թ. մայիսի 25-ի փոփոխություններով օրենսգրքում ավելացվեց 98¹ հոդվածը, համաձայն որի՝ նախատեսվում են անձի¹

¹ Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են

պաշտպանության միջոցները: Միաժամանակ, ըստ նույն հոդվածի, պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները պետք է սահմանվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Սակայն մինչ այժմ նման օրենսդրություն չի մշակվել, և 98¹ հոդվածի կիրարկումը դարձել է ոչ իրատեսական:

Մինչդեռ ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրներում մեծ հաջողությամբ գործում են վկաների պաշտպանության պետական ծրագրեր, ինչը կարևոր նախապայման է արդարադատության արդյունավետ իրականացման և դրա նկատմամբ վստահության մթնոլորտի ստեղծման տեսանկյունից:

Սույն գեկույցում ներկայացվում են հետևյալ բաժինները.

1. Այլ երկրների օրենսդրությունը՝ վկաների պաշտպանության ապահովման մասով, որը հնարավորություն կտա բարելավելու քրեական արդարադատության համակարգը՝ հաշվի առնելով վկաների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմներ և գործիքներ: Մասնավորապես ներկայացվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Թագավորության, Ավստրալիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Իտալիայի Հանրապետության ազգային օրենսդրություններով նախատեսված վկայի պաշտպանության իրավական մեխանիզմները:

2. Ազգային օրենսդրության վերլուծությունը՝ վկաների պաշտպանության իրականացման մասով: Այս բաժնում ուսումնասիրվում է ՀՀ օրենսդրական և գործնական փորձը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի և Եվրոպայի խորհրդի հանձնարարականների հիման վրա և առաջարկներ են արվում օրենսդրության ու պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ:

Տվյալ բաժնում նախնառաջ պարզաբանվում է «վկա» ինքնավար հասկացությունը, որը ներառում է յուրաքանչյուր անձի, ում տված ցուցմունքը կարող է դրվել մեղադրանքի և դատավճռի հիմքում: Այնուհետև ներկայացվում են «վտանգի տակ գտնվող վկա» հասկացության տարրերը, դրա ռեալության օբյեկտիվ չափանիշները, անանուն վկաների ցուցմունքների օգտագործման սահմանները և մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու իրավունքի սահմանափակումները՝ ըստ ՄԻԵԴ-ի նախադեպերի: Առաջարկներ են արվում՝ ուղղված վկաների պաշտպանության ՀՀ ներպետական կարգավորման կատարելագործմանը՝ հաշվի առնելով ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ պրակտիկան:

3. Վկայի պաշտպանության՝ ազգային օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների գործնական կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունն ընդգրկել է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ոստիկանության բաժանմունքների դիտարկումը, փաստաբանների պրակտիկայի վերլուծությունը, քննիչների պրակտիկայի վերլուծությունը և քննիչների աշխատանքային պայմանների հետազոտությունը:

¹վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

3. Վկաների պաշտպանության փորձի ուսումնասիրություն²

3.1. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ամերիկայի Միացյալ Նահանգներում³

Վկաների պաշտպանությունը՝ որպես օրենսդրորեն սահմանված ընթացակարգ, առաջին անգամ լուրջ ուշադրության է արժանացել 1970-ականներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը պետք է կիրառվեր մաֆիայի գործելաձև ունեցող հանցավոր կազմակերպություններին վնասագերծելու ծրագրերի հետ համատեղ: Մինչ այդ մաֆիայի անդամների մեջ ընդունված էր լռության կանոնը՝ «օմերտան»: Մաֆիան մահվան սպառնալիքով պահպանում էր իր անբեկանելի հեղինակությունը նրանց նկատմամբ, ովքեր կխախտեին սահմանված կանոններն ու կհամագործակցեին ոստիկանության հետ: Կարևոր վկաներին հնարավոր չէր համոզել վկայություն տալ պետության համար: Նրանք անհետանում էին հետաքննության թիրախ հանդիսացող հանցավոր պարագլուխների համաձայնեցված ջանքերի շնորհիվ: Այս փորձը ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտին հանգեցրեց այն համոզման, որ անհրաժեշտ է մշակել վկաների պաշտպանության ծրագիր:

1970 թ. ԱՄՆ «Կազմակերպված հանցավորության վերահսկողության ակտը» ԱՄՆ գլխավոր դատախազին օժտեց այն վկաների անվտանգությունն ապահովելու լիազորությամբ, ովքեր համաձայնում էին վկայություն տալ կազմակերպված հանցավորությանը և այլ ծանր հանցագործությունների առնչվող գործերով: Գլխավոր դատախազի պատասխանատվության ներքո գործող ԱՄՆ «Վկաների անվտանգության ծրագիրը» (WITSEC) ապահովում է վտանգի մեջ գտնվող վկաների ֆիզիկական անվտանգությունը: Նրանք, հիմնականում անձնական նոր տվյալներով ու փոխված անուններով, վերաբնակեցվում են անվտանգ կացարաններում:

ԱՄՆ «Վկաների անվտանգության ծրագիրը» (WITSEC), ավելի քան մեկ տասնամյակ գործելուց հետո, 1984 թ. բարեփոխվեց ԱՄՆ «Վկաների անվտանգության բարեփոխման ակտի» միջոցով, որի արդյունքում վերացվեցին իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած մի շարք բացթողումներ ու թերություններ: Ակտի միջոցով վեր հանված խնդիրները մինչ օրս վկաների պաշտպանության բոլոր ծրագրերում ընդունվում են որպես հիմնարար տարրեր, մասնավորապես.

ա) ընդունելության խիստ չափանիշներ՝ ներառյալ այն ռիսկի գնահատումը, որ վերաբնակեցված, նախկինում հանցագործություն կատարած անձինք կարող են վտանգ ներկայացնել հասարակության համար,

բ) փոխըմբռնման հուշագրի ստորագրում, որը ծրագրում ներգրավվելու պահից սահմանում է վկայի պարտավորությունների շրջանակը,

գ) համապատասխան ընթացակարգերի մշակում, որոնք պետք է գործի դրվեն հուշագրով ստանձնած պարտավորությունները մասնակցի կողմից խախտվելու դեպքում,

² Սույն գլխի հեղինակը՝ Էդմոն Մարոքյանը, շնորհակալություն է հայտնում Տայթնիկ Մատինյանին, Ջորջ Նորիսին և Միքայել Քելլերին աշխատանքի ընթացքում տված արժեքավոր խորհուրդների համար:

³ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վկաների պաշտպանության օրենսդրություն. 18 U.S.C. 117, 18 U.S.C. 224, 18 U.S.C. 601: Թրաֆիքինգի և բռնությունների զոհերի պաշտպանության ակտ (2000). 22 U.S.C. 7101. 28 հոկտեմբերի 2000 թ.:

դ) ծրագրի մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման ընթացակարգերի մշակում և նման տեղեկատվության ապօրինի բացահայտման դեպքերի համար տուգանքների սահմանում,

ե) երրորդ կողմի իրավունքների պաշտպանություն, հատկապես վկայի այնպիսի պարտավորություններ, ինչպիսին է չվերաբնակեցված ծնողի նկատմամբ տարվող խնամքի կամ այցելության իրավունքը:

ԱՄՆ «Վկաների պաշտպանության դաշնային ծրագիրն» իրականացվում է Միացյալ Նահանգների Արդարադատության դեպարտամենտի կողմից, ԱՄՆ Սարշալների ծառայության միջոցով: Ծրագիրը նպատակ ունի սպառնալիքներից պաշտպանել վկաներին ինչպես նախաքննության և դատաքննության ընթացքում, այնպես էլ դրանից հետո: ԱՄՆ որոշ նահանգներ՝ Կալիֆոռնիան, Իլլինոյսը, Նյու Յորքը, Տեխասը, ունեն վկաների պաշտպանության իրենց նահանգային ծրագրերը, որոնք նախատեսում են նաև դաշնային օրենսդրությամբ չնախատեսված պաշտպանություն քրեական գործերով վկաների համար:

Ո՞ւմ վրա է տարածվում ԱՄՆ վկաների պաշտպանության դաշնային ծրագիրը

Վկաների պաշտպանության ծրագիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից մատուցվող ծառայություն է, որը պաշտպանություն է ապահովում ծանր քրեական գործերով անցնող վկաների համար: Վկաների պաշտպանության ծրագրով ապահովվում է վկաների ֆիզիկական անվտանգությունը, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև նոր ինքնություն և բնակավայր: Ծրագրով պաշտպանություն է ապահովվում թե՛ վկաների, թե՛ նրանց վտանգի մեջ գտնվող մերձավոր ազգականների համար:

Որպեսզի վկան բավարարի WITSEC ծրագրի պահանջները, քննվող գործը պետք է չափազանց կարևոր լինի, վկայի ցուցմունքները պետք է կարևորագույն նշանակություն ունենան հետաքննության հաջողության համար, և վկայի անձնական անվտանգությունն ապահովելու համար պետք է սպառված լինեն այլընտրանքային բոլոր հնարավոր միջոցները: Կան նաև այլ պայմաններ, ինչպես, օրինակ՝ վկայի հոգեբանական վիճակի նկարագիրը և ծրագրի կողմից կիրառվող կանոններին ու սահմանափակումներին հնազանդվելու կարողությունը: Տարիների ընթացքում WITSEC ծրագրի շրջանակն ընդլայնվել է: Այժմ այն, մաֆիայի գործելաճով հանցագործություններով անցնող վկաներից բացի, ներառում է նաև այլ բնույթի կազմակերպված հանցագործությունների հետ կապված վկայություն տվող անձանց, ինչպիսիք են թմրանյութերի վաճառքով զբաղվող կազմակերպությունների, մոտոցիկլային խմբավորումների, բռնություններ գործադրող փողոցային ավազակախմբերի գործունեությունն ու ահակրեկչությունը: Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող վկայի ընտանիքի անդամները ևս ընդգրկվում են պաշտպանության ծրագրի մեջ:

Ո՞վ է ապահովում վկայի պաշտպանությունը

ԱՄՆ գլխավոր դատախազը կարող է պահանջել դաշնային կառավարությունից կամ նահանգային կառավարությունից փոխել վկայի կամ հավանական վկայի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների կամ նրա անմիջական խնամքի տակ գտնվող այլ անձի բնակության վայրը կամ ձեռնարկել պաշտպանության այլ միջոց, եթե իրեն հայտնի են տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ վկային կամ հավանական վկային վտանգ է սպառնում, կամ

հավանական վտանգի սպառնալիք կա՝ որպես առանձնապես ծանր հանցագործության կապակցությամբ տրված վկայության հետևանք:

Գլխավոր դատախազը պետք է սահմանի այն իրավիճակները, որոնց դեպքում գլխավոր դատախազը իրավասու է վկաների պաշտպանության համար ձեռնարկել համապատասխան միջոցներ:

1970 թ. ընդունված «Կազմակերպված հանցավորության վերահսկման ակտի» համաձայն՝ ԱՄՆ գլխավոր դատախազին է վերապահված անձին վկաների պաշտպանության ծրագրում ներգրավելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը: Իրավակիրառ պրակտիկայում սովորաբար նահանգի դատախազն է ներկայացնում գլխավոր դատախազին այն վկաների անունները, որոնց անհրաժեշտ է ներառել պաշտպանության ծրագրում: Բացի այդ, պաշտպանություն ստանալու ցանկություն ունեցող վկան կարող է պաշտպանություն ստանալու միջնորդությամբ անմիջականորեն դիմել ԱՄՆ գլխավոր դատախազին:

Ինչպես արդեն նշվեց վերը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում վկաների պաշտպանությունն իրականացվում է ԱՄՆ մարշալների ծառայության (USMS) կողմից:

Մարշալների ծառայությունը ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի շրջանակներում գործող ԱՄՆ դաշնային օրենքի կիրառման գործակալություն է (տե՛ս 28 USC՝ 561):

ԱՄՆ մարշալների ծառայությունը գործադիր իշխանության մաս է կազմում և, ի թիվս այլ գործառույթների, Միացյալ Նահանգների դաշնային դատարաններում իրականացնում է իրավապահ գործառույթ: Այն պատասխանատու է դատական սպաների և շենքերի պաշտպանության, ինչպես նաև դատական իշխանության արդյունավետ իրականացման համար: Ծառայության պարտականությունների մեջ է մտնում դատարանի և դատավորների անվտանգության ապահովումը, մեղադրյալների տեղափոխումը, վկաների պաշտպանության ապահովումը և այլն:

1971 թ. սկսած, երբ ներդրվեց վկաների պաշտպանության ծրագիրը, ԱՄՆ մարշալներն ապահովել են ավելի քան 8.200 վկայի և 9.800 ընտանիքի անդամների պաշտպանությունը, փոխել նրանց բնակության վայրը կամ ինքնությունը: Այս ծրագրի հաջող գործունեությունը լայնորեն ճանաչված է որպես եզակի ու արժեքավոր գործիք պետության՝ քրեական տարրերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում:

Վկաները և նրանց ընտանիքները, որպես կանոն, ստանում են ինքնությունը հաստատող նոր փաստաթղթեր, ապահովվում են բնակարանով, ապրելու համար նվազագույն ֆինանսական միջոցներով և բժշկական օգնությունից օգտվելու հնարավորությամբ: Որոշ դեպքերում նաև աջակցություն է ցույց տրվում վկաներին, որպեսզի նրանք մասնագիտական վերապատրաստում անցնեն և նոր աշխատանք գտնեն:

ԱՄՆ մարշալները բոլոր պաշտպանվող վկաների համար ապահովում են 24-ժամյա պաշտպանություն, քանի դեռ նրանց նկատմամբ սպառնալիքը շարունակվում է: Վկաների պաշտպանությունը ներառում է մինչդատական և դատական վարույթները:

ԱՄՆ մարշալների ակտիվ պաշտպանության ընթացքում վկաների պաշտպանության ծրագրի որևէ մասնակից, որ հետևել է անվտանգության ուղեցույցներով սահմանված կանոններին, երբևէ չի տուժել:

Պետական պաշտպանության տեսակները

Վկայի պաշտպանության համար գլխավոր դատախազը կարող է ձեռնարկել հետևյալ հնարավոր միջոցներից որևէ մեկը կամ միաժամանակ մի քանիսը.

- տրամադրել համապատասխան փաստաթղթեր, որպեսզի տվյալ անձի համար ստեղծվի նոր ինքնություն,
- ապահովել բնակարանով,
- վերաբնակեցված վկաներին ապահովել կահույքով,
- տրամադրել ֆինանսական միջոցներ նվազագույն կենսամակարդակ ապահովելու համար,
- աջակցել նոր աշխատանք ձեռք բերելու հարցում,
- մատուցել վերաբնակեցման հետ կապված անհրաժեշտ ծառայություններ,
- հրաժարվել այն անձի ինքնությունը կամ վերաբնակեցման հասցեն բացահայտելուց, որը ներգրավված է վկաների պաշտպանության ծրագրում,
- պահպանել անձանց ինքնության և գտնվելու վայրի մասին տեղեկատվության գաղտնիությունը:

Սոցիալական պաշտպանության միջոցները

Գլխավոր դատախազը կարող է փոխհատուցում վճարել այն անձանց ընտանիքներին, ովքեր մահացել են կամ որոնց պատճառվել են ծանր մարմնական վնասվածքներ օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության տակ գտնվելու ժամանակամիջոցում:

Պետական պաշտպանության ձեռնարկման հիմքերը և իրականացման կարգը

Ի լրումն անձնական անվտանգության ապահովման՝ վկաների պաշտպանության ծրագիրը վերաբնակեցնում է վկաներին՝ նրանց տալով նոր ինքնություն: Պետության կողմից նաև տրամադրվում է որոշակի ֆինանսական աջակցություն, մինչև անձը գտնի նոր աշխատանք: Անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել նաև այլ աջակցություն: Վկայի վերաբնակեցման դեպքում տեղական իրավապահ մարմինները տեղեկացվում են այդ մասին, մասնավորապես՝ վկայի քրեական անցյալի մասին, որպեսզի կարողանան հսկողության տակ պահել նրան:

Գլխավոր դատախազի կողմից վկայի պաշտպանության միջոց ընտրելիս այն շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ անձի նկատմամբ վտանգի սպառնալիք կա: Այդպիսի սպառնալիքների շարքն են դասվում վկային մարմնական վնասվածքներ կամ այլ կերպ առողջությանը վնաս պատճառելը, անվտանգությունը կամ բարեկեցությունը վտանգելը, ներառյալ հոգեկան վիճակը կամ սոցիալական ապահովությունը:

Նախքան վկայի պաշտպանության ապահովումը գլխավոր դատախազը տեղեկություններ է հավաքում տվյալ անձի՝ ծրագրում ներգրավվելու համապատասխանելիության մասին, այդ թվում՝ տվյալ անձի հանցավոր անցյալի (եթե կա), ինչպես նաև՝ հոգեկան առողջության մասին: Գլխավոր դատախազը յուրաքանչյուր գործով պետք է գրավոր գնահատում կատարի՝ դիտարկելով.

- քրեական գործի կարևորությունը, որի շրջանակներում անձը տեղեկություններ է հաղորդել կամ ցուցմունք է տվել կամ կարող է տալ,
- այլ անձանց գույքին կամ ընդհանուր համայնքին սպառնացող հնարավոր վտանգները, որտեղ պետք է տեղափոխվի պաշտպանվող վկան,

- նաև պետք է եզրակացություն տա վկայի կողմից տրված կամ տրվելիք վկայության կարևորության մասին:

Նախքան վկային պաշտպանություն տրամադրելը գլխավոր դատախազի և տվյալ անձի միջև կնքվում է փոխըմբռնման հուշագիր, որով սահմանվում են պաշտպանվող անձի պարտականությունները: Մասնավորապես՝

- տվյալ անձի համաձայնությունը՝ ցուցմունք տալու իրեն հայտնի բոլոր հանգամանքների վերաբերյալ,
- անձի խոստումը որևէ հանցագործություն չկատարելու մասին,
- անձի համաձայնությունը՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի այլ անձանց հայտնի չդառնան վկայի պատշպանության ծրագրի մասին տեղեկությունները,
- անձի համաձայնությունը՝ կատարելու օրենսդրական պարտականությունները և իր դեմ կայացված քաղաքացիական գործերով վճիռները,
- անձի համագործակցության համաձայնությունը և պատրաստականությունը՝ կատարելու պաշտպանությունն ապահովող սպաների և կառավարության այլ աշխատակիցների բոլոր ողջամիտ պահանջները:

Այն դեպքերում, երբ գլխավոր դատախազը որոշում է, որ անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել վկայի պաշտպանության ապահովման նպատակով նախքան գրավոր գնահատումը, տրամադրվում է ժամանակավոր պաշտպանություն:

Պաշտպանության միջոցների ապահովման դադարեցումը

Վկաների պաշտպանությունը, որպես կանոն, տրամադրվում է ցմահ, բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտպանվող վկան կատարում է հանցագործություն (կրկնահանցագործությունները նրանց շրջանում կազմում են 17%): Գլխավոր դատախազը կարող է ցանկացած պահի դադարեցնել անձի նկատմամբ նախատեսված պաշտպանությունը, եթե նա էապես խախտել է փոխըմբռնման հուշագիրը կամ տվել է կեղծ տեղեկություն այն հանգամանքների վերաբերյալ, որոնց կապակցությամբ նրան տրամադրվել է պաշտպանություն: Այնուամենայնիվ, նախքան պաշտպանության դադարեցումը գլխավոր դատախազը պետք է ծանուցում ուղարկի տվյալ անձին՝ տեղեկացնելով վկայի պաշտպանության դադարեցման մասին և ներկայացնելով դրա հիմքերը հաստատող փաստաթղթերը: Գլխավոր դատախազի՝ պաշտպանության դադարեցման մասին որոշումը դատական բողոքարկման ենթակա չէ:

Ծրագիրը նաև ներառում է սահմանափակումներ: Վկային չի թույլատրվում վերադառնալ իր նախկին բնակության վայրը, ավելին՝ նա չի կարող կապ հաստատել իր նախկին ընկերների և ծանոթների հետ:

3.2. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ռուսաստանի Դաշնությունում⁴

⁴ Ռուսաստանի Դաշնության «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» դաշնային օրենք՝ ընդունված 2004 թ.:

2004 թ. Ռուսաստանի Դաշնությունում ընդունվել, իսկ 2005-ից ուժի մեջ է մտել «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» դաշնային օրենքը:

Ո՞ւմ վրա է տարածվում ՌԴ դաշնային օրենքը

Ռուսաստանի Դաշնությունում պետական պաշտպանություն է նախատեսվում տուժողի, վկայի, դատախազի, կասկածյալի, մեղադրյալի, նրանց փաստաբանների և օրինական ներկայացուցիչների, փորձագետի, մասնագետի, թարգմանչի, ինչպես նաև նրանց հարազատների, մերձավոր ազգականների, ընտանիքի անդամների և այլոց համար: Պետական պաշտպանություն կարող է ապահովվել նաև նախքան քրեական վարույթ հարուցելը, եթե դա կարող է նպաստել հանցագործության կանխմանը կամ բացահայտմանը:

Ո՞վ է ապահովում պաշտպանությունը

Պետական պաշտպանություն իրականացնող մարմիններ են հանդիսանում՝

- 1) պետական պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնող մարմինը,
- 2) պետական պաշտպանության միջոցների ապահովումն իրականացնող մարմինը,
- 3) սոցիալական պաշտպանություն տրամադրող մարմինը:

Պետական պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնող մարմին է հանդիսանում դատարանը (դատավորը), դատախազը, հետաքննության մարմնի ղեկավարը կամ քննիչը:

Պետական պաշտպանության միջոցների ապահովման պարտականությունը դրված է Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության, անվտանգության ծառայության դաշնային մարմինների, մաքսային մարմինների և թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, ինչպես նաև այլ պետական մարմինների վրա, որոնք կարող են, օրենքով սահմանված կարգով, ապահովել անձնական անվտանգության միջոցների իրականացումը: Դատաքննության կամ նախաքննության ընթացքում անձի պետական պաշտպանության ապահովման որոշումը կայացվում է դատարանի կամ դատախազի որոշմամբ, որն իրականացվում է ՌԴ ներքին գործերի մարմինների, անվտանգության ծառայության դաշնային մարմինների, մաքսային մարմինների և թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից:

Զինծառայողների անվտանգության ապահովումն իրականացվում է համապատասխան հրամանատարության կամ վերադաս հրամանատարության կողմից: Ռուսաստանի Դաշնությունում պետական պաշտպանությունն իրականացվում է դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության ներքո:

Պետական պաշտպանության տեսակները

Պաշտպանվող անձի նկատմամբ կարող են կիրառվել անվտանգության ապահովման մեկ կամ մի քանի միջոցներ.

1) Անձնական պաշտպանության, բնակարանի և գույքային պաշտպանության ապահովում: Պաշտպանվող անձի բնակարանը կամ գույքը կարող են հազեցված լինել հսկողության տեխնիկական միջոցներով, ինչպես նաև հակահրդեհային և անվտանգության ապահովման ազդանշանային սարքերով:

2) Անձնական պաշտպանության հատուկ միջոցների տրամադրում:

3) Պաշտպանվող անձի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովում: Անվտանգությունն իրականացնող մարմնի որոշմամբ, պետական կամ այլ տեղեկատվական աղբյուրներից պաշտպանվող անձի անձնական տվյալների տրամադրման վրա կարող է արգելանք դրվել: Կարող են փոխվել պաշտպանվող անձի հեռախոսահամարները և պետական գրանցման համարանիշները (ավտոմեքենայի և այլն):

4) Բնակության վայրի փոփոխում: Պաշտպանվող անձը կարող է տեղափոխվել ժամանակավոր կամ մշտական բնակության այլ վայր: Այն դեպքերում, երբ պաշտպանվող անձը մշտական է տեղափոխվում բնակության մեկ այլ վայր, ապա դաշնային բյուջեի հաշվին նրան տրամադրվում է բնակարան, հատուցվում են տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծախսերը, տրամադրվում են նյութական միջոցներ, աջակցություն է ցուցաբերվում նախկին աշխատանքի (ծառայությանը) կամ ուսման համարժեքը ձեռք բերելու համար: Այն դեպքերում, երբ վերաբնակեցումը կատարվում է ժամանակավոր, երաշխավորվում են պաշտպանվող անձի հիմնական բնակարանի նկատմամբ իրավունքները և նախկին աշխատավայրում կամ ուսման վայրում վերականգնվելու կամ դրա համարժեքը ձեռք բերելու հնարավորությունը:

5) Նոր փաստաթղթերի տրամադրում: Բացառիկ դեպքերում, երբ վկայի պաշտպանությունը չի կարող ապահովվել պաշտպանության այլ միջոցներով, կարող է իրականացվել պաշտպանվող անձի անձնական տվյալների՝ նրա անձնագրի, անվան, ազգանվան, հայրանվան և այլ տվյալների փոփոխություն:

6) Արտաքին տեսքի փոփոխում: Այն կատարվում է ՌԴ կառավարության կողմից սահմանված կարգով:

7) Աշխատանքի (ծառայության) կամ ուսման վայրի փոփոխում:

8) Ժամանակավոր բնակեցում անվտանգ վայրում, որտեղ կարող է երաշխավորվել անձի պաշտպանության ապահովումը:

9) Պաշտպանվող անձի նկատմամբ լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկում:

Վերոհիշյալ թվարկման 4-7-րդ կետերում նշված միջոցները կարող են ձեռնարկվել միայն քրեական գործերով, այն էլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում:

Սոցիալական պաշտպանության միջոցները

Պետական պաշտպանության ծրագրով պաշտպանվող անձի մահվան դեպքում դաշնային բյուջեից կատարվում է միանվագ վճարում նրա հարազատներին կամ ընտանիքի անդամներին՝ ՌԴ կառավարության սահմանած չափով, իսկ կերակրողին կորցնելու դեպքում նշանակվում է նպաստ՝ ՌԴ օրենսդրությամբ սահմանված չափով: Պետական պաշտպանության իրականացման ընթացքում պաշտպանվող անձի առողջությանը հասցված վնասի դեպքում դաշնային բյուջեից վճարվում է միանվագ գումար՝ ՌԴ կառավարության սահմանած չափով, անհրաժեշտության դեպքում նշանակվում է նաև հաշմանդամության թոշակ՝ ՌԴ օրենսդրությամբ նախատեսված չափով:

Պետական պաշտպանության ձեռնարկման հիմքերը և իրականացման կարգը

Պաշտպանության միջոցների ձեռնարկման համար հիմք են ծառայում հավաստի տեղեկություններն այն մասին, որ անձի կյանքին կամ առողջությանը իրական վտանգ է սպառնում, կամ նրան սպառնում է այլ տիպի բռնություն, գույքի վնասում կամ ոչնչացում: Պաշտպանության միջոցները ձեռնարկվում են միայն անձի գրավոր համաձայնության

հիման վրա, իսկ եթե անձն անչափահաս է, ապա նրա ծնողների, օրինական ներկայացուցիչների կամ հոգաբարձության կամ էլ խնամակալության մարմնի գրավոր համաձայնությամբ: Դատարանը (դատավորը), դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը, ստանալով դիմում (հաղորդագրություն) անձի կյանքին սպառնացող վտանգի, նրա նկատմամբ բռնությունների, գույքի ոչնչացման կամ վնասման կամ այլ ապօրինի գործողության վտանգի վերաբերյալ, պարտավոր է եռօրյա ժամկետում ստուգել այդ հայտարարության իսկությունը, որոշում կայացնել պաշտպանության միջոցի ապահովման վերաբերյալ կամ մերժել դրա տրամադրումը: Որոշումը կայացնելուց հետո այն նույն օրն ուղարկվում է պաշտպանությունն ապահովող մարմին և այն անձին, որի անվտանգությունը պետք է ապահովվի:

Անվտանգության ապահովման կամ դրա մերժման որոշումը կարող է բողոքարկվել՝ դիմում ներկայացնելով այն կայացնող մարմին, դատախազին կամ դատարան: Որոշումը քննարկվում է 24 ժամվա ընթացքում: Պաշտպանություն իրականացնող մարմինն է ընտրում պաշտպանության կիրառելի միջոցի տեսակը, ինչպես նաև տեղեկացնում է ընտրված պաշտպանության միջոցի, դրա փոփոխման, լրացման մասին այն մարմնին, որի որոշման հիման վրա է իրականացվում պետական պաշտպանությունը: Պաշտպանվող անձին սպառնացող վտանգի վերացման դեպքում պետական պաշտպանությունը դադարեցնելու նպատակով պաշտպանություն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացնում պետական պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացրած դատարան (դատավորին), դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմին: Անհրաժեշտության դեպքում անվտանգության միջոցներն իրականացնող մարմինը պաշտպանվողի հետ կնքում է գրավոր պայմանագիր՝ անվտանգության միջոցների ժամկետների, փոխադարձ պարտավորությունների և պատասխանատվության վերաբերյալ:

Սոցիալական պաշտպանության միջոցները

Սոցիալական պաշտպանության միջոցների ձեռնարկման հիմքեր կարող են լինել պաշտպանվող անձի մահը, նրան պատճառված մարմնական վնասվածքը կամ նրա առողջությանը պատճառված այլ վնաս:

Պետական պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնող մարմինը, ստանալով պաշտպանվող անձի մահվան կամ մարմնական վնասվածքի փաստի առնչությամբ դիմում և հավաստիանալով, որ մահը պատճառվել է անձի՝ քրեական դատավարությունում մասնակցելու հետևանքով, եռօրյա ժամկետում որոշում է կայացնում սոցիալական պաշտպանության միջոցների ձեռնարկման կամ դրանց մերժման վերաբերյալ: Սոցիալական պաշտպանության միջոցի ապահովման կամ դրա մերժման որոշումը կարող է բողոքարկվել՝ դիմում ներկայացնելով այն կայացնող մարմնի վերադասին, դատախազին կամ դատարան: Բողոքը ենթակա է քննության ստացման պահից հետո մեկ ամսվա ընթացքում: Սոցիալական պաշտպանություն իրականացնող մարմինը, ստանալով սոցիալական պաշտպանության ապահովման մասին որոշումը, պարտավոր է այն ի կատար ածել 10-օրյա ժամկետում:

Պաշտպանության միջոցների ապահովման դադարեցումը

Պաշտպանության միջոցները դադարեցվում են, եթե վերանում են դրանց ապահովման հիմքերը, կամ պաշտպանության ապահովումն անհնար է դառնում պաշտպանվող անձի կողմից պաշտպանությունն իրականացնող մարմնի հետ կնքված պայմանագրի խախտման

պատճառով: Պաշտպանությունը կարող է նաև դադարեցվել պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա:

Պաշտպանության միջոցների դադարեցումը հնարավոր է պաշտպանությունն ապահովելու մասին որոշում կայացրած մարմնի կամ այն մարմնի որոշմամբ, որի վարույթում է գտնվում տվյալ քրեական գործը: Պաշտպանության միջոցի դադարեցման որոշումը կարող է բողոքարկվել այն կայացնող մարմնի վերադասին, դատախազին կամ դատարան: Բողոքը ենթակա է քննության ստացման պահից 24 ժամվա ընթացքում: Պաշտպանության միջոցի դադարեցման որոշման մեջ պետք է լուծվի նաև պաշտպանվող անձի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների վերականգնման հարցը: Պետական պաշտպանությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ պաշտպանությունն իրականացնող մարմնի կողմից պաշտպանության դադարեցման վերաբերյալ որոշում չի կայացվում: Դատարանը քրեական գործով վճիռ կայացնելիս անդրադառնում է նաև պաշտպանության միջոցի շարունակելիության կամ դրա դադարեցման հարցին:

3.3. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Միացյալ Թագավորությունում⁵

Միացյալ Թագավորությունում վկաների պաշտպանությունն իրականացվում է համաձայն «Ծանր, կազմակերպված հանցագործության և ոստիկանության մասին» 2005 թ. ընդունված ակտով: Այդ ակտը պաշտպանություն է նախատեսում այն անձանց համար, ովքեր, քրեական գործի շրջանակներում ներկայացնելով հավաստի ապացույցներ, համագործակցում են վարույթն իրականացնող մարմնի հետ, և այդ կապակցությամբ նրանց կյանքին, առողջությանը կամ սեփականությանը սպառնում է իրական վտանգ: Որոշ բավական լուրջ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում փոխել պաշտպանվող անձանց բնակության վայրը և ինքնությունը:

Բազմաթիվ ուժային կառույցներ վկաների պաշտպանության ստորաբաժանումներ ունեն, որոնք համագործակցում են Վկաների կենտրոնական բյուրոյի հետ: Վկաների պաշտպանության ստորաբաժանումները համալրված են հատուկ վերապատրաստում անցած սպաներով, ովքեր, «Ծանր, կազմակերպված հանցագործության և ոստիկանության մասին» 2005 թ. ակտի համաձայն, ապահովում են վկաների պաշտպանության միջոցների իրականացումը: Ոչ բոլոր ուժային կառույցները կամ իրավապահ մարմիններն ունեն վկաների պաշտպանության ստորաբաժանումներ⁶:

Ո՞ւմ վրա է տարածվում

Միացյալ Թագավորությունում պետական պաշտպանության ծրագիրը տարածվում է վկաների և այն անձանց վրա, ովքեր մասնակցում են քրեական գործի նախաքննությանը կամ դատաքննությանը, և նրանց կյանքի ու առողջության նկատմամբ ոտնձգություններն այնքան էական են, որ անհրաժեշտ է տվյալ անձանց անվտանգության ապահովման նպատակով կամ վերաբնակեցնել նրանց, կամ էլ փոխել նրանց ինքնությունը: Օրենքը տարածվում է միայն այն անձանց վրա, ովքեր մշտապես բնակվում են Միացյալ Թագավորությունում: Վերոհիշյալ օրենքում ցանկ կա՝ Աղյուսակ 5: Համաձայն այդ աղյուսակի՝ պաշտպանություն

⁵ Միացյալ Թագավորության «Ծանր, կազմակերպված հանցագործության և ոստիկանության մասին» ակտ՝ ընդունված 2005 թ.:

⁶ http://www.cps.gov.uk/legal/v_to_z/witness_protection_and_anonymity.

է տրամադրվում վկաներին, իրավապահ մարմինների աշխատակիցներին, դատախազներին և դատախազության աշխատակիցներին, դատավորներին և մագիստրանտներին, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների անդամներին կամ համատեղ կենցաղ վարող անձանց: Միացյալ Թագավորության օրենսդրությունը պաշտպանություն է ապահովում նաև այն դատավորների, մագիստրանտների և խաղաղության դատավորների համար, ովքեր, հանդիսանալով Միացյալ Թագավորության հպատակներ, գործունեություն են ծավալում միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մարմիններում: Նմանապես, Միացյալ Թագավորության հպատակ հանդիսացող դատախազները, անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրականացվում գործերի վարույթը, կարող են, օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանություն ունենալ:

Պաշտպանություն կարող է տրամադրվել նաև իրավապահ համակարգի սպաներին և կոնստեբլներին, մաքսային, ներգաղթի և ազատագրկման վայրերում աշխատող սպաներին, ինչպես նաև ֆինանսական հանցագործությունների ստորաբաժանումների աշխատակիցներին:

Ո՞վ է ապահովում պաշտպանությունը

Միացյալ Թագավորությունում պաշտպանության ապահովման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ օժտված են ոստիկանության գլխավոր սպաները և գլխավոր կանստեբլները, Ծանր և կազմակերպված հանցագործությունների գործակալության (SOCA) գլխավոր տնօրենը, եկամուտների և մաքսային հանձնաժողովը: Այդ պաշտոնյաները տվյալ գործառույթը կարող են վերալիազորել իրենց ենթակայության տակ գտնվող և համապատասխան որակավորում ունեցող մեկ այլ աշխատակցի⁷:

Պետական պաշտպանության տեսակները

Համաձայն Միացյալ Թագավորության վկաների պաշտպանության ծրագրի՝ վկաներին տրամադրվող պաշտպանության միջոցներն են վերաբնակեցումն ու ինքնության փոփոխումը: Սակայն ոստիկանությունը կամ անվտանգությունն ապահովող այլ մարմինները կարող են ձեռնարկել ցանկացած այլ տեսակի պաշտպանության միջոց, ինչպես, օրինակ՝ ազդանշանային համակարգերի տեղադրում, փականների սպասարկում և այլն:

Պետական պաշտպանության ձեռնարկման հիմքերը և իրականացման կարգը

Պաշտպանություն ապահովելու համար լիազոր մարմինը պետք է հավաստի տեղեկություններ ունենա այն մասին, որ տվյալ անհատի անվտանգությանը վտանգ է սպառնում: Պաշտպանության ապահովման, դրա մերժման կամ դադարեցման որոշման համար լիազոր մարմինը պետք է հետևյալ չափանիշների համաձայն գնահատում կատարի.

- անձի անվտանգությանը սպառնացող վտանգի բնույթն ու չափը,
- իրականացվելիք պաշտպանության արժեքը,
- անձի և նրա ընտանիքի անդամների՝ պաշտպանության արդյունքում ստեղծված ցանկացած փոփոխությանը հարմարվելու ունակությունը,
- պայմանավորված վարույթի բնույթով և անձի տված վկայության կարևորությամբ՝ կարո՞ղ է արդյոք անձը հանդիսանալ քրեադատավարական վարույթի վկա:

⁷ <http://www.homeoffice.gov.uk/about-us/home-office-circulars/circulars-2006/009-2006>.

Օրենսդրությունը սահմանում է, որ պաշտպանություն իրականացնող մարմինները կարող են անհրաժեշտության դեպքում իրար վերալիազորել պաշտպանության միջոցների իրականացումը, եթե դա առավել արդյունավետ և մատչելի կդարձնի պաշտպանության ապահովումը: Մասնավորապես, պաշտպանվող անձի վերաբնակեցման դեպքում պաշտպանության իրականացումը կարող է շարունակել տեղի ուստիկանությունը, ոչ թե հատուկ գործուղված աշխատակիցներ: Պաշտպանությունն իրականացնող մի մարմնից մեկ այլ մարմնին լիազորությունների փոխանցումն իրականացվում է համապատասխան գրավոր ընթացակարգով:

Օրենսդրական մակարդակում ամրագրված է նաև պաշտպանություն իրականացնող մարմինների և պետական մարմինների համագործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Մասնավորապես, վերաբնակեցված վկաների բնակարանային, աշխատանքային, կրթական, առողջապահական և այլ խնդիրների կապակցությամբ աջակցությունը պաշտպանության իրականացման ընթացքում կատարվում է ուստիկանության միջոցով, ոչ թե քաղաքացին անմիջականորեն դիմում է համապատասխան իրավասու մարմնին:

Պաշտպանության միջոցների ապահովման դադարեցումը

Պաշտպանություն իրականացնողը կարող է փոփոխել կամ դադարեցնել պաշտպանությունը, եթե համոզված է, որ դա անհրաժեշտ է: Պաշտպանության միջոցի փոփոխությունը կամ դադարեցումը կարող է տեղի ունենալ այն դեպքերում, երբ վկան հանցագործություն է կատարում կամ խախտում է պաշտպանության պայմանագիրը: Պաշտպանության դադարեցումն իրականացվում է համապատասխան գրավոր ընթացակարգով:

3.4. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Ավստրալիայում⁸

1983 թվականից Ավստրալիայի թագավորական հանձնաժողովը սկսեց մեծապես կարևորել կազմակերպված հանցավորության դեմ պայքարում իրազեկիչների (ինֆորմատորների) կողմից տրամադրվող տեղեկությունների առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Մասնավորապես, խրախուսվեց ավելի ցածր մակարդակում գործող անձանց՝ կազմակերպիչների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը: Այդ ժամանակ վկաների պաշտպանության հարցն առանձին ուստիկանական ուժերի խնդիրն էր, և մոտեցումները տարբեր էին: Որոշ փորձագետներ շեշտը դնում էին 24-ժամյա պաշտպանության վրա: Մյուսները գերադասում էին վկաների վերաբնակեցումը՝ ինքնության նոր տվյալների տրամադրմամբ: 1988 թ. համատեղ խորհրդարանական հանձնաժողովն անցկացրեց վկաների պաշտպանության համապարփակ ուսումնասիրություն⁹: Ուսումնասիրության զեկույցն ուղղակիորեն հանգեցրեց 1994 թ. «Վկաների պաշտպանության ակտը» համագործակցության երկրների մակարդակում ներկայացնելուն, ինչպես նաև հայելային օրենսդրության կիրառմանը Ավստրալիայի Կապիտալ տարածքի մի շարք նահանգներում¹⁰:

⁸ Ավստրալիա, Դաշնային օրենքների պաշտոնական տեղեկագիր No. 105/1997. 19 օգոստոսի, 1997 թ.:

⁹ Վկաների պաշտպանություն՝ նախապատմություն և ընտրված մոտեցումներ: Հանցավորության ազգային մարմնի Ավստրալիայի խորհրդարանական համատեղ հանձնաժողով, Վկաների պաշտպանություն՝ Չեկույց, Պառլամենտական գրություն Թիվ. 193/88, Կանբերրա, Ավստրալիայի Կառավարության տպագրական ծառայություն, 1988:

¹⁰ Սույն նյութի ստեղծման պահին Ավստրալիայի ենթակայության մի շարք նահանգները և տարածքները ընդունել են Վկաների պաշտպանություն տարածաշրջանային մեխանիզմներ՝ համաձայն NWPP ծրագրի դրանք են. Ավստրալիայի

Վկաների պաշտպանության ակտը.

ա) հիմնում է «Վկաների պաշտպանության ազգային ծրագիրը» (NWPP) և սահմանում է մուտքային պայմաններ անձի համար, որպեսզի նա համարվի NWPP-ի կողմից ներգրավման ենթակա վկա: Վկան ծրագրում ընդունվելու պահից դառնում է «մասնակից»,

բ) Ավստրալիայի դաշնային ոստիկանությանն իրավունք է վերապահվում վկաների վերաբնակեցումը, ինչպես նաև նրանց NWPP ծրագրից հեռացումը կառավարելու հարցերում, ներառյալ՝ փոխըմբռնման հուշագրերի ստորագրումը, նոր ինքնությունների ստեղծումը և նախկին ինքնությունների վերականգնումը,

գ) լիազորում է NWPP-ի ներկայիս կամ նախկին մասնակիցների գրանցամատյանի վարումը, որը պետք է, մասնավորապես, ներառի տեղեկություններ անձի անվան և նոր ինքնության, ինչպես նաև մասնակցին առաջադրված մեղադրանքների մանրամասնությունների վերաբերյալ,

դ) ապահովում է Համագործակցության երկրների՝ ինքնությունը հաստատող փաստաթղթերի ամբողջականությունը (հարկ վճարողի հաշվառման համարները, անձնագրերը), պայմանով, որ վկաների պաշտպանության ներպետական ծրագրերի մասնակիցների ինքնությունը հաստատող փաստաթղթերը չեն թողարկվի, քանի դեռ տվյալ նահանգում կամ տարածքում օրենսդրական և նախարարական մակարդակով դրանց առնչվող հարցերով համապատասխան նախապատրաստական միջոցներ չեն իրականացվի,

ե) տրամադրում է մեխանիզմներ, որոնք կանխում են մասնակիցներին, որպեսզի իրենց նոր ինքնությունները չօգտագործեն քաղաքացիական կամ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար, և հստակ սահմանում է, որ վկաները վկայություն տալու կամ հայտարարությամբ հանդես գալու դիմաց չեն կարող որպես խրախուսում կամ պարգև ներառվել NWPP ծրագրում,

զ) պատասխանատվություն է սահմանում՝ կապված մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների ապօրինի հրապարակայնացման հետ, ինչպես նաև պատասխանատվություն այն մասնակիցների համար, ովքեր բացահայտում են տեղեկություններ՝ կապված NWPP ծրագրի հետ:

1997 թ. ակտի մեջ կատարվեցին փոփոխություններ, որոնց արդյունքում NWPP ծրագրի մասնակիցներին թույլատրվում էր կատարել բացահայտումներ Համագործակցության երկրների օմբուդսմանին բողոքների կամ տեղեկությունների տրամադրման հայցեր ներկայացնելու նպատակով: 2002 թ. ակտում կրկին փոփոխություն կատարվեց, որպեսզի հնարավորություն տրվի միջազգային քրեական դատարանի պահանջով անձանց ներգրավելու NWPP ծրագրում: Ընթացակարգը, որով անձը համարվում է ներկայացված դատարանի կողմից NWPP ծրագրում ընդունելու համար, նման է NWPP ծրագրում օտարազգիների կամ օտարերկրյա քաղաքացիների ներգրավման ընթացակարգին:

Կապիտալ Տարածք՝ 1996թ. Նոր Հարավային Ուելս՝ 1995թ. Հյուսիսային Տարածք՝ 2002թ., Քուինսլենդ՝ 2000թ., Հարավային Ավստրալիա՝ 1996թ., Թասմանիա՝ 2000թ., Վիկտորիա՝ 1999թ., Արևմտյան Ավստրալիա՝ 1996թ.:

3.5. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Գերմանիայում¹¹

1980-ականների կեսերից սկսած՝ Գերմանիայում գործել են վկաների պաշտպանության ծրագրեր: Առաջին անգամ դրանք կիրառվել են Համբուրգում՝ կապված մոտոցիկլետային ավազակախմբերի կատարած հանցագործությունների հետ:

1998 թ. ընդունվեց «Վկաների պաշտպանության ակտը»: Այն ներառում էր դրույթներ, որոնք կարգավորում էին քրեական վարույթները՝ շեշտադրելով հետևյալը.

- տեսաձայնագրման տեխնոլոգիաների կիրառումը վտանգի տակ գտնվող վկաների հարցաքննության ժամանակ (հատկապես որպես զոհ վկայություն տվող երեխաները),
- վկաների անձնական տվյալների գաղտնիության ապահովման բարելավված հնարավորությունները քրեական վարույթի բոլոր փուլերում,
- իրավական աջակցության ցուցաբերում զոհերին և վկաներին:

1998 թ. ընթացքում կրկին ոստիկանության աշխատանքային խումբը սահմանեց «վկաների պաշտպանություն» հասկացությունը՝ առաջին անգամ շարադրելով վկաների պաշտպանության գործում ներգրավված գործակալությունների կողմից իրականացման ենթակա խնդիրներն ու միջոցառումները: Սա հանգեցրեց դաշնային և նահանգային ներքին գործերի ու արդարադատության նախարարությունների կողմից վտանգի տակ գտնվող վկաների պաշտպանության ընդհանուր ուղեցույցների հրապարակմանը:

Մինչև 2001 թ. ընդունված «Վտանգի տակ գտնվող վկաների պաշտպանությունը համահունչ դարձնելու մասին» ակտը վերոհիշյալ ուղեցույցը ծառայում էր որպես Գերմանիայի վկաների պաշտպանության ծրագրի հիմնական հենք: 2003 թ. մայիսին ուղեցույցները համադրվեցին նշված ակտի իրավական դրույթների հետ և այժմ ծառայում են որպես ակտի իրականացման դրույթներ Գերմանիայի բոլոր վկաների պաշտպանության գրասենյակներում:

2001 թ. ակտը ներկայացվեց դաշնային և նահանգային մակարդակներում վկաների պաշտպանության իրավական պայմանների և չափանիշների համապատասխանեցման նպատակով: Դրա հիմնական դրույթները ներառում են հետևյալ ոլորտները.

ա) Ծրագրում ընդգրկման ենթակա վկաների խմբեր, նրանց ընդունման և հեռացման չափանիշներ: Ըստ ակտի՝ ծրագրում կարող են ընդգրկվել այն անձինք, ովքեր վտանգված են ծանր կամ կազմակերպված հանցագործությունների առնչությամբ վկայություն տալու իրենց ցանկության պատճառով: Մասնակիցները պետք է և՛ համապատասխանեն, և՛ ցանկություն ունենան ծրագրում ներգրավվելու համար:

բ) Որոշումներ կայացնող և իրականացնող մարմին: Ակտը սահմանում է, որ պաշտպանության բաժինը և հանրային մեղադրողը ծրագրում ներգրավելու մասին որոշումները պետք է կայացնեն համատեղ, բացի այդ, այն նաև ենթադրում է, որ վկաների պաշտպանության բաժինը պետք է առանձին միջոցների ապահովման մասով ունենա ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավասություն՝ այդ նպատակի համար ունենալով այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են հանցանքի ծանրությունը, ռիսկի մեծությունը, մեղադրյալի իրավունքները և միջոցառումների ազդեցությունը:

¹¹ Գերմանիա, Վտանգի տակ գտնվող վկաների պաշտպանության բարեփոխումների ակտ (2001). BGBl. I.S. 3510. 11 դեկտեմբեր 2001.:

գ) Ակտը սահմանում և ապահովում է վկաների պաշտպանության բաժիններում ու այլ պետական և ոչ պետական կառույցներում անհատական տվյալներին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը: Պաշտպանության տակ գտնվող վկաների գործերը պահպանվում են պաշտպանության բաժիններում և չեն ներառվում հետաքննության նյութերում, սակայն հետաքննության մարմնի պահանջով կարող են տրամադրվել նրան:

դ) Գաղտնագրվող ինքնության տրամադրման պայմաններ, անձնական տվյալների հարցերում աջակցություն և պաշտպանության ընթացքում տրամադրվող նպաստներ: Գերմանիայի վկաների պաշտպանության ծրագիրն իրականացվում է դաշնային մակարդակում և նահանգներում գործող վկաների պաշտպանության գրասենյակների միջոցով: Դաշնային քրեական ոստիկանության գրասենյակը պատասխանատու է դաշնային գործերով ներգրավված վկաների պաշտպանության և ազգային ու միջազգային մակարդակներում գործողությունների համակարգման համար, ներառյալ՝

- վկաների պաշտպանության ծրագրի տարեկան հաշվետվության պատրաստումը,
- դասընթացների ու շարունակական կրթության կազմակերպումը և անցկացումը,
- պարբերական գիտաժողովների անցկացումը՝ ներգրավելով վկաների պաշտպանության դաշնային ու նահանգային գրասենյակների տնօրեններին,
- համագործակցությունը նահանգների, դաշնային գործակալությունների և արտերկրում գտնվող գրասենյակների միջև,
- միջազգային համագործակցությունը:

Ավելին, վկաների պաշտպանության բնագավառում որակի ապահովման դաշնային պետական նախագծային խումբը, որը կազմված է վկաների պաշտպանության յոթ նահանգային գրասենյակների տնօրեններից և գործում է դաշնային քրեական ոստիկանության գրասենյակի նախագահությամբ, ապահովում է արդյունավետ համագործակցություն՝ մշակելով ծրագրի ընդունելության միասնական ազգային ընթացակարգ, ստեղծելով ստանդարտացված պահանջներ՝ վկաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների համար, ինչպես նաև ընդհանուր սկզբունքներ դասընթացների ու շարունակական կրթության համար:

3.6. Վկաների պաշտպանության իրավական մեխանիզմները Իտալիայում¹²

Դեռևս 1930 թ. Իտալիայի քրեական օրենսգիրքը սահմանում էր պատժից մասնակի կամ ամբողջական ազատում, եթե իրավախախտ անձը հատուցում էր քրեական փաստը կամ համագործակցում էր իշխանությունների հետ՝ քաղաքական դավադրություններին կամ ավագակախմբերի գործունեությանն առնչվող գործերում: 1970-ականներին Մարքսիստ-լենինիստական ահաբեկչական խմբի՝ Կարմիր բրիգադի կողմից կատարվող բռնարարքների թվի աճը հանգեցրեց մի շարք օրենքների ընդունման, որոնք խրախուսում էին անջատումը ահաբեկչական խմբերից և համագործակցությունն իշխանությունների հետ: Չնայած այն հանգամանքին, որ այդ միջոցառումները համարվում էին կենսական Կարմիր բրիգադիների տարրալուծման գործում, նշված օրենքներից որևէ մեկը համագործակցողին՝ որպես այդպիսին, պաշտոնապես իրավական պաշտպանություն չէր տրամադրում:

¹² Իտալիա, Վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության օրենք No. 82. 15 մարտի, 1991:

Վկաների պաշտպանությունը պաշտոնապես ընդունվեց միայն 1984 թ., երբ սիցիլիական մաֆիոզ Տոմազո Բուսկետտան դուրս եկավ մաֆիայի դեմ և սկսեց արդարադատության հետ համագործակցել: Բուսկետտան այսպես կոչված Մաքսի դատավարության գլխավոր վկան էր, որը հանգեցրեց մաֆիայի գրեթե 350 անդամի բանտարկության: Նրան իր օգնության դիմաց տրամադրվեց նոր ինքնություն, և ապահովվեց նրա վերաբնակեցումը: Նման դեպքերը նպաստեցին, որ մաֆիայի ավելի մեծ թվով անդամներ համագործակցեն արդարադատության հետ, և 1990-ականների վերջում Իտալիայի իշխանություններն արդեն օգտվում էին արդարադատության ավելի քան 1000 համագործակցողների ծառայություններից: Միաժամանակ Իտալիայի արդարադատությունը շարունակ քննադատվում էր կասկածելի վկաների ու նրանց շարժառիթների առնչությամբ, հնչում էին մեղադրանքներ, թե վկաների պաշտպանության ծրագիրն անկազմակերպ է և վատ է կառավարվում: Սրան ի պատասխան, 1991 թ. մարտի 15-ի թիվ 82 հրաման-օրենքը համապարփակ վերանայման ենթարկվեց, որն ուժի մեջ մտավ 2001 թ. հունվարին: Վերանայված օրենքի հիմնական բաղադրիչներից մեկը արդարադատության հետ համագործակցողների համար վկաների պաշտպանության կազմակերպման նպատակով առանձին կառույցի ստեղծումն էր: Թիվ 82 հրաման-օրենքի 2001 թ. վերանայված հիմնական դրույթները հետևյալն են.

ա) Պաշտպանության ենթակա անձինք.

- վկաները կամ իրազեկիչները թմրանյութերի, մաֆիայի կամ սպանության գործերով,
- 5-20 տարվա ազատազրկում ենթադրող որևէ հանցագործության վկաները,
- համագործակցողներին մոտ կանգնած անհատներ, որոնց վտանգ է սպառնում:

բ) Պաշտպանության տեսակները.

- «Ժամանակավոր պլան», որը ենթադրում է վերաբնակեցում և կենսաապահովում 180 օրով,
- «հատուկ միջոցառումներ», որը վերաբնակեցված անձանց համար նախատեսում է պաշտպանություն և սոցիալական վերաինտեգրման պլաններ,
- «հատուկ պաշտպանության ծրագիր», որն ապահովում է վերաբնակեցում, ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ֆինանսական աջակցություն և (որպես ծայրահեղ միջոց) նոր իրավական ինքնություն:

գ) Արդարադատության հետ համագործակցող այն անձինք, ովքեր դատապարտվում են ազատազրկման, պարտավոր են կրել պատժի առնվազն մեկ քառորդ մասը, կամ եթե ցմահ են դատապարտված, ապա 10 տարի, եթե հնարավորություն կունենան համապատասխանելու պաշտպանության ծրագրի ընդունելիության չափանիշներին:

դ) Ընդունելության մասին որոշումներն ընդունվում են կենտրոնական հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ մտնում են.

- ներքին գործերի նախարարության պետքարտուղարի տեղակալը,
- երկու դատավոր կամ դատախազ,
- կազմակերպված հանցավորության բնագավառի հինգ փորձագետ:

ե) Ինքնության փոփոխությունները պետք է հաստատվեն Պաշտպանության կենտրոնական ծառայության կողմից, որը պատասխանատու է պաշտպանության միջոցների իրականացման և կիրարկման համար:

ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի 10-րդ լիագումար նստաշրջանում ընդունվել է «Մոդելային օրենք տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին»: Այդ օրենքը ներկայացված է հավելված 1-ում:

3.7. Ամփոփում

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հարկ է նշել, որ ներկայումս վկաների պաշտպանության լավագույն փորձը ձևավորվել է Միացյալ Նահանգներում, որի հիման վրա հետագայում այլ երկրներում էլ ներդրվել և հետագայում մեծ հաջողությամբ իրականացվել են վկաների և դատավարության այլ մասնակիցների պաշտպանության նմանատիպ պետական ծրագրեր:

Այսպիսի պետական ծրագրերի և օրենքների առկայությունը, ինչպես ցույց է տալիս առկա փորձը, նպաստում է կազմակերպված և ծանր հանցագործությունների կանխարգելմանն ու քրեական արդարադատության արդյունավետ իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունում վկաների պաշտպանության պետական ծրագրի մշակմանն ու ներդրման համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ նախապայմանները, քանի որ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրվել են պաշտպանության միջոցներ, իսկ այդ միջոցների ապահովման մեխանիզմի նախատեսման համար նախադրյալ է նաև ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի կողմից ընդունված «Մոդելային օրենքը տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին»¹³:

Ուսումնասիրված երկրների փորձը կարևոր հիմք է Հայաստանի Հանրապետությունում վկաների պաշտպանության համալիր ծրագրի ներդնելու համար: Այսպիսով, այն պահից, երբ որոշում կայացվի վկաների պաշտպանության ծրագրի անհրաժեշտության վերաբերյալ, քաղաքականություն մշակողները պետք է որոշեն, թե ինչ տեղ պետք է զբաղեցնի ծրագիրը գործադիր կամ դատական իշխանության ընդլայնված կառուցվածքում: Այս որոշման հետ են կապված նաև ֆինանսավորման աղբյուրի և ծրագրի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման հարցերը:

Հարկ է որոշել՝ ծրագիրը պետք է տեղակայված լինի ոստիկանության համակարգում, թե՞ դրանից դուրս: Որոշ երկրներում ոստիկանական ուժերը ծրագրի համար բնական միջավայր են, քանի որ վկաների պաշտպանությունը դատարանից դուրս հիմնականում համարվում է ոստիկանական գործառույթ:

Սակայն հետխորհրդային տարածքի երկրների պարագայում վկաների պաշտպանության տարանջատումը հետաքննությունից չափազանց կարևոր է անաչառության ապահովման համար և նվազեցնում է նաև վկայի նկատմամբ գործադրվող հնարավոր ճնշումները¹⁴:

Վկաների պաշտպանությունը հիմնականում ոստիկանության գործառույթն է հետևյալ երկրներում՝ Ավստրալիա, Ավստրիա, Կանադա, Չինաստան-Հոնկոնգի հատուկ վարչական

¹³ Այս կապակցությամբ տե՛ս Հավելված 1՝ ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի կողմից ընդունված «Մոդելային օրենքը տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին»:

¹⁴ *Տե՛ս նույն տեղում*:

տարածք, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Սլովակիա և Միացյալ Թագավորություն, որտեղ ծրագրերը ներդրված են ուստիկանական ուժերում: Ծրագրերի կառավարման պատասխանատվությունը (ընդունելիության որոշումները, ֆինանսավորումը, հավաքագրումը և այլ հարցեր) դրված է ուստիկանական ուժերի գլխավոր գործադիր մարմնի վրա, որն ի պաշտոնե օժտված է նման լիազորություններով: Վկաների պաշտպանության գործակալությունների գոյակցությունը ուստիկանության հետ կարող է հանգեցնել բարդ հարաբերությունների, քանի որ ուստիկանները բնույթով հետաքրքրասեր են, ինչը կարող է վնասել տեղեկությունների անվտանգությունը¹⁵:

Այն դեպքերում, երբ ծրագրերն ընդգրկված են ուստիկանական ուժերի ներսում, չափազանց կարևոր է ծրագրի իրականացման համար պատասխանատու քողարկված բաժնի մեկուսացումն ու ինքնավարությունը (կազմակերպական, վարչական և գործառնական) մնացած ուստիկանական ուժերից:

Կոլումբիայում, Հոլանդիայում, Ֆիլիպիններում, Հարավային Աֆրիկայում և Միացյալ Նահանգներում ծրագրերը կազմակերպական առումով տարանջատված են ուստիկանական ուժերից և արդարադատության նախարարության, ներքին գործերի նախարարության կամ դատախազության ենթակայության տակ են:

Ի վերջո, երկրների երրորդ խմբում, որը ներառում է նաև Իտալիան, ծրագիրն իրականացվում է միջգերատեսչական մարմնի կողմից, որում ներգրավված են իրավապահ, դատախազական և դատական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև՝ կառավարության պաշտոնյաներ: Այդ մարմինն ընդունում է այնպիսի որոշումներ, ինչպիսիք են վկաների ներգրավումը ծրագրում և պաշտպանության դադարեցումը: Այն նաև վերահսկում է ծրագրի իրականացման ընթացքը և ֆինանսական հարցեր ներկայացնում կառավարությանը:

Ուստիկանական ուժերի ներսում կամ դրանցից դուրս ծրագրի տեղակայման հարցը թվում է՝ կորցնում է կարևորությունը, եթե հաշվի է առնվում այն փաստը, որ երեք խմբերն էլ ներառում են վկաների պաշտպանության ծրագրերի հաջողված ու երկարատև փորձ ունեցող երկրներ: Վկաների պաշտպանության ծրագրերի հաջողության համար, բացի ծրագրի տեղակայման կառույցից, կենսական կարևորություն ունեն նաև հետևյալ հանգամանքները.

- ա) տարանջատում հետաքննությունից,
- բ) ընթացակարգի և գործողությունների գաղտնիություն,
- գ) կառույցի ինքնավարություն ուստիկանությունից:

Նախքան վկաների պաշտպանության ծրագրի մշակումն անհրաժեշտ է նաև մանրամասն ուսումնասիրել այն ազգային առանձնահատկությունները, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել վկաների պետական պաշտպանության ծրագրի արդյունավետ իրականացումը:

¹⁵ Քրեական, մասնավորապես՝ կազմակերպված հանցագործությունների դատավարության մասնակից վկաների պաշտպանության լավագույն փորձը: ՄԱԿ-ի Թմրամիջոցների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակ: Նյու Յորք, 2008:

4. Վկաների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում¹⁶

4.1. Վկայի ինքնավար հասկացողությունը (կարգավիճակը), դերն ու նշանակությունը արդար դատաքննության իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի

Հարկ է նշել որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները համարվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի կիրառման մեկնաբանություն և կոնվենցիայի տեքստի շարունակություն, ուստի և ունեն նույն կարգավիճակը, ինչ կոնվենցիան:

Կոնվենցիայի նորմերը վերաբերելի և կիրառելի են դառնում անդամ 47 երկրի համար նախնառաջ այն պատճառով, որ դրանք, որպես այդ երկրների ստանձնած միջազգային պարտավորություն, մեկնաբանվում են ոչ թե այդ երկրների օրենսդրության համաձայն, այլ ինքնավար կերպով, իսկ դա նշանակում է, որ կոնվենցիայի տեքստում առկա հասկացություններն ունեն այն իմաստը, ինչ տրվում է ՄԻԵԴ-ի, ոչ թե անդամ երկրների դատարանների կամ օրենսդրի կողմից:

Ինքնավար մոտեցման էությունն այն է, որ կոնվենցիայում ամրագրված հասկացությունները գործում են այնպես, ինչպես դրանք մեկնաբանվում են միջազգայնորեն՝ ՄԻԵԴ-ի կողմից, և անդամ պետություններին իրավունք չի վերապահված խուսափելու իրենց միջազգային պարտավորությունների կատարումից՝ սեփական ազգային իմաստը կամ բովանդակությունը հաղորդելով նշված հասկացություններին, քանի որ այլ կերպ երաշխիքները կդադարեն իրական և արդյունավետ լինելուց¹⁷: Իսկ կոնվենցիայում օգտագործված տերմինների, օրինակ՝ «դատարան», «քրեական մեղադրանք», «քրեական պատիժ», «արդար», «ողջամիտ ժամկետ» և այլ հասկացությունների բովանդակության բացահայտման չափանիշն այն է, թե ինչպես է այն արժևորում ողջամիտ դիտորդը, որը ելակետային չափանիշ է Եվրոպական կոնվենցիայի համար:

Ինքնավար նշանակություն ունի նաև «վկա» հասկացությունը, որն օգտագործվում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետում: Այսպես.

«3. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող¹⁸ յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

¹⁶ Սույն գլխի հեղինակը՝ Արա Ղազարյանը, շնորհակալություն է հայտնում Դ. Մ. Խաչատրյանին աշխատանքի ընթացքում տված արժեքավոր խորհուրդների համար:

¹⁷ [Պետությունները] «պետք է իրենց ազգային օրենսդրությունը համապատասխանեցնեն միջազգային չափանիշներին՝ ինչպես դրանք մեկնաբանվում և կիրառվում են միջազգայնորեն: Անդամ պետություններին վերապահված չէ ինքնուրույն որոշելու, թե ինչպիսի ներգործություն պետք է ունենան միջազգային չափանիշները, նրանց տրված է սուկ «հայեցողական գնահատման» («margin of appreciation») սահմանափակ իրավունք»: *St u Douwe Korff* (professor of international law London Metropolitan University London (UK)), “International Standards in Criminal Procedure (with particular reference to the International Covenant on Civil and Political Rights and the European Convention on Human Rights and an overview of the requirements of the UN Convention against Torture)”, March, 2003, p. 10-11, <http://www.coehelp.org/course/view.php?id=11>.

¹⁸ Ելնելով ՄԻԵԴ-ի կողմից որդեգրված «քրեական մեղադրանքի» ինքնավար հասկացողությունից (այն է՝ մեղադրանք է համարվում պետական իրավասու մարմինների կողմից անձին պաշտոնապես տեղեկացնելը նրա կողմից հանցագործություն կատարած լինելու կասկածի առկայության վերաբերյալ, *տե՛ս* ի թիվս այլոց, «Դեվերն ընդդեմ Բելգիայի» գործով դատարանի 1980 թ. փետրվարի 27-ի վճիռը, կետ 46, դիմում թիվ 6903/75 (*Deweere v. Belgium*, 27 February 1980, application no. 6903/75, para 46), *տե՛ս* նաև՝ Мреп Хачатрян, Понятие «уголовного обвинения» согласно

...դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները...»:

Ինչպես բխում է ՄԻԵԴ-ի նախադեպերից, վկայի այդպիսին լինելը կամ չլինելը արժևորվում է մեղադրյալի տեսանկյունից, այսինքն՝ տվյալ անձի ցուցմունքները կարող են օգտագործվել մեղադրյալի դեմ, թե ոչ: Այստեղ ֆունկցիոնալ կարգավիճակի գերակայություն կա, և պատահական չէ, որ միջազգային փաստաթղթերը և, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Նախարարների կոմիտեի համապատասխան փաստաթղթերն օգտագործում են «վկայություն տվող անձինք» հասկացությունը (testifying persons): Այսպիսով, «վկա», հետևաբար և «ցուցմունք» հասկացություններն ունեն ինքնավար նշանակություն, և Հայաստանի Հանրապետությունը չի կարող հրաժարվել մեղադրյալի պաշտպանության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետում ամրագրված երաշխիքներն ապահովելուց՝ հրաժարվելով վկայող անձին պարզապես «վկա» անվանելուց:

«Դատարանը նշում է, որ ցուցմունք տվողներից միայն մեկն է, որ Նիդեռլանդների օրենսդրության համաձայն հանդիսացել է «վկա», մասնավորապես՝ նա, ում ցուցմունքներն ընթերցվել են դատաքննության ընթացքում: Այնուամենայնիվ, ելնելով ինքնավար մեկնաբանումից, որը պետք է տրվի սույն հասկացությանը, երկու ցուցմունքների հեղինակներն էլ պետք է դիտվեն որպես այդպիսիք՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի իմաստով, քանի որ երկուսի ցուցմունքներն էլ, անկախ այն հանգամանքից՝ ընթերցվել են դատարանում, թե ոչ, փաստացի ներկայացվել են դատարանին և հաշվի առնվել վերջինիս կողմից»¹⁹:

«...Չնայած պրն Դ-ն անձամբ ցուցմունք չի տվել ո՛չ առաջին աստյանի և ո՛չ էլ վերաքննիչ դատարանում, դատարանը հանդես է գալիս այն դիրքերից, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի իմաստով նա պետք է դիտվի որպես վկա. մի հասկացություն, որին պետք է տրվի ինքնավար մեկնաբանություն, քանի որ ազգային դատարանների կողմից հաշվի են առնվել այն ցուցմունքները, որոնք հրապարակվել են դատաքննության ժամանակ»²⁰:

Նույն դիրքորոշումը հաստատված է բոլոր այլ դեպքերում, երբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի իմաստով «վկա» են համարվել գործով վարույթ իրականացրած *նստիկանները, քննիչ-դատավորը, քողարկված նստիկանը և գործակալը, ինչպես նաև մեղադրյալի դեմ ցուցմունք տվող/տված մեղադրյալը, դատապարտյալը, փորձագետը, մասնագետը, վկան և տուժողը*: Սրանց նկատմամբ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի կիրառելիությունը նշվում է՝ ելնելով սրանց ցուցմունքները վիճարկելու հնարավորությունից: Նախադեպային իրավունքի մեկնաբանությամբ՝ «վկայի» ինքնավար հասկացությունը նշված անձանց վրա տարածվում է նաև այն դեպքերում, երբ անձը ցանկանում է իրացնել նույն կետով նախատեսված սեփական վկաներին հրավիրելու իրավունքը: Նույնը վերաբերում է նաև մեղադրյալի՝ ինքն իրեն իր գործով վկա հրավիրելու և

Европейской конвенции о защите прав и основных свобод человека», Ереван, 2003)՝ «մեղադրյալ» հասկացության տակ Կոնվենցիայի նշված նորմում և սույն հետազոտության շրջանակներում նկատի է առնվում նաև կասկածյալը:

¹⁹ *St' u «Վստովսկին ընդդեմ Նիդեռլանդների»* գործով ՄԻԵԴ-ի մեծ պալատի 1989 թ. նոյեմբերի 20-ի վճիռը, Շարք Ա, թիվ 166, դիմում թիվ 11454/85, կետ 40 (*Kostovski v. the Netherlands*, judgment of 20 November 1989, Series A no. 166, application no. 11454/85, para 40):

²⁰ *St' u «Իսգրան ընդդեմ Իտալիայի»* գործով դատարանի 1991 թ. փետրվարի 19-ի վճիռը, Շարք Ա, թիվ 194-Ա, կետ 33, դիմում թիվ 11339/85 (*Isgrò v. Italy* judgment of 19 February 1991, Series A no 194-A, application no. 11339/85, para 33):

նույն (առաջին հերթին՝ արժանահավատության նույն կանխավարկածի) պայմաններում հարցաքննվելու իրավունքին, որի մասին կխոսվի ստորև:

Այս առումով, ելնելով վերոշարադրյալից, փոփոխման կարիք ունի օրենսգրքի հետևյալ դրույթը.

«Հոդված 86. Վկան

Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք»:

4.2. Մեղադրյալի և վկաների իրավունքները՝ որպես մրցակցող լեզվատիր շահեր

Սակայն մեղադրյալի՝ կոնվենցիայով ամրագրված իրավունքը բացարձակ չէ: Ի թիվս այլ լեզվատիր շահերի, որոնցով ժողովրդավարական հասարակությունում սահմանափակվում է մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տվող վկաներին հարցաքննելու պահանջը, ՄԻԵԴ-ը նշում է նաև վկաների անվտանգությունն ու նրանց կենսական շահերը: Նախ նշենք՝ քանի որ «վկան» ինքնավար հասկացություն է, այդպես ընկալվում է նաև պաշտպանության ապահովման սուբյեկտների շրջանակի առումով, այսինքն՝ իրականում *վկաների* պաշտպանության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ *վկայող* անձանց պաշտպանությունը: Եվ այսպես, ՄԻԵԴ-ը վկաների պաշտպանությունը համարում է լեզվատիր շահ, որը մրցակցում է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի հետ, և վերջինիս իրավաչափ սահմանափակումը՝ ելնելով վկաների շահերից, ՄԻԵԴ-ը չի համարում մեղադրյալի՝ 6-րդ հոդվածով ունեցած իրավունքի խախտում.

«Համապատասխան ապացույցների բացահայտման իրավունքը, սակայն, բացարձակ չէ: Ցանկացած քրեական գործով վարույթի ընթացքում կարող են լինել մրցակցող շահեր, ինչպես, օրինակ՝ ազգային անվտանգությունը կամ վկաներին վրեժխնդրության վտանգից պաշտպանելը, կամ էլ հանցագործությունների քննության ուստիկանական հատուկ մեթոդների գաղտնիության պահպանումը, որոնք պետք է դրվեն կշեռքի նժարներին՝ մեղադրյալի իրավունքների դեմ: Որոշ գործերով կարող է անհրաժեշտ լինել առանձին ապացույցները պաշտպանական կողմին չբացահայտելը՝ մեկ այլ անձի հիմնարար իրավունքն ապահովելու կամ կարևոր հանրային շահը երաշխավորելու նպատակով: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին մասով թույլատրելի են պաշտպանական կողմի իրավունքների միայն այնպիսի սահմանափակումները, որոնք խիստ անհրաժեշտ են»²¹:

«Ճիշտ է, 6-րդ հոդվածը հատուկ չի նշում, որ պետք է հաշվի առնվեն վկաների շահերը: Այնուամենայնիվ, խաղաղությանին կարող է դրված լինել անձի կյանքը, առողջությունը կամ անվտանգությունը, ինչպես նաև՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածի տիրույթում առաջ եկող շահերը: Սկզբունքորեն, վկաների և տուժողների այդպիսի շահերը պաշտպանված են կոնվենցիայի մյուս՝ նյութաիրավական երաշխիքներ տրամադրող դրույթներում, որոնք ենթադրում են, որ անդամ պետություններն իրենց քրեական դատավարությունը պետք է կազմակերպեն այնպես, որ այդ իրավունքները

²¹ *Տե՛ս «Ձապիերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործով մեծ պալատի 2000 թ. փետրվարի 16-ի վճիռը, թիվ 27052/95, կետ 52, (*Jasper v. the United Kingdom* [GC], no. 27052/95, § 36, 16 February 2000).

չենթարկվեն չարդարացված վտանգի: Այս համատեքստում արդար դատաքննության սկզբունքները ենթադրում են, որ համապատասխան դեպքերում պաշտպանական կողմի շահերը հավասարակշռված են վկայություն տալու համար հրավիրված վկաների կամ տուժողների շահերի հետ»²²:

Վկաների պաշտպանությունը, սակայն, չի կարող լինել այն աստիճան, որ թե՛ նախաքննության և թե՛ դատաքննության ընթացքում մեղադրյալի կողմից հարցաքննության չենթարկված վկաների ցուցմունքները վճռորոշ դեր խաղան դատապարտման համար: Այս առնչությամբ կարևոր է նշել այն, թե ինչ երաշխիքներ պետք է տրվեն պաշտպանական կողմին, այսինքն՝ ինչը կհամարվի *հարցաքննություն*, որը կբավարարի կոնվենցիայի պահանջները, և սրա մասին կխոսվի 4.3-րդ կետում: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է նշել, որ «*Կոստովսկին ընդդեմ Նիդերլանդների*» գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը.

«44. ...Չնայած կազմակերպված հանցավորության աճը, անկասկած, պահանջում է համարժեք միջոցների ներդրում, կառավարության փաստարկները, դատարանի կարծիքով, բավարար չափով նշանակություն չեն տալիս նրան, ինչը դիմողի խորհրդատուն բնորոշեց որպես «քաղաքակիրթ հասարակության յուրաքանչյուր անդամի շահը՝ վերահսկելի և արդարացի դատական վարույթի գոյության հարցում»: Արդարադատության իրականացման իրավունքը այնպիսի նշանավոր տեղ է զբաղեցնում ժողովրդավարական հասարակությունում²³, որ այն չի կարող գոհաբերվել արագությանը: Կոնվենցիան չի բացառում քրեական վարույթի նախաքննական փուլում այնպիսի աղբյուրների վրա հենվելը, ինչպիսիք են անանուն իրազեկիչները: Այնուամենայնիվ, անանուն ցուցմունքները՝ որպես հետագայում անձին դատապարտելու համար բավարար ապացույց օգտագործելը, ինչը տեղի է ունեցել սույն գործով, այլ հարց է: Այն ներառել է պաշտպանական կողմի իրավունքների այնպիսի սահմանափակումներ, որոնք անհաշտ հակասության մեջ են 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հետ: Փաստորեն, կառավարությունն ընդունեց, որ դիմողի դատապարտումը «վճռորոշ չափով» հիմնված է եղել անանուն ցուցմունքների վրա:

45. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ տվյալ գործի հանգամանքներից ելնելով՝ պաշտպանական կողմի իրավունքների վրա ներգործող սահմանափակումներն այնպիսին են եղել, որ չի կարելի ասել, թե պրն Կոստովսկու նկատմամբ իրականացվել է արդար դատաքննություն: Համապատասխանաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցված»:

Նույն մարմնի՝ անդամ երկրներին ուղղված «Վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանության մասին» թիվ 2005 (9) հանձնարարականի համաձայն.

16. Դատավարական կանոնները, որոնք միտված են վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանությանը, պետք է երաշխավորեն, որ պահպանվում է ժողովրդավարական հասարակությանն անհրաժեշտ

²² *Տե՛ս «Դոորսոն ընդդեմ Նիդերլանդների»* գործով 1996 թ. մարտի 26-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու, 1996-II, էջ 473, կետ 70 (the *Doorson v. the Netherlands* judgment of 26 March 1996, Reports of Judgments and Decisions 1996-II, p. 473, § 70):

²³ *Տե՛ս «Դոորսոն ընդդեմ Նիդերլանդների»* գործով 1996 թ. մարտի 26-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու, 1996-II, կետ 70 (the *Doorson v. the Netherlands* judgment of 26 March 1996, Reports of Judgments and Decisions 1996-II, p. 473, § 70):

հավասարակշռությունը հանցագործության կանխման և տուժածների, վկաների արդար դատաքննության իրավունքը ապահովելու միջև:

21. Երբ անանունությունը երաշխավորվում է, մեղադրանքը չպետք է հիմնված լինի միայն, որոշիչ չափով, անանուն վկաների տված ցուցմունքների վրա:

Վերջապես, անհրաժեշտ է նկատի ունենալ 1997 թ. սեպտեմբերի 10-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված թիվ R (97) 13 հանձնարարականը, որը վերաբերում է վկաներին հարկադրանքի ենթարկելուն և պաշտպանական կողմի իրավունքներին, և որում առաջարկվում է, որ անդամ պետությունները պետք է դատարանում օգտագործեն «դատական մարմնի առջև տրված նախաքննական ցուցմունքները՝ որպես ապացույց, եթե վկաների դատարան ներկայանալն անհնար է, կամ եթե նրանց դատարանում ներկայանալը կարող է մեծ և իրական վտանգ ստեղծել վկաների, նրանց հարազատների կամ նրանց մերձավոր անձանց կյանքի և անվտանգության համար»:

Չնայած այս հանձնարարականներն ինքնին պարտադիր իրավաբանական ուժ չունեն, սակայն ՄԻԵԴ-ը հենվում է դրանց վրա և դարձնում դրանք իր նախադեպային իրավունքի մի մասը, մասնավորապես²⁴ անդամ երկրներին ուղղված նույն մարմնի թիվ 2005 (9) «Վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանության մասին» հանձնարարականը, որը նախևառաջ, հստակ հետևելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, նշում է.

- «Վկա» տերմինը նշանակում է յուրաքանչյուր ոք, ով տիրապետում քրեական վարույթի մասին տեղեկության, որի մասին նա տվել է կամ ի վիճակի է տալու վկայություն (անկախ իր կարգավիճակից և վկայության ուղղակի կամ անուղղակի, բանավոր կամ գրավոր ձևից, ազգային օրենսդրությանը համապատասխան), որը ներառված չէ «արդարադատության հետ համագործակցողների» սահմանման մեջ:

Այնուհետև հանձնարարականն առաջարկում է հետևյալ մեխանիզմները, որոնք լիովին բխում են ՄԻԵԴ-ի կայուն հաստատված նախադեպային իրավունքից. կետ 17.

1. Մինչ երաշխավորելը, որ կողմերն ունեն հավասար հնարավորություն վիճարկելու վկայի կամ արդարադատության հետ համագործակցողի տված ցուցմունքը, հետևյալ միջոցները՝ միտված վկայի անձի ինքնությունը պարզելը կանխելուն, կարող են, *ի թիվս այլոց*, հաշվի առնվել՝

- վկաների/արդարադատության հետ համագործակցողների արած հայտարարությունների տեսալսողական ձայնագրումը դատավարության նախնական փուլում:

2. Դատավարության նախնական փուլում արված հայտարարությունները որպես ապացույց օգտագործել դատարանում, երբ հնարավոր է, որ վկաները ներկայանան դատարան, կամ երբ դատարան ներկայանալը վկայի/արդարադատության հետ համագործակցողների կամ նրանց մտերիմ անձանց համար կարող է մեծ և իրական վտանգ ներկայացնել: Մինչդատական հայտարարությունները կարող են դիտվել որպես հիմնավոր ապացույցներ, եթե կողմերը ունեն կամ ունեցել են հարցաքննությանը մասնակցելու և վկային հարցաքննելու և/կամ խաչաձև

²⁴ *Sté u «Լյուկան ընդդեմ Իտալիայի»* գործով դատարանի 2001 թ. փետրվարի 27-ի վճիռը, թիվ 33354/96, կետ 35, ՄԻԵԴ, 2001, հ-II (*Lucà v. Italy* no. 33354/96, § 35, ECHR 2001-II):

հարցաքննելու հնարավորություն և քննարկել են հայտարարության բովանդակությունը դատավարության ընթացքում:

3. Տեղեկատվության բացահայտումը, որը հնարավորություն է տալիս պարզելու վկայի ինքնությունը դատավարության ամենավերջին հնարավոր փուլում և/կամ հրապարակելու միայն ընտրված մանրամասներ:

4. Լրատվության և/կամ հանրության ներկայության բացառումը կամ սահմանափակումը դատավարության ամբողջ ընթացքից կամ դրա մի մասից:

5. Վկաների և արդարադատության հետ համագործակցողների ֆիզիկական ինքնությունը պարզելը կանխող սարքերի օգտագործումը, ինչպիսիք են էկրանների և վարագույրների օգտագործումը, վկայի դեմքը փոխելը կամ նրա ձայնն աղավաղելը:

6. Տեսակապի օգտագործումը:

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ վկաներ են համարվում այն անձինք, որոնց կողմից մինչդատական վարույթում կամ դատարանում ներկայացվածը կարող է դրվել դատավճռի հիմքում:

4.3. Վկայի պաշտպանության ապահովումը ՀՀ ներպետական օրենսդրության մեջ. առկա հնարավորություններն ու խնդիրները օրենսդրության մեջ և պրակտիկայում

Ուլքեր են օգտվում պաշտպանությունից

Վկաների պաշտպանության խնդիրները կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 12-րդ գլխով («Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը»):

«Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»²⁵:

Ինչպես տեսնում ենք, հողվածի վերնագրի («Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը») և առաջին մասի բովանդակության միջև որոշ անհամապատասխանություն կա, քանի որ վերնագրում ասված է ընդհանրապես դատավարությանը մասնակցող անձանց մասին, իսկ առաջին մասում խոսվում է միայն այն մասնակիցների մասին, ովքեր կարող են հաղորդել նշված տեղեկությունները: Այսինքն՝ հենց այս նորմն է, որը սահմանում է պետական պաշտպանության իրավունք ունեցող վկայություն տվող անձանց շրջանակը:

«Ընտանիքի անդամ» և «մերձավոր ազգական» հասկացությունները տրված են քաղաքացիական իրավունքի համապատասխան օրենսդրությամբ, իսկ ինչ վերաբերում է *մերձավորին*, ապա այդպիսին է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով

²⁵ ՔԴՕ հոդվ. 98, մաս 1:

քրեական դատավարությանը մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացնում քրեական վարույթն իրականացնող մարմին²⁶:

Ո՞վ և ինչպե՞ս է տալիս պաշտպանության կարիք ունեցողի կարգավիճակը, և ո՞վ է պատասխանատու դրա համար

Պաշտպանության կարիքի գնահատումը կատարում է վարույթ իրականացնող մարմինը, այսինքն՝ այն մարմինը, որի վարույթում է գտնվում քրեական գործը վարույթի տվյալ փուլում (քրեական գործի նախապատրաստումից սկսած մինչև դատական ակտը ուժի մեջ մտնելը): Այդ մարմինը հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման: Նույն այդ մարմինն իրականացնում է քրեական դատավարությանը մասնակցող անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի պաշտպանությունը²⁷:

Պաշտպանության կարիքի առկայության գնահատման օբյեկտիվ չափանիշները

Ինչպես տեսանք Եվրոպական դատարանի վերը մեջբերված որոշումներից, վկայի պաշտպանության համար պետության կողմից որոշակի գործողություններ ձեռնարկելու կամ այլ կերպ ասած՝ անվտանգությունն ապահովելու պարտականությունը պայմանավորված է վկային սպառնացող վտանգի իրական բնույթով: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանն օգտագործում է *վտանգի տակ գտնվող վկա* կամ *վտանգված վկա (endangered witness)* հասկացությունը, ընդ որում այդ վտանգի առկայությունը կամ ռեալությունը գնահատելու և ըստ այդմ էլ մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը սահմանափակելու համար բավականին մեծ հայեցողություն է ընձեռում անդամ պետությունների վարույթն իրականացնող մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին:

Վտանգի առկայությունը գնահատելու համար առաջին հերթին հաշվի է առնվում մեղադրյալի վարքագիծը տվյալ վկայի նկատմամբ: Եթե նա սպառնացել է վկային կամ նրա մերձավորներին, և վկան չի ներկայացել, ապա պետությունը չի կարող պատասխանատու համարվել մեղադրյալին այդ վկային հարցաքննելու հնարավորությունից զրկելու համար, քանի որ այդ իրավունքից իրեն զրկել է ինքը՝ մեղադրյալը:

Վկայի վտանգի տակ լինելու փաստի համար բավարար են ոչ միայն մեղադրյալի կողմից տվյալ վկայի հասցեին հնչեցրած սպառնալիքները, այլև առհասարակ գործի հանգամանքներից բխող օբյեկտիվ վիճակը, կրկնենք՝ անկախ տվյալ երկու անձանց, այսինքն՝ վկայի և մեղադրյալի միջև առկա հարաբերություններից: Այսպես, գործերից մեկում ՄԻԵԴ-ը համաձայնեց Հոլանդիայի ազգային դատարանների հետ, որոնք թույլ էին տվել, որ չգաղտնագերծվի վկայի ինքնությունը, այսինքն՝ վկան ժամանակում, որպես հիմք ընդունելով, մասնավորապես, որ մեղադրյալն ու վկան հանդիսանում են թմրամիջոցներ իրացնող և թմրամոլ (վկայի խոցելի վիճակը հիմնավորելու համար), ինչպես նաև հետևյալ պատճառները:

«Մույն գործի հանգամանքներում, որոնք ներառում են այն փաստը, որ դիմողը ողջամտորեն կասկածվել է (և այնուհետև՝ դատապարտվել) այնպիսի հանցավոր

²⁶ ՔԴՕ հոդվ. 98, մաս 1:

²⁷ ՔԴՕ հոդվ. 98, մաս 2-3:

խմբավորման անդամ լինելու մեջ, որը զբաղվել է թմրամիջոցների և զենքի հետ կապված առանձնապես վտանգավոր հանցագործություններ կատարելով, ինչպես նաև՝ այն փաստը, որ դիմողը ձերբակալման պահին զինված է եղել լիցքավորված ատրճանակով, դատարանը համարում է, որ ողջամտորեն կարելի էր սպասել, որ դիմողը վտանգավոր համարվի այն անձանց կողմից, որոնք տեղյակ են նրա գործերին: Հետևաբար, չի կարելի ասել, որ Նիդեռլանդների դատարանները գործել են ոչ ողջամտորեն նրան որևէ լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելը մերժելիս կամ գործել են կամայականորեն: Հետևաբար, գործում եղել են իրազեկիչի ինքնությունը գաղտնի պահելու բավարար հիմքեր»²⁸:

Վտանգի ռեալությունը գնահատելիս հաշվի է առնվում նաև երևույթն ընդհանրապես, տվյալ դեպքում՝ Ամստերդամում ինչպիսի կախվածության մեջ են թմրամուլները թմրամիջոց իրացնողներից, եղել են արդյոք նախկինում ցուցմունք տալու համար թմրամուլների նկատմամբ իրացնողների կողմից բռնություն գործադրելու դեպքեր և այլն:

Նույնպիսի մոտեցում ունի նաև անդամ երկրներին ուղղված նույն մարմնի թիվ 2005 (9) «Վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանության մասին» հանձնարարականը, որը, հետևելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, վտանգի առկայությունը պայմանավորում է ոչ միայն իրականացված, այլև իրականացվելիք, ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի սպառնալիքով:

«Վախեցնել» նշանակում է ցանկացած ուղղակի կամ անուղղակի իրականացրած կամ իրականացվելիք սպառնալիք վկայի կամ արդարադատության հետ համագործակցողի նկատմամբ, որը կարող է հանգեցնել չափազանց մեծ միջամտությունից ազատ վկայություն տալու նրա ցանկության միջամտությանը կամ որը նրա վկայության հետևանքն է»:

Պաշտպանության մասին դիմումների քննարկման և վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների և անգործության բողոքարկման կարգը

Պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը²⁹:

Վարույթ իրականացնող մարմնին պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմում կարող է ներկայացնել նաև ձերբակալվածներին պահելու վայրի, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ղեկավարը՝ համապատասխանաբար ձերբակալված, կալանավորված կամ ազատագրկման ձևով պատիժը կրող անձի պաշտպանության համար: Նշված հիմնարկների ղեկավարները վարույթն իրականացնող մարմին կարող են դիմել ինչպես ձերբակալվածների, կալանավորների կամ իրենց մոտ գտնվող դատապարտյալների դիմումների հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ³⁰:

Եթե պաշտպանվող անձի դիմումի վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել մերժել այն, ապա դիմում ներկայացրած անձն իրավունք ունի որոշման

²⁸ *Sté u' «Կոկն ընդդեմ Նիդեռլանդների»* գործով որոշումը, թիվ 43149/98, ՄԻԵԴ, 2000, հ-VI, Իրավունքը՝ կետ 1 (*Kok v. the Netherlands* (dec.), no. 43149/98, ECHR 2000-VI, the Law, para 1):

²⁹ ՔԴՕ հոդվ. 98, մաս 4:

³⁰ ՔԴՕ հոդվ. 98, մաս 7:

պատճենն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում բողոքարկելու այն օրենսգրքով սահմանված կարգով³¹:

Այսինքն՝ գործը դատարան ուղարկվելուց հետո մերժումը ենթակա է բողոքարկման վերադաս դատարան: Իսկ մինչդատական վարույթում, համաձայն օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշումը պետք է նախ բողոքարկվի դատախազին, այնուհետև՝ դատարան, որը համապատասխան բողոքը քննում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կարգով:

Իսկ եթե քննիչը կամ հետաքննության մարմինն ընդհանրապես որևէ պատասխան չի տալիս դիմումին, ապա այն՝ որպես անգործություն, պետք է բողոքարկվի անմիջապես դատարան, ինչը բխում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 2009 թ. դեկտեմբերի 7-ին կայացված թիվ ՄԴՈ 844 որոշումից, որով Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց օրենսգրքի վկայակոչված նորմը անգործության մասով, նշելով, որ քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից գործողություն չկատարելու դեմ սկզբում դատախազին բողոքելու պայմանը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը³²:

Դիմումը մերժվելու դեպքում պաշտպանվող անձը կարող է նորից դիմել այդպիսի միջոցներ ձեռնարկելու մասին ինչպես դիմումը մերժած, այնպես էլ վարույթ իրականացնող այլ մարմին (այսինքն՝ հետագա փուլերում), եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ³³:

Վկայի պաշտպանության ՀՀ դատավարական օրենսդրությամբ սահմանված միջոցները

Վկայի պաշտպանության միջոցները կարելի է դիտարկել նեղ և լայն իմաստով: Նեղ իմաստով դրանք կներառեն պաշտպանության այն միջոցները, որոնք նախատեսված են քրեադատավարական օրենսդրությամբ, իսկ ավելի լայն իմաստով այդ միջոցները ներառում են քրեական օրենսգրքով նախատեսված որոշակի միջոցները: Մրանց թվում են համագործակցող վկաների նկատմամբ քրեական պատասխանատվության ավելի մեղմ միջոցներ կիրառելը կամ ընդհանրապես ազատելը (ինչպես, օրինակ՝ հայտարարություն տվող կաշառատուին, ապօրինի զենքը կամովին հանձնող անձին քրեական պատասխանատվությունից անձեռնմխելիությամբ օժտելը), քրեական պատասխանատվության առկայությունը վկաների նկատմամբ ճնշում գործադրելու և նրանց նկատմամբ հարկադրանք գործադրելու համար, հանցավորին խիստ պատժի դատապարտելը և այլն:

Պաշտպանության միջոցներն են՝

- 1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում,
- 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը,
- 3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը,

³¹ ՔԴՕ հոդվ. 98, մաս 5:

³² Որոշման տեքստն ամբողջությամբ տե՛ս՝ http://www.concourt.am/armenian/decisions/_common/2009/pdf/sdv-844.pdf:

³³ ՔԴՕ հոդվ. 98, մաս 6:

- 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը,
- 5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը,
- 6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,
- 7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կրացառի նրանց կողմից պաշտպանվող անձի նկատմամբ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը,
- 8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը,
- 9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը.
- 10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը,
- 11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը,
- 12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ:

Պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում³⁴:

Ներկայացված ցանկից առավել խնդրահարույց են, մեր կարծիքով, չորսը՝ 2-րդը, 9-րդը, 12-րդը, 7-րդը:

Այս միջոցների առավել խորն ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց իրագործումն առաջացնում է տեսական և պրակտիկ բնույթի որոշ դատավարական հիմնախնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն քրեական գործի թե՛ մինչդատական և թե՛ դատական վարույթի ընթացքում: Մասնավորապես, առանձնացված չորս միջոցներից առաջին երեքը կարևոր են մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին առերես հարցաքննելու իրավունքի տեսանկյունից՝ երաշխավորված կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետով: Վերջին միջոցը կարող է խնդիրներ առաջացնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության տեսանկյունից, քանի որ, ըստ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետի, այդ իրավունքը սահմանափակելը, տվյալ դեպքում՝ անձի նկատմամբ խափանման միջոց կալանքն ընտրելը «հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»:

Պաշտպանության միջոցների մյուս տեսակները կա՛մ ակնհայտ տեխնիկական բնույթ ունեն, կա՛մ նվազ խնդիրներ են առաջացնում իրավակիրառ պրակտիկայում³⁵:

³⁴ ՔԴՕ հոդվ. 98, պրիմ. 1:

Վկայի պաշտպանության միջոցներ՝ կապված մեղադրյալի կողմից իր դեմ ցուցմունք տված անձանց առերես հարցաքննելու իրավունքի սահմանափակման հետ

2) Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը

Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում անձի մասին տեղեկությունների սահմանափակումով քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

Տեղեկությունները սահմանափակելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը և դրան առնչվող նյութերն առանձնացվում են քրեական գործի մյուս նյութերից և պահվում վարույթն իրականացնող մարմնում:

Հիմնական վարույթից առանձնացված որոշմանը և դրան առնչվող նյութերին ծանոթանալը մատչելի է միայն դատարանին և քրեական հետապնդումն իրականացնող մարմնին, իսկ դատավարության մյուս մասնակիցները դրան կարող են ծանոթանալ միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, եթե դա անհրաժեշտ է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությունն իրականացնելու կամ քրեական գործի քննության համար էական նշանակություն ունեցող որևէ հանգամանք պարզելու համար:

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ տրամադրելու վրա ժամանակավոր արգելք դնելով³⁶:

9) Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը

1. Անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև կարող է փոխվել նրա արտաքինը:

2. Փաստաթղթերի փոխարինումը, արտաքինը փոխելը, այդ թվում՝ պլաստիկ վիրահատությունը, իրականացվում են պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով³⁷:

12) Դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման

1. Դատարանի կողմից պաշտպանվող անձի հարցաքննությունը՝ առանց նրա ինքնության մասին տվյալների հրապարակման, կարող է կատարվել կեղծանվան

³⁵ Այս նվազ տեսական ու գործնական խնդիրներ առաջացնող պաշտպանության միջոցների դատավարական կարգավորումը տե՛ս օրենսգրքի 98-րդ հոդվածի համապատասխան պրիմ հոդվածներում:

³⁶ ՔԴՕ հոդվ. 98 պրիմ 3:

³⁷ ՔԴՕ հոդվ. 98, պրիմ 10:

օգտագործմամբ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցչին հեռացնելուց հետո:

2. Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ:

3. Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների հստակ տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ, դատավարության սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ, գաղտնիության պահպանման մասին նախազգուշացումով:

4. Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքի գրավոր հաստատման առկայության դեպքում:

5. Անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրառումը³⁸:

Նշված նորմերը լիովին համապատասխանում են ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին: Ըստ էության, դրանք սահմանում են օբյեկտիվորեն վտանգի տակ գտնվող անձանց անանունության երաշխիքներ: Պետք է նշել նաև, որ դրանք միաժամանակ ապահովում են պաշտպանության կողմի իրավունքների իրականացման այնպիսի երաշխիքներ, որոնք բավարար են համարվում նաև ՄԻԵԴ-ի կողմից: Խոսքը նախևառաջ միջնորդավորված առերեսման մասին է, որը կարող է տեղի ունենալ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ժամանակ: Ընդհանուր կանոնը, որը ՄԻԵԴ-ի կողմից ձևակերպվել է այս կապակցությամբ, հետևյալն է.

«Սկզբունքորեն բոլոր ապացույցները պետք է ձեռք բերվեն մեղադրյալի ներկայությամբ հրապարակային դատաքննության ընթացքում՝ մրցակցային վիճարկման նպատակով: Սա չի նշանակում, սակայն, որ որպես ապացույց օգտագործվելու համար բոլոր վկաների ցուցմունքները միշտ պետք է տրված լինեն հրապարակային դատաքննության ժամանակ. նախնական քննության փուլում ստացված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) ենթակետին և 1-ին մասին, պայմանով, որ պահպանվեն պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն, այդ իրավունքները պահանջում են, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու իր դեմ հանդես եկող վկայի ցուցմունքը և հարցաքննելու նրան կա՛մ այն ժամանակ, երբ այդ վկան տալիս է ցուցմունքը, կա՛մ էլ հետագա փուլերում»³⁹:

³⁸ ՔԴՕ հոդվ. 98, պրիմ. 13:

³⁹ *St' u «Ղեկտան ընդդեմ Ֆրանսիայի»* գործով 1990 թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, Շարք Ա, թիվ 191-Ա, 15, կետ 36 (*the Delta v. France* judgment of 19 December 1990, Series A no. 191-A, para. 36):

Ինչպես տեսնում ենք, այս նախադեպային դիրքորոշումից բխում է վկաների պաշտպանության մի քանի երաշխիք:

- ☒ նախաքննական ցուցմունքների օգտագործման թույլատրելիությունը,
- ☒ նախաքննական և դատարանում տրված ցուցմունքներից որևէ մեկին մյուսի նկատմամբ նախապատվություն չտալը⁴⁰,
- ☒ նախաքննության ընթացքում (երբ այդ վկան տալիս է ցուցմունքը) առերեսման գործողությունը պետք է հետապնդի ոչ միայն քննչական գործողության, այն է՝ ապացույց ձեռք բերելու նպատակ, այլև՝ կոնվենցիայի քննարկվող իրավունքի, այն է՝ առերես հարցաքննության նպատակ, ինչից բխում է նախնատաջ ՀՀ պրակտիկայում դեռևս ոչ միանշանակ ընդունվող և դատավարական օրենքից բխող այն դրույթը, որ պաշտպանը իրավունք ունի հարցեր տալու վկային նախաքննական առերեսման ժամանակ⁴¹:
- ☒ պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումը պետք է հիմնավորված լինի, քանի որ բացառություն է նախատեսելու ընդհանուր կանոնից⁴²:

Հակիրճ ներկայացնենք մի քանի նախադեպային դիրքորոշումներ՝ կապված այն հարցի հետ, թե դատարանն ինչ նկատի ունի՝ ասելով «որպեսզի ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու իր դեմ հանդես եկող վկայի ցուցմունքը և հարցաքննելու նրան»:

Վկայի հարցաքննության ընթացքում որոշ հարցերի կանխուժն իրավաչափ է:

«Ինչ վերաբերում է դիմողի այն գանգատին, որ պաշտպանական կողմը զրկված է եղել առանձին հարցեր տալու իրավունքից, ապա դատարանը համարում է, որ իր իրավասության

⁴⁰ «... Դատարանը չի կարող վերացականորեն որոշել, որ պետք է մշտապես հենվել հրապարակային նիստում և երդման տակ տրված ցուցմունքի վրա՝ դրանց նախապատվություն տալով այդ նույն վկայի կողմից քրեական գործով վարույթի ընթացքում տրված այլ ցուցմունքների նկատմամբ, եթե անգամ այդ երկու ցուցմունքները հակասում են իրար: Դատարանը, հետևաբար, չի կարծում, որ վերաքննիչ դատարանի՝ վկա Ն-ի կողմից տրված ցուցմունքների մասով որոշումը՝ թե՛ առանձին վերցրած, թե՛ այլ խնդիրների հետ միասին, որոնց դեմ գանգատվում է դիմողը, հանգեցրել է դիմողի ոչ արդարացի դատաքննության»: *Տէսս* վերը հիշատակված Դոորսոնի գործը, կետ 78: «Վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանության մասին» անդամ երկրներին ուղղված նույն մարմնի թիվ 2005 (9) հանձնարարականի համաձայն:

Մինչ երաշխավորելը, որ կողմերը վկայի կամ արդարադատության հետ համագործակցողի տված ցուցմունքը վիճարկելու հավասար հնարավորություն ունեն, հետևյալ միջոցները՝ միտված վկայի անձի ինքնության բացահայտման կանխմանը, կարող են, *ի թիվս այլոց*, հաշվի առնվել՝ վկաների կամ արդարադատության հետ համագործակցողների արած հայտարարությունների տեսալսողական ձայնագրումը դատավարության նախնական փուլում, դատավարության նախնական փուլում արված հայտարարությունները որպես ապացույց օգտագործել դատարանում, երբ հնարավոր է, որ վկաները ներկայանան դատարան, կամ երբ դատարան ներկայանալը վկայի/ արդարադատության հետ համագործակցողների կամ նրանց մտերիմ անձանց համար կարող է մեծ և իրական վտանգ լինել: Մինչդատական հայտարարությունները կարող են դիտվել որպես հիմնավոր ապացույցներ, եթե կողմերը ունեն կամ ունեցել են հարցաքննությանը մասնակցելու և վկային հարցաքննելու և/կամ խաչաձև հարցաքննելու հնարավորություն և քննարկել են հայտարարության բովանդակությունը դատավարության ընթացքում:

⁴¹ «Դատարանը եզրակացնում է, որ կիրառված ընթացակարգը, որքան դա հնարավոր էր տվյալ հանգամանքներում, գրեթե հավասարեցվել է վկայի հարցաքննությանը հրապարակային դատական նիստում: Պաշտպանական կողմի իրավունքներն, այսպիսով, ապահովված են եղել բավարար չափով»: *Տէսս* վերը հիշատակված *Կոկի* գործը, Իրավունքը՝ կետ 1:

⁴² «Այնուամենայնիվ, պաշտպանական կողմի իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներն են թույլատրելի 6-րդ հոդվածով, որոնք խիստ անհրաժեշտ են: Ավելին, մեղադրյալի համար արդարացի դատաքննության ապահովումը երաշխավորելու նպատակով այն դժվարությունները, որոնց պայմաններում գործում է պաշտպանական կողմը, պետք է հակակշռվեն դատական մարմինների կողմից իրականացված հետագա վարույթի ընթացքում»: *Տէսս* «Պ.Մ.-ն ընդդեմ Գերմանիայի» գործով դատարանի 2001թ. դեկտեմբերի 20-ի վճիռը, թիվ 33900/96, կետ 23 (*P.S. v. Germany, judgment of 20 December, 2001, application no. 33900/96, para 23*):

տիրույթից դուրս է ազգային դատարանների կողմից ենթադրաբար թույլ տրված փաստի կամ իրավունքի սխալների վերանայումը: Իրերի բնույթն այնպիսին է, որ միայն ազգային դատարանը կարող է որոշում կայացնել այս կամ այն հարցի վերաբերելիության մասին կամ, ինչպես սույն գործով էր, այն հարցը կանխելու անհրաժեշտության մասին, որ պատասխան տրվելու դեպքում կարող է վնասել անանուն վկայի անվտանգությունը⁴³:

Դատապարտումը չի կարող անվերապահորեն հիմնվել չհարցաքննված վկայի ցուցմունքների վրա.

«...Ցուցմունքները եղել են դիմողի դատապարտման միակ հիմքը՝ լինելով նաև միակ հիմքը նրան դատի տալու ժամանակ: Մինչդեռ նա՝ նախնական քննության փուլում, և՛ դատաքննության ժամանակ դիմողը համապատասխան վկաներին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Որևէ առերեսման բացակայությունը նրան որոշ առումներով զրկել է արդարացի դատաքննության իրավունքից»⁴⁴:

«Համարժեք և պաշտպան» արտահայտությունը բովանդակում է նաև այն դրույթը, որ պաշտպանական կողմը ներառում է թե՛ մեղադրյալին և թե՛ նրա պաշտպանին, և ՄԻԵԴ-ը հստակ մեծ նշանակություն է տալիս այն հանգամանքին, թե արդյոք մեղադրյալի կողմից վտանգի տակ գտնվող վկային հարցաքննած չլինելու պարագայում պաշտպանն ունեցել է այդ իրավունքը, թե ոչ:

«... թե՛ դիմողը, թե՛ նրա պաշտպանը (ընդծումը մերն է. Ա.Ղ.) վկաներին հարցաքննելու համարժեք հնարավորություն չեն ունեցել, որոնց ցուցմունքները՝ տրված իրենց բացակայության պայմաններում և հետագայում արձանագրված մետրոյում հարձակմանն ականատես չեղած ոստիկանության ծառայողի կողմից, վճռորոշ չափով հաշվի են առնվել փաստի հարցերը քննող դատարանների կողմից թե՛ առաջին և թե՛ վերաքննիչ ատյանում, քանի որ գործի նյութերում որևէ այլ ապացույց չի եղել: Այդ իսկ պատճառով նրանք ի վիճակի չեն եղել ստուգելու վկաների ցուցմունքների արժանահավատությունն ու կասկածի տակ դնելու նրանց վստահելիությունը:

Փաստորեն պաշտպանական կողմի իրավունքները ենթարկվել են այնպիսի սահմանափակումների, որոնց հետևանքով պրն Դելտան զրկվել է արդար դատաքննությունից: Հետևաբար, գործում թույլ է տրվել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտում՝ 1-ին մասի հետ համակցված»⁴⁵:

Անգամ մի շատ բացառիկ գործով, որը վերաբերում էր երեխայի նկատմամբ սեռական ոտնձգությանը, ՄԻԵԴ-ը խախտում չի արձանագրել, չնայած մեղադրյալի կողմից վկան (տուժողը) չի հարցաքննվել և՛ նախաքննության, և՛ դատաքննության ժամանակ, և միակ հարցն այն էր, թե արդյոք «պաշտպանական կողմն» ընդհանրապես, այսինքն՝ նաև պաշտպանը զրկված է եղել վկային հարցաքննելու հնարավորությունից.

«49. [Պաշտպանը] համաձայնել էր (տուժողին քննիչի կողմից հարցաքննելու ընթացքում. - Ա.Ղ.) իր բացակայությանը, չնայած այն դժվարություններին, որ

⁴³ *Տե՛ս* վերը հիշատակված *Կոկի* գործը, «Իրավունքը», կետ 2:

⁴⁴ *Տե՛ս* «Սաիդին ընդդեմ Ֆրանսիայի» գործով դատարանի 1993 թ. սեպտեմբերի 20-ի վճիռը, Շարք Ա, թիվ 261-C, էջ 56, կետ 44 (*Saïdi v. France*, judgment of 20 September 1993, Series A no. 261-C, p. 56, § 44):

⁴⁵ *Տե՛ս* վերը հիշատակված *Դելտայի* գործը, կետ 37:

առաջացել են պաշտպանական կողմի համար դրա հետևանքով, ինչպես նաև ընդունել է այն տակտիկան, որով պետք է անցկացվեր հարցազրույցը: Դիմողի պաշտպանը հնարավորություն է ունեցել միջնորդելու հարցազրույցի օրը փոխելու մասին, երբ ինքն ազատ կլիներ ներկա գտնվելու համար: Այնուամենայնիվ, նա նախընտրել է չանել դա: Պաշտպանը հնարավորություն է ունեցել նաև միջնորդելու, որ երկրորդ հարցազրույցը տեսաձայնագրվի, ինչը նրան հնարավորություն կտար համոզվելու հարցազրույցը արդարացի կերպով անցկացված լինելու մեջ: Սակայն նա այդ հնարավորությունից նույնպես չի օգտվել:

50. Ավելին, կողմերի ներկայացրած փաստերից պարզ է դառնում, որ դիմողի պաշտպանը հարցեր առաջադրելու հնարավորություն է ունեցել, որպեսզի դրանք տրվեն հարցազրույցն անցկացնող ոստիկանության ծառայողի կողմից: Հետագայում, լսելով ձայնազրույցումը և կարդալով հարցազրույցի սղագրությունը, դիմողի պաշտպանը ակնհայտորեն բավարարված է եղել, որ ոստիկանության ծառայողին իր կողմից ներկայացված հարցերը տրվել են Մ-ին:

51. Հետևաբար, դիմողի՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետով երաշխավորված իրավունքների խախտում թույլ չի տրվել այն պատճառով, որ նրա պաշտպանը ներկա չի գտնվել ոստիկանության կողմից անցկացված երկրորդ հարցազրույցին»⁴⁶:

Այսպիսով, պաշտպանի կողմից վկային հարցաքննելը նույնպես կարևոր լեգիտիմ, այսինքն՝ արդար դատաքննության իրավունքին չհակասող երաշխիք կարող է դառնալ վտանգի տակ գտնվող վկաներին պաշտպանելու համար:

Միջնորդավորված առերեսում անցկացնելը, որը նույնպես նախատեսված է ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, կարևոր երաշխիք է վտանգի տակ գտնվող կամ վտանգված վկաներին պաշտպանելու համար: Այնուամենայնիվ, գործնական մակարդակում այս խնդրի լուծումը պահանջում է որոշ տեխնիկական միջոցների կիրառում, մասնավորապես՝ միակողմ հայելիներով սենյակների կառուցում, որոնք հագեցված լինեն համապատասխան ձայնա- և տեսակապով: Օրինակ՝ «անանուն» վկաների հետ կապված՝ անհրաժեշտ է տեղադրել այնպիսի սարքավորումներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու պաշտպանական կողմի հարցերի ներկայացումը վկային, որի պայմաններում հարցաքննողը (մեղադրյալը կամ կասկածյալը կամ պաշտպանը) և հարցաքննվողը չեն տեսնի միմյանց, և հարցերը կփոխանցվեն սկզբից քննիչին կամ դատավորին (կախված վարույթի փուլից), որից հետո վերջինս դրանք կհաղորդի հարցաքննվողին: Դրանից հետո, անջատված կապի պայմաններում, քննիչը կամ դատավորը կլսի պատասխանը և կորոշի՝ արդյոք վկան չի՞ հայտնվի վտանգի տակ, արդյոք նրա ինքնությունը չի՞ բացահայտվի: Եթե քննիչը կամ դատավորը, լսելով պատասխանը, համարի, որ այդ հարցն անթույլատրելի է, ապա այդ մասին կհայտնի պաշտպանական կողմին: Նաև քննիչը կամ դատավորը պետք է հարցը իր նախաձեռնությամբ հանելու իրավունք ունենա:

Մրցակցող շահերը հաշվի է առնում նաև դատարանը, երբ ազգային դատարանները թույլ չեն տալիս, որ որոշ հարցեր տրվեն մեղադրող վկային:

⁴⁶ *Sté u «U.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի»* գործով դատարանի 2002 թ. հուլիսի 2-ի վճիռը, թիվ 34209/96 (*S.N. v. Sweden*, judgment of 2 July, 2002, application no. 34209/96), «Մարդու իրավունքների եվրոպական բյուրոն», Երևան, թիվ 3, 2009, էջ 249-264:

Եթե վարույթն իրականացնող մարմինը գտնի, որ պատասխանն «անվտանգ է» վկայի համար, նա կխնդրի վկային կրկնել պատասխանը, որը կհնչի վկայի փոփոխված ձայնով: Նման սենյակների տեղակայումն անհրաժեշտ է նաև ճանաչման ներկայացնելու համար, երբ ճանաչվողը, ըստ էության, չի իմանա, որ իրեն ճանաչել է վկան կամ տուժողը: Վերջին հաշվով, սա կնպաստի նաև գործով ճշմարտության բացահայտմանը:

Ինչ վերաբերում է վերը նկարագրված տեխնիկական ընթացակարգին, ապա այն կիրառվել է, մասնավորապես, արդեն հիշատակված *Կոկի* գործով (Իրավունքը՝ կետ 2), և ՄԻԵԴ-ն ընդունել է այն որպես պատշաճ ընթացակարգ:

«Դատարանը նաև հաշվի է առնում գործն ըստ էության քննող դատարաններ չներկայացած վկաների ցուցմունքների վրա հիմնվելու հետ կապված իր մի շարք որոշումները, քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետը պահանջում է ապահովել նման վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորություն միայն այն իրավիճակներում, երբ այդ ցուցմունքը հիմնական կամ վճռորոշ դեր է խաղում դատապարտումը հիմնավորելիս»⁴⁷:

Այնուհետև դատարանը, քննարկելով նման ընթացակարգի իրավաչափության աստիճանը, նշում է (նույն կետում).

«Չնայած ճիշտ է, որ անանուն վկայի վախի ճշգրիտ պատճառները երբեք չեն ներկայացվել թե՛ պաշտպանական կողմին և թե՛ հանրությանը, վկայի մտահոգությունների լրջությունն ու հիմնավորվածությունը ուսումնասիրվել են քննիչ-դատավորի կողմից, որը չի հիմնվել բացառապես վկայի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, այլ հաշվի է առել նաև նախապատմության առթիվ ոստիկանական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Հետևաբար, այս հարցով քննիչ-դատավորի որոշումը հիմնված չէ բացառապես մեղսագրված արարքների ծանրության վրա: Ավելին, նրա որոշումը վերաքննվել է և ուժի մեջ թողնվել տարածքային դատարանի պալատի կողմից, որը բաղկացած էր երեք դատավորից»:

Գերագույն դատարանի որոշումից երևում է, որ անանուն վկան ոստիկանության ծառայող չի հանդիսացել, որի ինքնությունը գաղտնի է պահվել օպերատիվ նկատառումներով, այլ վկան եղել է մի անձ, որը պաշտպանության կարիք է ունեցել, և նրա ցուցմունքները հնարավոր չէր լինի ձեռք բերել, եթե չապահովվեր նրա համար բավարար մակարդակի պաշտպանություն:

«Մույն գործի հանգամանքներում, որոնք ներառում են այն փաստը, որ դիմողը ողջամտորեն կասկածվել է (և այնուհետև՝ դատապարտվել) այնպիսի հանցավոր խմբավորման անդամ լինելու մեջ, որը զբաղվել է թմրամիջոցների և զենքի հետ կապված առանձնապես վտանգավոր հանցագործություններ կատարելով, ինչպես նաև այն փաստը, որ դիմողը ձեռքակալման պահին զինված է եղել լիցքավորված ատրճանակով, դատարանը կարծում է, որ ողջամտորեն կարելի էր սպասել, որ

⁴⁷ *Sté u «Դելտան ընդդեմ Ֆրանսիայի»* գործով 1990 թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, Շարք Ա, թիվ 191-A, կետ 37, «*Աշն ընդդեմ Ավստրիայի»* գործով 1991 թ. ապրիլի 26-ի վճիռը, Շարք Ա, թիվ 203, կետ 28, «*Արտներն ընդդեմ Ավստրիայի»* գործով 1992 թ. օգոստոսի 28-ի վճիռը, Շարք Ա, թիվ 242-A, կետ 22-24 և «*Մաիդին ընդդեմ Ֆրանսիայի»* գործով 1993 թ. սեպտեմբերի 20-ի վճիռը, Շարք Ա, թիվ 261-C, կետ 44 (*the Delta v. France judgment of 19 December 1990, Series A no. 191-A, § 37; the Asch v. Austria judgment of 26 April 1991, Series A no. 203, § 28; the Artner v. Austria judgment of 28 August 1992, Series A no. 242-A, §§ 22-24; and the Saidi v. France judgment of 20 September 1993, Series A no. 261-C, § 44*), «Մարդու իրավունքների Եվրոպական բյուրոն», Երևան, թիվ 3, 2009, էջ 223-224:

դիմողը որպես վտանգ դիտվի այն անձանց կողմից, որոնք տեղյակ են նրա գործերին: Հետևաբար, չի կարելի ասել, որ Նիդեռլանդների դատարանները գործել են ոչ ողջամիտ նրան որևէ լրացուցիչ տեղեկություն տրամադրելը մերժելիս կամ գործել են կամայականորեն: Համապատասխանաբար՝ գործում եղել են իրազեկիչի ինքնությունը գաղտնի պահելու բավարար հիմքեր»⁴⁸:

Վկաների պաշտպանության դատավարական բնույթի որոշ երաշխիքներ կքննարկվեն նաև տուժողներին փոխհատուցում տրամադրելու հետ կապված կետում:

Վկայի պաշտպանության միջոցներ՝ կապված անձի ազատության և անձնական անձեռնմխելության իրավունքի սահմանափակման հետ

Քրեական վարույթն իրականացնող մարմինը, օրենքով սահմանված կարգով, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ընտրում է խափանման այնպիսի միջոց, որը կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Որոշման մասին տեղեկացվում է նաև պաշտպանվող անձը⁴⁹:

Այս հարցը սերտորեն կապված է այն հարցի հետ, որ իբրև վկայի անվտանգության երաշխիք պետք է դիտել նաև հանցավորի նկատմամբ ազատագրկման պատիժ նախատեսելը և պատժի խստությունը: Միաժամանակ անհրաժեշտ է հիշել, որ խափանման միջոցի կիրառման նշված նպատակը նաև որպես հիմք ճանաչված է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետով, երբ կալանքը «հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա [անձի] կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու հիմք է այն, որ «կասկածյալը կամ մեղադրյալը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությունը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով»:

Այս առնչությամբ կարևոր է նաև հաշվի առնել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շատ ավելի նվազ նշանակություն է վերագրում նշված հիմքին, երբ վկան արդեն իսկ տվել է ցուցմունքը, միաժամանակ ազգային պետությունների համար շատ ավելի դժվար է հիմնավորել շարունակական կալանքը: Սակայն այս առումով կարևոր է այն, որ կոնվենցիայի նշված նորմը՝ «կարող է կատարել նոր հանցագործություն», այդ թվում՝ վրեժխնդրությունից ելնելով, հնարավորություն է տալիս կալանք խափանման միջոցը կիրառել նաև վկայի ցուցմունքը տալուց հետո, քանի որ օբյեկտիվորեն մերկացնող ցուցմունք տված վկան «վտանգի տակ» է, և հնարավոր վրեժխնդրությամբ պայմանավորված վտանգը պակաս իրական չէ, քան քրեական պատասխանատվությունից խուսափելու մտահոգությամբ պայմանավորված վտանգը:

Խափանման միջոցների առնչությամբ կարելի է քննարկել նաև պաշտպանության մասին դատական հրահանգի (protection order) ներմուծման խնդիրը, մասնավորապես, երբ վկայի կամ տուժողի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում

⁴⁸ *Տե՛ս* «Մարդու իրավունքների Եվրոպական բյուրոն», Երևան, թիվ 3, 2009, էջ 224:

⁴⁹ ՔԴՕ հոդվ. 98, պրիմ 8:

դատավորի կողմից որոշում է կայացվում այն մասին, որ ազատության մեջ գտնվող կասկածյալը չպետք է մտենա պաշտպանության տակ գտնվող անձին՝ պահպանելով որոշակի հեռավորություն: Սա հատկապես կարևոր է ընտանեկան բռնության գործերով, և լայնորեն կիրառվում է ԱՄՆ-ում, կամ ընդհանրապես այնպիսի գործերով, որոնցում ազատության մեջ գտնվող և վտանգ ներկայացնող անձը աշխատանքի կամ այլ բերումով կարող է անմիջական շփման մեջ լինել վտանգված անձի հետ: Իսկ չափանիշները, ինչպես և վտանգի ռեալության ցանկացած դեպքում, պետք է որոշվեն վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ հաշվի առնելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը:

Վկայի պաշտպանության՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված միջոցները

Վկայի պաշտպանության օրենսդրական և գործնական միջոցները պետք է ապահովեն, որ վկան որոշ ակնկալիքներ ունենա, որոնք պետք է լինեն այնքան իրական, իրագործելի և արդյունավետ, որ սուբյեկտիվ առումով կզերակշռեն մեղադրյալի նկատմամբ ունեցած ողջամիտ վախին: Վկան պետք է իմանա, որ չի ենթարկվի վրեժխնդրության, ինչին պետք է նպաստեն ոչ միայն խիստ քրեական սանկցիաները վկային սուտ ցուցմունք տալուն հարկադրելու (և արդարադատության դեմ ուղղված այլ հանցագործությունների) համար, այլև խիստ սանկցիաները և, իհարկե, պատիժներն այն հանցագործության համար, որի վերաբերյալ գործով վկան տալիս է իր մերկացնող ցուցմունքը: Վկան պետք է հստակ իմանա, որ ցուցմունք տալու հետևանքով հատուցելու է ոչ թե ինքը, այլ (ըստ իրեն⁵⁰) հանցավորը: «Անհատի մասնակցությունը քրեական դատավարությանը չպետք է հանգեցնի նրա անվտանգության ապահովման նվազեցմանը: Եթե պետությունը չի կարող ապահովել դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը, ապա վարույթն իրականացնող մարմնի պահանջը՝ կատարել քրեադատավարական պարտականությունները (օրինակ՝ ցուցմունք տալ) համարվում է ոչ իրավաչափ»⁵¹: Իրոք այդպես է, քանի որ եթե վկայի անվտանգությունը հանցագործության բացահայտման և մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի հետ մրցակցող շահ է, ապա այն նույնպես պետք է հաշվի առնել: Իրավացի է նաև այն առաջարկությունը, որ վկային և տուժողին պետք է ազատել ցուցմունք տալուց հրաժարվելու համար պատասխանատվությունից, եթե իրավապահ մարմիններին հայտնելուց հետո վերջիններս անձին պաշտպանելու միջոցներ չեն ձեռնարկել: Սա պետության պոզիտիվ պարտականությունն է, որը չի չեզոքացվում հանցավորության դեմ պայքարի հանրային շահով:

Վտանգված վկայի համար նշված սուբյեկտիվ ընտրությունը կատարելիս, այսինքն՝ վախի և ցուցմունք տալու ցանկության ներքին պայքարի ելքի վրա կարևոր նշանակություն ունի նաև վկային տրվելիք հատուցումը՝ որոշակի ոչ իրավաչափ, այդ թվում՝ հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության չենթարկելով: Խոսքը համագործակցող վկաների քրեական պատասխանատվությունից անձեռնմխելիության մասին է: Որոշ չափով այս մոտեցումն ամրագրված է ՀՀ օրենսդրության մեջ՝ առանձին հանցակազմերի գծով, օրինակ՝ կաշառք տալու մասին հայտնելը, առանձին

⁵⁰ Այս հոդվածները գետեղված են սույն ուսումնասիրության հավելվածում: Ա.Երեմյանն ու Ա.Ղամբարյանն իրավացիորեն առաջարկում են քրեական պատասխանատվություն նախատեսել նաև մեղադրյալին սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելուն հարկադրելու կամ կաշառելու համար: Տե՛ս Երեմյան Ա., Ղամբարյան Ա. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 86: Նույն հեղինակներն իրավացիորեն վկայի պաշտպանության այս նյութաիրավական երաշխիքների շարքն են դատում այն, որ առանձին հանցագործություններ որակյալ են համարվում, եթե կատարվել են տուժողի կողմից իր հասարակական պարտքի կատարման հետ կապված (104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ և այլն): Տե՛ս նույն տեղում, էջ 84-85:

⁵¹ Նույն տեղում, էջ 84-85:

հանցակազմերով հանցագործության բացահայտմանը նպաստելը: Այս գործողությունները նախատեսված են նաև որպես վկայություն տված դատապարտյալների մեղքը մեղմացնող հանգամանքներ:

Սակայն մոտեցումը պետք է լինի ավելի գործալ. վկան պետք է ընդհանրապես ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե բացահայտում է հանցագործությունը և դրանով պաշտպանում ավելի մեծ արժեք: Ինչ խոսք, այստեղ կա հայեցողություն և ռիսկի գործոն, թե արդյոք շատ մեծ կոռուպցիոն ռիսկ չէ՞ վարույթն իրականացնող մարմնին նման հայեցողությամբ օժտելը: Մա ժամանակի ընթացքում լուծվող հարց է, կազմակերպված հանցավորության դեմ պայքարում այդ ճանապարհով են գնում ԱՄՆ-ն և շատ այլ երկրներ, քանի որ «եթե հանցագործությունը կատարվել է դժոխքում, քո վկաները չեն կարող հրեշտակներ լինել»:

Այնուամենայնիվ, եթե խոսքը հանցագործություն կատարած այն վկաների մասին է, ովքեր հանցավոր գործունեության ընթացքում զոհականացվել են, օրինակ՝ թրաֆիքինգի զոհերն օգտագործել են կեղծ անձնագրեր, ապօրինի հատել են սահմանը և այլն, ապա քրեական պատասխանատվությունից անձեռնմխելիությամբ օժտելը և՛ օբյեկտիվ չափանիշներ է ստանում, և՛ բավարարում է մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Պալերմոյի արձանագրության պահանջը, բացի այդ, ընդունված է ՀՀ օրենսդրությամբ:

Վտանգված տուժողների պաշտպանության կարևոր երաշխիքներից է նաև նյութական պաշտպանությունը: Պետությունը պաշտոնապես, անկախ այդ մասին արված միջնորդությունից, պարտավորություն է կրում ապահովելու վտանգված վկաների գույքային շահերի պաշտպանությունը: Նախևառաջ, պետությունը մրցակցության սկզբունքից բխող տուժողի կարգավիճակ տալու պարտականություն ունի: Քրեական վարույթում քաղաքացիական հայցվոր ճանաչելը նույնպես կարևոր է վախի և դրական ակնկալիքների միջև նշված սուբյեկտիվ պայքարը հօգուտ պետության, այն է՝ հանցագործության բացահայտման շահի լուծելու համար:

Պաշտպանվող անձի իրավունքներն ու պարտականությունները

1. Պաշտպանվող անձն իրավունք ունի՝

- 1) ներկայացնելու միջնորդություն պաշտպանության լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու կամ դրանք դադարեցնելու մասին,
- 2) իմանալու իր նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցի կամ միջոցների, դրանց տեսակի, իրականացման, ժամկետի և դադարեցման մասին,
- 3) դատական կարգով բողոքարկելու քրեական վարույթն իրականացնող մարմնի, նրա պաշտոնատար անձի որոշումները, գործողությունները կամ անգործությունը,
- 4) հրաժարվելու պաշտպանության միջոցներից:

2. Պաշտպանվող անձը պարտավոր է՝

- 1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները,
- 2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակաիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած և պաշտպանվող անձի պաշտպանությանն առնչվող ցանկացած փոփոխության մասին,

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառումը,

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշում կայացնելուց հետո պարտավոր է պաշտպանվող անձին անհապաղ բացատրել նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև աջակցել պաշտպանվող անձին այդ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման գործում⁵²:

Պաշտպանության միջոցների դադարեցման հիմքերը և կարգը

1. Պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում,

2) տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով,

3) չի կատարել սույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները,

4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգի վերացման պատճառով,

5) մահացել է:

2. Պաշտպանության միջոցների իրականացման դադարեցումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է պաշտպանվող անձին, որը կարող է բողոքարկվել դատական կարգով⁵³:

Թվարկված հիմքերից նպատակահարմար ենք համարում անդրադառնալ 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքին՝ «տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Կարևոր է նշել, որ օրենսդիրն այս հիմքի առաջացումը հստակ կապում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության հետ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կարծիքը, որ վկան սուտ ցուցմունք է տվել, դեռևս հիմք չէ նրա նկատմամբ ընտրված պաշտպանության միջոցը վերացնելու համար: Սուտ ցուցմունք տալու փաստի վերաբերյալ քրեական գործ հարուցելը, պաշտպանության տակ գտնվող վկային մեղադրանք առաջադրելը, գործը դատարան ուղարկելը, դրա քննությունը, անգամ դատավճիռ արձակելը՝ մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը հիմք չեն ընտրված պաշտպանության միջոցը վերացնելու համար: Պետք է ասել նաև, որ անգամ սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է, որ «մայր գործով», այսինքն՝ այն գործով, որով վկան տվել է ցուցմունքը, որպես իրավաբանական փաստ հաստատված լինի այն հանգամանքը, որ վկայի տված ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը: Սա կարևոր է նաև ՀՀ դատական պրակտիկայի համար: Վերջերս Լոռու մարզում գործերից մեկով դեռևս նախքան «մայր գործի» դատարանում ավարտը նախաքննության մարմինը քրեական գործ էր հարուցել վկայի նկատմամբ և այն ուղարկել էր դատարան: Սակայն Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, իրավացիորեն հղում կատարելով ապացույցների գնահատման ընդհանուր սկզբունքներին, անմեղության կանխավարկածին, «մայր գործով» փաստերի վերջնական

⁵² ՔԴՕ հոդվ. 99:

⁵³ ՔԴՕ հոդվ. 99, պրիմ. 1:

գնահատականը միայն դատարանի կողմից տրվելու սկզբունքին, արդարացրել է այդ վկային⁵⁴:

Մեր կարծիքով, նման դատավճիռները կանխարգելիչ նշանակություն ունեն բացառելու համար այն դեպքերը, երբ վկայի նկատմամբ ընտրված պաշտպանության միջոցը կարող է վերացվել միայն այն «հիմքով», որ վարույթն իրականացնող մարմնի, մասնավորապես՝ քննիչի կարծիքով, վկան խուսափում է ճշմարտությունը հայտնելուց:

5. Գործնական ուսումնասիրություն⁵⁵

5.1. Մեթոդաբանությունը

Ազգային օրենսդրությամբ սահմանված վկայի պաշտպանության մեխանիզմների գործնական կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունն ընդգրկել է.

1. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ոստիկանության բաժանմունքների պրակտիկան,
2. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի փաստաբանների պրակտիկան,
3. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննիչների պրակտիկան,
4. Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննիչների աշխատանքային պայմանները:

Նշված ուսումնասիրությունն իրականացվել է.

1. դիտարկումների,
2. հարցաթերթիկների լրացման,
3. փաստաբանների շրջանում հարցման,
4. փաստաբանների կողմից ավարտված գործերի վերլուծության միջոցով:

Դիտարկումներ

Դիտարկումներն իրականացվել են 2010 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ոստիկանության բաժիններ այցելություններով: Դիտարկումները կատարվել են հատուկ մշակված դիտարկման քարտերի միջոցով, որոնք ընդգրկել են հետևյալ հարցերը.

1. շենքերի տեղակայումն ու հասանելիությունը, շենքային պայմանները, ոստիկանության բաժիններ վկայի մուտքի պայմանները,
2. վկայի հարցաքննության պայմանները:

Ներկայացված հարցերի պարզաբանման նպատակով հավելյալ տեղեկություններ և մեկնաբանություններ են տվել ոստիկանության բաժնի աշխատակիցները:

Դիտարկումների շրջանակներում այցելություններ են կատարվել քննչական 17 բաժիններ/բաժանմունքներ, այդ թվում՝ Լոռու մարզում Վանաձորի, Գուգարքի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի և Սպիտակի բաժինները, Շիրակի մարզում

⁵⁴ Տե՛ս ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մելքոնյանի նախագահությամբ 2010 թ. մարտի 10-ին կայացված N-ԼՂ/0301/01/09 արդարացման դատավճիռը:

⁵⁵ Ուսումնասիրությունն իրականացվել է սույն հաշվետվությունը կազմվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված "Վկաների իրավունքների պաշտպանության" ծրագրի շրջանակներում՝ կազմակերպության աշխատակիցներ Հայկուհի Հարությունյանի և Տաթևիկ Մատինյանի կողմից:

Գյումրու, Անիի, Ամասիայի, Արթիկի, Ախուրյանի և Աշոցքի բաժինները, Տավուշի մարզում Դիլիջանի, Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի և Բազրատաշենի բաժիններ ու բաժանմունքներ:

Հարցաթերթիկների լրացում (քննիչներ)

Մոնիթորինգի ընթացքում տեղեկատվությունը հավաքվել է նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով: Քննիչների համար նախատեսված հարցաթերթիկն ընդգրկել է հետևյալ հարցերը.

- Վկայի նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների հաճախականությունը:
- Վկայի նկատմամբ առավել հաճախ կիրառված պաշտպանության միջոցների տեսակները:
- Վկայի նկատմամբ առավել հաճախ կիրառված պաշտպանության միջոցների ընտրության հիմնավորումը:

ՀՀ քննչական գլխավոր վարչությունը հավաքել է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննիչներին և պատասխանները տրամադրել կազմակերպությանը: Հարցաթերթիկների լրացմանը մասնակցել է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի 79 քննիչ:

Փաստաբանների շրջանում հարցում

Մոնիթորինգի ընթացքում հարցումներն իրականացվել են նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով: Հարցաթերթիկները տրամադրվել են փաստաբաններին և նրանց կողմից լրացված վերադարձվել կազմակերպությանը:

Փաստաբանների համար նախատեսված հարցաթերթիկն ընդգրկել է հետևյալ բնագավառներին վերաբերող հարցեր.

- Վկայի նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու հիմքերը:
- Գործնականում առավել հաճախ կիրառվող պաշտպանության միջոցները:
- Վկայի նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու հիմնավորումները:
- Վկայի հարցաքննության համար անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Հարցմանը մասնակցել է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի 33 փաստաբան:

Փաստաբանների կողմից ավարտված գործերի վերլուծություն

Գործերի վերլուծությանը մասնակցած փաստաբաններից 9-ը հայտնել են իրենց մասնակցությամբ 62 քրեական գործերով վկաների նկատմամբ ճնշումների կամ վկայի դատավարական կարգավիճակի փոփոխության մասին: Ելնելով ծրագրային նպատակներից՝ տվյալ գործերն ուսումնասիրվել են հետևյալ խնդիրների բացահայտման նպատակով.

1. վկայի նկատմամբ կիրառված ճնշումների տեսակները,
2. վկայի նկատմամբ կիրառված ճնշումների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները,
3. նախաքննության ընթացքում վկայի դատավարական կարգավիճակի փոփոխության դեպքերը:

5.2. Դիտարկման արդյունքներ

Շենքերի տեղակայումն ու հասանելիությունը, շենքային պայմանները, ոստիկանության բաժիններ վկայի մուտքի պայմանները

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ ոստիկանապետին նամակ է հղել Լոռի, Տավուշ և Շիրակ մարզերի քննչական բաժիններում կամ բաժանմունքներում դիտարկումներ իրականացնելու համար թույլտվություն ստանալու նպատակով: ՀՀ գլխավոր քննչական վարչությունը գրավոր նամակով թույլ է տվել է կազմակերպությանն իրականացնել դիտարկումներ:

Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ոստիկանության 17 բաժիններում կամ բաժանմունքներում իրականացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ վկաների հարցաքննությունը, որպես կանոն, իրականացվում է ոստիկանության բաժիններում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում վկայի հարցաքննությունն իրականացվում է նրա գտնվելու վայրում կամ քննիչի մատնանշած վայրում⁵⁶: Օրենսդրությունը նման դեպքերի համար սպառիչ ցանկ չի սահմանում, ինչը հավանականություն է ստեղծում հնարավոր չարաշուճների համար: Ելնելով ոստիկանության բաժնի կամ բաժնմունքի աշխարհագրական դիրքից և միջհամայնքային փոխադրամիջոցների սահմանափակ լինելուց՝ հարցաքննություններն իրականացվում են վկայի գտնվելու վայրում, հատկապես՝ գյուղական համայնքների դեպքում:

Նման խնդիրն առավել ակնհայտ է երևում այն համայնքներում, որտեղ միջհամայնքային ճանապարհների մաշվածությունը, ինչպես նաև համայնքների աշխարհագրական դիրքը դժվարություններ են ստեղծում միջհամայնքային հաղորդակցության համար: Առավել ևս, երբ միջհամայնքային հասարակական տրանսպորտը կանոնավոր կերպով չի աշխատում, իսկ որոշ համայնքներում այն ուղղակի բացակայում է:

Դիտարկված գրեթե բոլոր մարզերում ոստիկանության բաժնի կամ բաժանմունքի գտնվելու վայրից սպասարկվող համայնքներ երթնելող միջհամայնքային տրանսպորտն աշխատում է ամրագրված գրաֆիկով: Կան համայնքներ, որտեղ միջքաղաքային տրանսպորտը նույն օրը չի վերադառնում, որոշ համայնքներ հասնելու համար էլ միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայության պատճառով քաղաքացիները ստիպված են օգտվել այլ համայնքներ տանող տրանսպորտից:

Ակնհայտ է, որ այլ համայնքից ոստիկանություն հրավիրված վկան նշանակված ժամին հարցաքննության ներկայանալու և իր բնակության վայր վերադառնալու համար միջհամայնքային տրանսպորտային միջոցների բացակայության կամ ոչ կանոնավոր աշխատանքի պատճառով հանդիպում է դժվարությունների: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ կետի 8-րդ մասով նախատեսվում է դատաքննության ընթացքում վկայի կրած ծախսերի փոխհատուցման իրավունքը: Ըստ քննիչների՝ քիչ չեն եղել դեպքերը, երբ հարցաքննության հրավիրված վկան քննիչին դիմել է իր տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու խնդրանքով: Ոստիկանության բաժանմունքներից մեկում քննիչը վկայի դիմումի կապակցությամբ գրավոր պատասխանել է, որ հարցաքննությանը մասնակցելու համար վկայի կողմից կրած ծախսը ենթական է հատուցման դատարանի որոշման հիման վրա, օրենսդրությամբ սահմանված չափով:

⁵⁶ Գյուղական համայնքներում սովորաբար նման վայր է գյուղապետարանը:

Այնուամենայնիվ, համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով դիտարկված մարզերում երբևէ այդ իրավունքի իրացումը չի ապահովվել:

Ոստիկանության դիտարկված բաժանմունքների աշխատակիցներն իրենց բանավոր մեկնաբանություններում նշել են, որ նման խնդիրների պատճառով են ստիպված լինում հարցաքննությունն իրականացնել վկայի փաստացի գտնվելու վայրում: Քննիչները հավելել են նաև, որ նման դժվարություններ ունեն նաև իրենք, քանի որ վկային իր փաստացի գտնվելու վայրում հարցաքննելու համար իրենց կրած տրանսպորտային ծախսերը նույնպես չեն փոխհատուցվում:

Լոռի, Տավուշ և Շիրակ մարզերում դեպի քննչական բաժին կամ բաժանմունք ուղղորդող ցուցանակներն իսպառ բացակայում են:


Դիտարկված բաժինների/բաժանմունքների շենքերի մեծ մասը խորհրդային տարիներից ի վեր չի վերանորոգվել: Հետխորհրդային տարիներին կառուցված նոր շենքերն իրենց հատակագծով սկզբունքայնորեն չեն տարբերվում նախկինում կառուցված շենքերից: Շենքերի ճարտարապետական հատակագծերն ունեն մի շարք թերություններ, մասնավորապես՝ առանձնացված էլքի ու մուտքի հնարավորություն նախատեսված չէ, չկան հարցաքննության համար առանձնացված սենյակներ, սպասասրահներ, ճանաչման ներկայացման համար նախատեսված հատուկ սենյակներ, որոնք ապահովում են ճանաչողի համար անվտանգ պայմաններ: Ավելին, ոստիկանության նույն շենքում հաճախ տեղակայված են ճանապարհային ոստիկանության, անձնագրային և վիզաների վարչության, պահակ-պարեկային ծառայության, անչափահասների տեսչության և քննչական բաժինները: Դրանք որպես առանձին ստորաբաժանումներ հաճախ առանձնացված չեն միջնապատերով, և ոստիկանության շենք առաջին անգամ մուտք գործողի համար չափազանց դժվար է կողմորոշվել և գտնել անհրաժեշտ մարմնի գտնվելու տեղը: Բացի այդ, շատ դեպքերում թե՛ Անձնագրային բաժին եկած և թե՛ հարցաքննության ներկայացած քաղաքացիները ստիպված են սպասել ընդհանուր միջանցքներում, նույնիսկ այն դեպքերում, երբ քննչական բաժանմունքներին հատկացված է շենքի առանձնացված հատված:

Դիտարկված ոստիկանության բաժիններից միայն Գյումրի քաղաքի քննչական բաժինն է տեղակայված է ոստիկանության շենքից ամբողջությամբ առանձնացված շենքում:

Ստեփանավան քաղաքը նույնպես բացառություն էր, քանի որ այստեղ ոստիկանության շենքի 2-րդ հարկում կան առանձնացված հարկաբաժիններ, որոնցից մեկի վերին մասում գրված է՝ Քննչական բաժանմունք: Մյուս բոլոր ոստիկանության բաժիններում, եթե անգամ քննչական բաժինները կամ բաժանմունքները տեղակայված են եղել առանձնացված հարկում կամ շենքի առանձին հատվածում, այնուամենայնիվ բաժանմունքի անվանատախտակ տեղադրված չէ:

Վկայի հարցաքննության պայմանները

Ինչպես նշվեց վերը, դիտարկված ոստիկանության բաժին/բաժանմունքներում վկաների համար նախատեսված առանձնացված սպասասրահներ չկան, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի




համաձայն՝ հարցաքննությունից առաջ պետք է բացառվի վկաների՝ միմյանց հետ հաղորդակցվելու, շփվելու հնարավորությունը: Դատավարության մասնակից անձանց անվտանգության ապահովման սկզբունքը ենթադրում է, որ նման անձինք պետք է հնարավորինս պաշտպանված լինեն դատավարության մյուս մասնակիցների հնարավոր ճնշումներից: Այսպիսով, ոստիկանության բաժիններ/բաժանմունքներ ընդհանուր կարգով ելումուտի, առավել ևս ընդհանուր սպասասարահների պարագայում վերոհիշյալ սկզբունքների պահպանումը բարդանում է:

Դիտարկված քննչական 6 բաժին/բաժանմունքներում որպես սպասասարահ ծառայում էր միջանցքի մի հարմարեցված հատված:

Գյումրու քննչական բաժնի հերթապահ մասին հարող տարածքում կա հերթապահ ոստիկանի սենյակ՝ կահավորված սեղան-աթոռներով, որը և հարմարեցված է՝ ծառայելու որպես սպասասարահ:

Նույնիսկ նման դեպքերում հարցաքննության գաղտնիության ապահովումը մտահոգություն է առաջացնում, քանի որ աշխատասենյակների և միջանցքի միջև ընկած տարածությունը բավականին նեղ է, և հարցաքննության ընթացքին կարելի է հետևել. այն լսելի է դառնում քննիչների աշխատասենյակների դռան հատվածից:



Դիտարկումները ցույց են տվել, որ քննչական 17 բաժիններից կամ բաժանմունքներից և ոչ մեկում վկաների հարցաքննության համար առանձնացված սենյակ չկա: Ավելին, որոշ բաժիններում կամ բաժանմունքներում երկու կամ ավելի քննիչներ զբաղեցնում են մեկ աշխատասենյակ, ինչի պատճառով նույնպես խնդիր է դառնում հարցաքննության գաղտնիության ապահովումը (օրինակ, եթե անձնական կյանքին վերաբերող խնդիրներ կան), քանի որ երկրորդ քննիչը կա՛մ ստիպված է ներկա գտնվել հարցաքննությանը, կա՛մ աշխատանքային ժամին պետք է թողնի աշխատանքը:


Քննիչները նշել են, որ ստիպված են լինում հարցաքննության համար նշանակել տարբեր ժամեր, որպեսզի կանխեն նույն սենյակում զուգահեռ հարցաքննության հավանականությունը: Բայց քանի որ այս հանգամանքն ազդեցություն է ունենում նախաքննության համար սահմանված ժամկետի պահպանման վրա, երբեմն ստիպված են լինում աշխատել զուգահեռ:

Ի թիվս այլ դատավարական գործողությունների, անձի ճանաչումը և առերեսումը նույնպես հիմնականում իրականացվում է քննիչների աշխատասենյակում, եթե անձը ձերբակալված չէ:

Սակայն որոշ աշխատասենյակներ այնքան փոքր են, որ այնտեղ անհնար է իրականացնել ճանաչում կամ առերեսում: Մասնավորապես, Աշոցքի, Ստեփանավանի (որոշ աշխատասենյակներ) և Ամասիայի քննչական բաժանմունքներում քննիչների աշխատասենյակների տարածքն այնքան փոքր է, որ այնտեղ տեղավորվում է միայն քննիչի աշխատանքային կահավորանքը: Այսպես, Աշոցքի քննչական բաժանմունքում ճանաչում քննչական գործողությունը կատարվում է ոստիկանության շենքի միջանցքում: Այն դեպքերում, երբ անձը ձերբակալված կամ կալանավորված է, սպա ճանաչման

ներկայացնելը և առերեսումը կատարվում է, համապատասխանաբար, ձերբակալված անձանց պահելու վայրում կամ կալանավորված անձանց պահելու վայրում:

Ինչ վերաբերում է անձին ճանաչման ներկայացնելուն, ապա հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը դրա իրականացման համար հատուկ պայմաններ չի նախատեսում: Սակայն, ելնելով ճանաչող անձի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, հատկապես փոքր համայնքներում, երբ անձը, չտեսնելով նման երաշխիքներ, խուսափում է քննչական մարմնի հետ համագործակցելուց, տվյալ դեպքում՝ անձի ճանաչում դատավարական գործողությանը մասնակցելուց, անվտանգ ճանաչման համար հարկ է հատուկ միջոցներ և տեխնիկա օգտագործել:




Դիտարկումների ընթացքում արձանագրվել է նման պայմանների բացակայությունը բոլոր քննչական բաժիններում կամ բաժանմունքներում: Ի դեպ, միայն Նոյեմբերյանի քննչական բաժանմունքում են քննիչները նշել, որ ոստիկանությունում հատուկ սենյակ կա՝ այնպիսի պայմաններով, որ ճանաչվող անձինք չեն տեսնում ճանաչող անձին: Սակայն այդ քննիչներից և ոչ մեկն այդ սենյակում ճանաչում չի իրականացրել:

Իրավիճակը նույնն է առերեսման գործողության դեպքում: Եթե առերեսման ընթացքում առերեսվողների միջև կոնֆլիկտային իրավիճակ է առաջանում, ապա ընդհանուր կարգ ու կանոնի, ինչպես նաև անվտանգության ապահովման պատասխանատուն քննիչն է, ինչը կարող է հանգեցնել ճնշումների գործադրման:

Դիտարկված քննչական բաժինների կամ բաժանմունքների շենքային պայմանները մասնակի կամ կոսմետիկ վերանորոգվել են:

Քաղաքացիների այցելությունների կանոնակարգումը քննչական բաժիններում

Դիտարկված 17 քննչական բաժիններից կամ բաժանմունքներից և ոչ մեկում քաղաքացիների մուտքն ու ելքը չէր գրանցվում: Նման պահանջ նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչի



հետևանքով հնարավոր չէ քննչական բաժիններում վերահսկել քաղաքացիների ելումուտը, ինչպես նաև քաղաքացու ոստիկանության շենքում գտնվելու հիմքերը: Նման իրավիճակն առաջացնում է մի քանի մտահոգություններ. նախ՝ դատավարության՝ քննչական բաժին ներկայացած մասնակցի անվտանգության ապահովման խնդիրը, երկրորդ՝ քննիչների կողմից դատավարական գործողությունների

իրականացման ընթացքում հնարավոր խախտումները կանխելը: Հատկանշական է, որ անձի քննչական բաժնում գտնվելու տևողության, կարգավիճակի, քննչական բաժին ներկայանալու կամ բերման ենթարկելու մասին տվյալները չեն գրանցվում: Հարցաքննության արձանագրության մեջ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նշվում են հարցաքննության փաստը, ընթացքը և արդյունքները: Գործնականում հարցաքննության արձանագրության մեջ նշվում է հարցաքննության

տևողությունը, սակայն անձի ուստիկանությունում գտնվելու և հարցաքննության տևողությունը միշտ չէ, որ նույնական է: Մինչդեռ քննչական բաժին մուտք գործելու նպատակի, անձի իրավական կարգավիճակի, քննչական բաժնում գտնվելու տևողության վերաբերյալ արձանագրության առկայությունը էական նշանակություն կունենար ուստիկանության աշխատակիցների և քննիչների գործողությունների իրավաչափությունը գնահատելիս:

Ըստ փաստաբանների հաղորդած տվյալների՝ գործնականում հանդիպել են դեպքեր, երբ անձը հրավիրվել է ուստիկանություն կամ քննչական բաժին առանց իրավական կարգավիճակի կամ կանչվել է հարցաքննության որպես վկա, այնուհետև նույն գործով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում որպես վկայի փաստաբան ներգրավված 12 պաշտպաններից 4-ն ունեցել են նմանատիպ 1-5 գործեր:

Ուստիկանության շենք քաղաքացիների ելուժուտի գրանցման հարցում բացառություն է միայն Իջևանի ուստիկանության բաժնը, որի հերթապահ մասի դիմացի հատվածում գործում է անցակետ, որտեղ կատարվում է այցելուների գրանցում: Ուստիկանության աշխատակիցը ճշտում է քաղաքացու այցի նպատակը, ում մոտ կամ ում կանչով է ներկայացել, լրացնում է համապատասխան «անցագրային կտրոն», որում նշվում էր ուստիկանության շենք մուտք գործելու ժամը և այցի նպատակը: Ճշտված տեղեկությունները գրառվում են նաև «անցակետի» գրանցումների մատյանում: Ուստիկանության շենքից դուրս գալիս անձը պարտավոր է վերադարձնել անցագրային կտրոնը՝ այն աշխատակցի կամ քննիչի ստորագրությամբ, ում մոտ կամ ում կանչով ներկայացել է: Կտրոնի վրա նշվում է նաև ուստիկանության շենքից դուրս գալու ժամը: «Անցագրային կտրոնը» կցվում է գրանցման մատյանին:

Դիտարկումների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ քննիչների աշխատանքային պայմանները, մասնավորապես՝ առանձնացված աշխատասենյակների բացակայությունը, անմիջական ազդեցություն են ունենում վկաների հարցաքննության կազմակերպման վրա (մանրամասն նկարագրիր տե՛ս հավելված 4-ում):

5.3. Փաստաբանների շրջանում անցկացված հետազոտության արդյունքներ

Վկաների հարցաքննության կազմակերպումն ու իրականացումը

Քննչական բաժիններում կամ բաժանմունքներում իրականացված դիտարկումների, այդ ընթացքում նրանց արած պարզաբանումների և փաստաբանների՝ իրենց իսկ գործերի վերլուծությունների հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ վկաների հիմնական մասը քննչական բաժին կամ բաժանմունք են կանչվում հեռախոսազանգով կամ ուստիկանության տեղամասային տեսուչի բանավոր կանչով: Տեղամասային տեսուչը քննիչից ստանում է համապատասխան «առաջադրանք»՝ ապահովել քաղաքացու՝ որպես վկայի ներկայանալը քննչական բաժին, ինչը իրականացվում է քննչական բաժին ներկայանալը հավաստող «պարտավորագրի»⁵⁷ ստորագրմամբ, որը հանձնվում է քննիչներին: Հետագայում վկայի հարցաքննությանը չներկայանալու դեպքում տվյալ պարտավորագրով

⁵⁷Նմանատիպ փաստաթուղթ օրենսդրությունը չի սահմանում:

հիմնավորվում է անձի՝ արդարադատության իրականացմանը խոչընդոտելը կամ ցուցմունք տալու պարտականության կատարումից չարամտորեն խուսափելը:

Ըստ փաստաբանների՝ վկաների մեծ մասը քննիչի մոտ հարցաքննության է կանչվում հեռախոսագանգով⁵⁸: Նման դեպքերում, երբ վկան պահանջում է իրեն ուղարկել ծանուցագիր, ապա ոչ միշտ է նրա պահանջը բավարարվում: Մասնավորապես, կամ առհասարակ ծանուցագիր չի ուղարկվում կամ էլ ուղարկվում է ոչ պատշաճ լրացված: Օրինակ՝ ուղարկված ծանուցագրի մեջ նշվում է, թե որ ժամին և ուր է հրավիրվում անձը հարցաքննության, սակայն չի նշվում թե ինչ գործի փաստական հանգամանքների կապակցությամբ է կանչվում ցուցմունք տալու:

Փաստաբանների շրջանում իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում որպես վկայի փաստաբան ներգրավված 9 պաշտպանների 44 գործերից 20-ի դեպքում վկան քննչական բաժին բերման է ենթարկվել, ընդ որում՝ 17-ի դեպքում առանց իրավական հիմքերի: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը նախատեսում է, որ վկային բերման ենթարկելը իրավաչափ է միայն այն դեպքում, երբ վկան առանց հարգելի պատճառի քննության չի ներկայանում⁵⁹:

Չարցաքննությունից առաջ քննիչը ճշտում է վկայի ինքնությունը. համաձայն այս դրույթի՝ վկան հարցաքննության պետք է ներկայանա անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: Սակայն գործնականում, ըստ փաստաբանների, վկաների անձը չի ստուգվում: Ավելին, անձին որպես վկա հարցաքննության կանչելիս նրան չի տեղեկացվում, որ անհրաժեշտ է քննչական բաժին/բաժանմունք ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:

Վկային հարցաքննության կանչելիս (համաձայն օերնադրության՝ ծանուցագրով) նրան պետք է տեղեկացվի, թե որ գործի շրջանակներում է կանչվում հարցաքննության: Այնուամենայնիվ, փաստաբանների հարցումներից պարզվում է, որ նույնիսկ հեռախոսագանգով հարցաքննության հրավիրվող վկաները իրազեկված չեն լինում, թե ինչ գործով են կանչվում ցուցմունք տալու: Եղել են դեպքեր, երբ որոշակի գործով հարցաքննության կանչված վկան, քննչական բաժին ներկայանալով փաստաբանի հետ, քննիչի կողմից հարցաքննվել է բոլորովին այլ գործի փաստական հանգամանքների առնչությամբ:

Քննիչը վկային նախազգուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության և ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Մասնավորապես, վկային տեղեկացվում է, որ նա պարտավոր չէ տալ իր, ամուսնուն կամ իր մերձավոր ազգականներին հանցագործության մեջ մերկացնող ցուցմունքներ⁶⁰:

Դիտարկումները քննչական բաժիններում կամ բաժամունքներում ցույց տվեցին, որ մինչ հարցաքննությունը սկսվելը վկան ստորագրում է հարցաքննության արձանագրության


⁵⁸ Չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասում որպես պատշաճ ծանուցում ընդունում է միայն ծանուցագրի միջոցով ծանուցումը:

⁵⁹ Փաստաբանների կողմից գործերի վերլուծությունների արդյունքները ներկայացված են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վկաների իրավունքների և պարտականությունների համաձայն:


⁶⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդվ. 86, մաս 5, կետ 2:

ձևաթուղթը⁶¹ կամ վկայի իրավունքների վերաբերյալ հուշաթերթիկը: Դիտարկված բաժիններից (բաժանմունքներից) 12-ում մշակվել և օգտագործվում է վկայի իրավունքների հուշաթերթիկ, որում վկայի իրավունքները սահմանող հոդվածները ներկայացված են ամբողջությամբ:

Դիտարկված բաժանմունքներից 5-ում նման հուշաթերթիկ չկար, վկայի իրավունքների մասին հիշատակվում է միայն հարցաքննության արձանագրության ձևաթղթում, որում պարզապես նշվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այն հոդվածների համարները, որոնցով



սահմանում են վկայի իրավունքներն ու պարտականությունները: Փաստաբանների կողմից լրացված հարցաթերթիկների վերլուծությունը վկայում է, որ իրավաբանական կրթություն չունեցող անձի համար հասկալի չեն ներկայացված հոդվածների իրավական նշանակությունն ու հետևանքները: Այդ իսկ պատճառով կարելի է անվերապահորեն պնդել, որ վկան «ստորագրում է այն բանի համար, որ տեղեկացվել է իր իրավունքների մասին»,



մինչդեռ իրականում նրան չեն բացատրվում իր իրավունքների և պարտականությունների բովանդակությունը: Այսինքն՝ վկայի իրավունքների և պարտականությունների ծանուցումը ձևական բնույթ ունի: Փաստաբանների կողմից հիշատակված են այնպիսի դեպքեր, երբ հարցաքննության հրավիրված անձը միայն փաստաբանից է տեղեկացել իր իրավունքների և պարտականությունների մասին, կամ

առանց փաստաբանի հարցաքննված վկան բնավ տեղեկացված չի եղել իր իրավունքների և պարտականությունների մասին:

Նման անտեղյակության պատճառով է վկան հաճախ ցուցմունք տալիս իր հարազատի դեմ: Սա պայմանավորված է նաև նրանով, որ երբ քննիչը ներկայացնում է վկային նրա իրավունքներն ու պարտականությունները, շեշտը դրվում է ցուցմունք տալու պարտավորության վրա: Փաստաբանների վերլուծություններում նշված են բազմաթիվ գործեր, երբ ամուսիններից մեկի դեմ հարուցված քրեական գործի մեղադրական եզրակացության հիմքում դրված է ամուսնու (կնոջ) ցուցմունքը:

Հարցաքննությունը սկսվում է նրանով, որ առաջարկվում է վկային պատմել գործով իրեն հայտնի ամեն ինչ, որից հետո նրան կարող են հարցեր տրվել:

Փաստաբանների վերլուծություններից կարելի է եզրակացնել, որ վկաների հարցաքննության ընթացքում հաճախ քննիչը ուղղորդող հարցեր է տալիս, թելադրում է ցուցմունքը կամ ինքն է գրառում վկայի ցուցմունքը, որի տակ վկան միայն ստորագրում է: Փաստաբանների կողմից հիշատակվում են նույնիսկ դեպքեր, երբ քննիչը, օգտվելով վկայի անգրագիտությունից և տառաճանաչ չլինելուց, ինքն է գրառել վկայի ցուցմունքը, որի տակ անգրագետ անձը դրել է «X» նշանը: Քննիչի կողմից գրառված ցուցմունքների հիման վրա տվյալ վկան դարձել է կասկածյալ, մեղադրյալ և հետագայում դատապարտվել մեկուկես տարվա ազատազրկման:

⁶¹ Տե՛ս օրինակը հավելված 5-ում:

Նշվել են նաև այնպիսի դեպքեր, երբ վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, սակայն քննիչը վկայի ցուցմունքները գրառելու ընթացքում նրան տրվող հարցերը շարունակ այնպես է ձևակերպել, որ ուղղորդել է վկայի ցուցմունքը: Փաստաբանների կողմից ներկայացվել է նաև մի գործ, երբ նույն անձը նույն օրը և նույն քրեական գործի փաստական հանգամանքների կապակցությամբ հարցաքննվել է որպես վկա 2 անգամ՝ երկու ժամ ընդմիջմամբ: Երկու ցուցմունքներն էլ գրառել է անձամբ վկան, սակայն առաջին ցուցմունքի մեջ վկան գրում է. «Դռնին խփեցին, բայց չեմ տեսել, թե ով խփեց », իսկ երկրորդ ցուցմունքում գրված է. «Կրծքավանդակի ձախ վերին հատվածում սուր ծակող գործիքով հասցվեց վնասվածք համապատասխան անձի կողմից»: Նշված երկու արձանագրությունների միջև ակնհայտ տարբերություն կա, որը կարող է բացատրվել միայն քննիչի կողմից ցուցմունքի թելադրման հանգամանքով:


Մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ:

Հարցաքննությունը սկսելուց առաջ անչափահաս վկայի օրինական ներկայացուցչին բացատրում են ... նրա իրավունքները, ինչպես նաև՝ պարտականությունները:

Փաստաբաններն իրենց վերլուծությունների մեջ հիշատակել են մեծ թվով գործեր՝ անչափահաս վկայի հարցաքննության իրականացման ընթացքում կատարված բազմաթիվ խախտումներով: Մասնավորապես, գործերից մեկում, առանց մանկավարժի մասնակցության, որպես վկա հարցաքննվել է 14-ամյա անչափահաս: Հարցաքննությունն իրականացվել է ծնողի մասնակցությամբ, սակայն արձանագրության ներածական մասում այդ մասին նշում չկա, չի նշվել նաև ծնողին նրա իրավունքների ու պարտականությունների տեղեկացման մասին: Քրեական գործում չի երևում, թե ինչպես և ով է անչափահաս վկաներին հրավիրել հարցաքննության:

Նմանապես, թե՛ անչափահաս վկային և թե՛ նրա օրինական ներկայացուցչին չեն բացատրում նրանց՝ քրեական դատավարությամբ նախատեսված իրավունքներն ու պարտականությունները: Մեկ այլ օրինակ. որպես վկա հարցաքննված երկու անչափահասների հարցաքննությանը, ըստ արձանագրության, մասնակցել է նրանց մայրը, սակայն դատաքննության ընթացքում նա հայտարարել է, որ ներկա չի գտնվել ամբողջ հարցաքննությանը և ծանոթ չէ ցուցմունքների բովանդակությանը: Հարցաքննության արձանագրությունում նաև չի նշվել, թե որտեղ է իրականացվել հարցաքննությունը, մինչդեռ դատաքննության ընթացքում մայրը հայտնել է, որ հարցաքննությունն իրականացվել է տուժողի տանը, այսինքն՝ չի պահպանվել վկաների թե՛ տուժողից և թե՛ այլ վկաներից առանձին հարցաքննելու սկզբունքը:

Վկայի իրավական պաշտպանության ապահովումը




ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետը սահմանում է փաստաբանի ներկայությամբ վկայի հարցաքննության հնարավորությունը, որով սահմանափակվում է ոչ միայն վկայի արդյունավետ պաշտպանության իրավունքը, այլև վկայի հարցաքննության

Ժամանակ փաստաբանի՝ որպես պաշտպանի լիարժեք մասնակցության հնարավորությունը: Փաստորեն, հարցաքննությանը ներկա փաստաբանը իրավունք չունի որևէ կերպ միջամտելու, մեկնաբանելու իր վստահորդին ուղղված հարցերը կամ հարցաքննության ընթացքում իրավական աջակցություն ցույց տալու իր վստահորդին: Հնարավորություն չունենալով միջամտելու հարցաքննության ընթացքին, որպես կանոն, հարցաքննության արձանագրության վերջում փաստաբանը նշում է կատարում՝ շարադրելով հարցաքննության ընթացքի մասին իր դիտողությունները:

Օրենսդրությունը չի նախատեսում հանրային պաշտպանի մասնակցությունը սոցիալապես խոցելի խավի ներկայացուցիչ վկայի հարցաքննության համար:


2010 թ. օգոստոսի տվյալներով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիր ստացած 88 փաստաբան կա, որոնցից հարցմանը մասնակցել է 33 փաստաբան: Այդ 33 փաստաբաններից միայն 12-ն են հանդես եկել որպես վկայի փաստաբան: Նման ցածր թիվը պայմանավորված է, ըստ երևույթին, քաղաքացիների ցածր իրավագիտակցության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերջին տարիների կատարված փոփոխության վերաբերյալ իրազեկության պակասով, որով նախատեսված է, որ վկան հարցաքննությանը փաստաբան հրավիրելու իրավունք ունի:



Քննիչների պարզաբանումներով՝ փաստաբանների մասնակցությունը վկաների հարցաքննությանը շատ փոքր տոկոս է կազմում, իսկ որոշ համայնքներում իսպառ բացակայում է: Միաժամանակ 33 փաստաբաններից 25-ը կարևորում են վկայի իրավական պաշտպանության ապահովումը: Ընդ որում, 25 փաստաբաններից 10-ը դա հիմնավորում են արդարադատության շահերից ելնելով և օրյեկտիվ նախաքննություն ապահովելու անհրաժեշտությամբ, իսկ 8-ը՝ նախաքննության մարմնի կողմից վկայի նկատմամբ հնարավոր ճնշումների բացառման նպատակով:

Նշված հիմնավորումները բխում են փաստաբանների փորձից. այն դեպքերում, երբ վկայի հարցաքննությանը փաստաբան է մասնակցել, նախաքննություն իրականացնող մարմնի կողմից թույլ տրվող խախտումները հասել են նվազագույնի կամ իսպառ բացառվել են, կամ էլ հետագա բողոքարկման համար ստեղծվել են անհրաժեշտ իրավական հիմքեր, որոնց միջոցով գործի դատական քննության ընթացքում խախտումներով ձեռք բերված ապացույցները ճանաչվել են անթույլատրելի:


Վկաների նկատմամբ ճնշումների դրսևորումներ




Վերլուծությանը մասնակցած 12 փաստաբաններից որպես վկայի փաստաբան հանդես եկած 9 փաստաբան նշում է վկայի իրավունքների խախտումների մասին: Վերլուծված 62 գործերում որպես վկայի իրավունքների խախտումներ նշվել են հետաքննության

կամ նախաքննության մարմնի կողմից վկաների նկատմամբ կիրառված հետևյալ ճնշումները.

- ա) հոգեբանական ճնշումներ/սպառնալիք,
- բ) ֆիզիկական բռնություններ,
- գ) խաբեությամբ ցուցմունքների կորզում,
- դ) առանց իրավական հիմքի ոստիկանությունում պահելը,
- ե) առանց մանկավարժի կամ օրինական ներկայացուցչի մասնակցության անչափահաս վկայի հարցաքննություն,
- զ) առանձնացված պայմաններում վկայի հարցաքննության չապահովում (հարցաքննությունն իրականացվել է տուժողի տանը, մյուս վկաների ներկայությամբ),
- է) վկային թարգմանիչ չտրամադրելը,
- ը) գիշերային ժամին, առանց օրինական ներկայացուցչի, ոստիկանության մի քանի աշխատակցի մասնակցությամբ անչափահաս վկայի հարցաքննություն,
- թ) առանց համապատասխան մասնագետի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող վկայի հարցաքննություն,
- ժ) վկայի ապօրինի ազատազրկում ԱԱԾ նկուղում (ՁՊՎ-ում),
- ի) զինվորական բնույթի հանցագործությունների վկաներին ՊՆ ենթակայության տակ պահելը,
- լ) վկային «օպերատիվ մշակման» ենթարկելը:



Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վկայի կողմից հարցաքննությանը ներկայացած փաստաբանը իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները: Վկայի իրավունքների խախտման դեպքում փաստաբանն իրավունք ունի հայտարարություններ անելու, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրության մեջ: Այսինքն՝ վկայի փաստաբանը, ի տարբերություն կասկածյալի կամ մեղադրյալի փաստաբանի, էապես սահմանափակված է իր գործառույթների իրականացման հարցում: Մասնավորապես, վկայի հարցաքննության արձանագրությունը կամ հարցաքննության ընթացքը վկայի փաստաբանի կողմից բողոքարկելու համար օրենսդիրը մեխանիզմ կամ հնարավորություն չի սահմանում:



Այսպիսով, վկայի փաստաբանը պետք է կա՛մ որպես առանձին հանցագործություն բողոքարկի վկայի նկատմամբ ճնշումներ գործադրած իրավապահ մարմնի ապօրինի գործողությունները ընդհանուր հիմունքներով, կա՛մ կիրառի իրավապաշտպանական միջոցներ:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ վկաների նկատմամբ ճնշումների կամ նրանց իրավունքների խախտումների առնչությամբ փաստաբանների կողմից կիրառված գործողությունները՝ բողոքները, միջնորդությունները հաճախ մնում են անհետևանք: Սակավ դեպքերում է, որ բողոքարկման արդյունքում իրականացվում է պատշաճ քննություն, և վկան հնարավորություն է ունենում տալու չպարտադրված ցուցմունքներ: Արձանագրվել են առանձին դեպքեր, երբ վկաների նկատմամբ ճնշումների գործադրման միջոցով ստացված ցուցմունքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից համարվել են անթույլատրելի: Ուսումնասիրված

գործերից 2-ում է ապացույցների անթույլատրելիության վերաբերյալ միջնորդությունը բավարարվել ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Ուսումնասիրության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն պատճառներին, որոնց հետևանքով չեն վերականգնվել վկայի խախտված իրավունքները: Դրանք են՝

ա) անձը չի ցանկացել,

բ) նախաքննության փուլում գտնվող գործով վկայի փաստաբանը խախտված իրավունքի վերականգնման որևէ արդյունավետ միջոց չի տեսել:

Ուսումնասիրության ընթացքում վերլուծվել են նաև այնպիսի գործեր, որոնցով մեղադրյալի փաստաբանը հայտնել է, որ ապացույցների ձեռքբերման օրինականությունը վիճարկելու է դատաքննության ընթացքում: Վկաների նկատմամբ կիրառված ճնշումների միջոցով ձեռք բերված ապացույցների բողոքարկման գործընթացը դժվարանում է, երբ նախաքննության և դատաքննության փուլերում ներգրավված են տարբեր փաստաբաններ:


Այսպիսով, գոյություն ունեցող բողոքարկման ընդհանուր մեխանիզմները լիարժեք չեն կիրառվում, ինչը պայմանավորված է ինչպես քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակով, այնպես էլ արդարադատության նկատմամբ անվսահույթամբ:

Վկաների անվտանգության ապահովումը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»:

ՀՀ Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում փաստաբանական գործունեություն ծավալող 88 փաստաբանից 33-ը նշել են, որ իրենց մասնակցությամբ գործերով անցնող վկաների համար անվտանգության միջոցառումների կիրառման անհրաժեշտություն չեն տեսել:


Միաժամանակ հարցմանը մասնակցած բոլոր փաստաբանները կարծում են, որ օրենսդրությամբ սահմանված անվտանգության միջոցները իրականացման մեխանիզմ չունեն (օրենսդրությունը չի նախատեսում, թե ինչպես են կիրառվում անվտանգության միջոցները), ուստի տվյալ օրենսդրական նորմը դառնում է անօգուտ ու անիմաստ: Իրենց



մասնակցած գործերում փաստաբանները նշում են, որ առավել հաճախ որպես պաշտպանության միջոց կիրառվում են նախազգուշացումը և անձի տվյալների գաղտնագրումը: Բացարձակապես չի կիրառվել պաշտպանվող անձի փաստաթղթերի կամ արտաքինի փոփոխության հնարավորությունը:

Ուսումնասիրված գործերից մեկով փաստաբանը միջնորդել է գործով որպես դեռևս վկա ներգրավված անձի նկատմամբ որպես պաշտպանության միջոց կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98¹ հոդվածով նախատեսված բնակության վայրի փոփոխումը: Ի դեպ, գործը վերաբերում էր զինվորական

հանցագործությանը, տվյալ դեպքում մի քանի անձանց սպանության գործով անցնող անձր, որ այդ պահին վկայի կարգավիճակ ուներ, բուժում էր անցնում X քաղաքում: Երբ տվյալ վկայի նկատմամբ իրական սպառնալիք կար, փաստաբանի միջնորդության հիման վրա և քննիչի որոշմամբ անձը տեղափոխվել է մեկ այլ քաղաքի համապատասխան բժշկական հաստատություն: Այդ ընթացքում տվյալ անձը ստացել է կասկածյալի կարգավիճակ և առանց որևէ հիմնավորման՝ նորից տեխափոխվել X քաղաք: Ի դեպ, քննիչի այս գործողությունը փաստաբանի կողմից չի բողոքարկվել դրա անհեռանկարային լինելու պատճառաբանությամբ:



5.4. Քննիչների շրջանում անցկացված հետազոտությունը

Ներկա ուսումնասիրության շրջանակներում նախատեսվում էր հարցազրույցներ անցկացնել Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննչական բաժինների/բաժանմունքների քննիչների հետ: Այդ նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ ոստիկանապետին նամակ է հղել՝ Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի քննչական բաժիններում/բաժանմունքներում ոչ միայն դիտարկումներ, այլև քննիչների հետ հարցազրույցներ անցկացնելու համար թույլտվություն ստանալու նպատակով: Կազմակերպության գրությունը ՀՀ ոստիկանապետը վերահասցեագրել է ՀՀ գլխավոր քննչական վարչություն: Վերջինս ՀՔԱ Վանաձորի գրասենյակին իր գրությամբ հայտնել է, որ «քննիչների հետ հարցազրույցների հարցաթերթիկները ՀՀ գլխավոր քննչական վարչությունը կտրամադրի թիրախային 3 մարզերում աշխատող քննիչներին և լրացված վիճակում կվերադարձնի կազմակերպությանը»: Կազմակերպությունը հարցաթերթիկն ուղարկեց ՀՀ գլխավոր քննչական վարչություն, սակայն ՀՀ գլխավոր քննչական ծառայությունը հայտնեց, որ հարցաթերթիկի 1-5-րդ հարցերը⁶² համարվում են ծառայողական գաղտնիք, և այդ հարցերի վերաբերյալ պատասխաններ չեն կարող տրամադրվել, իսկ քանի որ 6-35-րդ հարցերի պատասխանները⁶³ սահմանվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա այդ հիմքով այս հարցերին պատասխաններ չեն տրամադրվի: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ գլխավոր քննչական վարչությունից ստացավ լրացված հարցաթերթիկներ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ: Քննիչների կողմից լրացված հարցաթերթիկներն իրենց բովանդակությամբ և ձևակերպումներով հիմնականում նույնական էին⁶⁴:

Հարցաթերթիկներում առաջադրված հարցերին քննիչները տվել են հետևյալ պատասխանները.

1. Ձեռնարկվել է արդյոք պաշտպանության միջոց և քանի՞ անգամ

⁶² Այդ հարցերն են. 1. Որքա՞ն ժամանակ եք աշխատում որպես ոստիկանության քննիչ, 2. Վերջին մեկ տարվա ընթացքում (2010 թ.) ընդհանուր առմամբ քանի՞ գործ եք վարել, 3. Ինչպե՞ս են բաշխվում գործերը քննիչների միջև, 4. Եղե՞լ են դեպքեր, երբ Դուք հրաժարվեք գործի քննությունից, 5. Եթե այո, ապա ի՞նչ հիմքով:

⁶³ Այս հարցերը վերաբերում են վկա ներգրավվելու և հարցաքննելու պրակտիկային:

⁶⁴ Այս սկզբունքից բացառություն է կազմել միայն մեկ տոկոսը. 79 հարցաթերթիկներից միայն մեկն է իր բովանդակությամբ փոքրիշատե տարբերվել մյուսներից:

Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի 79 հարցված քննիչներից միայն մեկն է, որ իր գործունեության ընթացքում մինչև 5 անգամ վկայի պաշտպանության միջոց է կիրառել:

2. Պաշտպանության միջոցի վերաբերյալ որոշման հիմքը և պատճառը

Կիրառված պաշտպանության միջոցի հիմքը եղել է վկայի դիմումը, որում նա հիմնավորել է այն հնարավոր վտանգները կամ սպառնալիքները, որոնք կարող են առաջանալ ցուցմունքներ տալու դեպքում: Քննիչի կողմից վկայի պաշտպանության միջոցը կիրառվել է գործի արդյունավետ քննության նպատակով: Ի դեպ, քննիչների շրջանում կարծիք կա, որ նախաքննության արդյունավետության ապահովման համար հանցավոր աշխարհի չգրված օրենքների ազդեցությունը չեզոքանելու լավագույն տարբերակ կարող է լինել անձի գաղտնագրումը՝ որպես անձի պաշտպանության միջոց:

3. Վկայի պաշտպանության համար ամենահաճախ օգտագործվող միջոցը

Նշված եզակի դեպքերում, երբ ընտրվել է վկայի պաշտպանության միջոց, կիրառվել է պաշտպանվող անձի տվյալների գաղտնագրում: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2011 թ. մի գործով, չնայած պաշտպանական կողմի բազմաթիվ միջնորդություններին, այն է՝ գաղտնագրեժել վկայություն տված անձի տվյալները և հավասար զենքերի իրավունքի ուժով պաշտպանական կողմին տալ մեղադրվող անձի դեմ ցուցմունք տված անձին հարցաքննելու իրավունք, մերժել է և չի գաղտնագրեժել քննիչի որոշմամբ պաշտպանության տակ առնված անձի տվյալները:

4. Հանցագործության տեսակը, որի դեպքում նախաձեռնվում է պաշտպանության միջոց

Վերը նշված քննիչի կողմից որպես պաշտպանության միջոց կիրառվել է առողջության դեմ ուղղված հանցագործության վկայի նկատմամբ: Հարկ է նկատել, որ առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքն են դասվում ինչպես ոչ մեծ ծանրության հանցագործությունները, օրինակ՝ «Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը», այնպես էլ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունները, մասնավորապես՝ ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն կամ բռնաբարություն հանցագործությունները: Ի դեպ, աշխարհի գրեթե բոլոր երկրներում, որտեղ գործում են վկաների պաշտպանության ծրագրեր կամ օրենսդրություն, այն տարածվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով անցնող վկաների վրա, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 98¹ հոդվածը չի հստակեցնում, թե որ գործերով անցնող վկաները կարող են ստանալ պաշտպանություն միջոց:

5. Կա՞ն արդյոք վկայի պաշտպանության մեխանիզմներ

Հարցաթերթիկները լրացրած քննիչների 61%-ը նշել է, որ վկայի պաշտպանության ապահովման մեխանիզմներ կան, իսկ 39%-ը կարծում է, որ դրանք մասամբ են առկա, այսինքն՝ ոչ ոք չի նշել այդ մեխանիզմների բացակայության մասին: Այս կապակցությամբ նկատենք, որ վկայի պաշտպանության միջոցները սահմանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 25.05.06 ՀՕ-91-Ն լրացմամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98¹ հոդվածում նաև սահմանվում է. «Պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»: Սակայն մինչ օրս նման իրավական փաստաթուղթ չի ընդունվել:

6. Միջոցի կիրառումն ապահովող մարմինը

Հարցմանը մասնակցած քննիչները որպես վկայի պաշտպանությունն ապահովող մարմին նշել են քրեական հետապնդում իրականացնող մարմինը, իրավապահ մարմինը և քննիչը: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 3-րդ կետով

շահագրգիռ այլ անձանց կողմից գործադրվող ճնշումները երբեմն ավելի մեծ են, քան կասկածյալի կամ մեղադրյալի դեպքում:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն, որը հնարավորություն կընձեռի, մասնավորապես, անվճարունակ վկաներին օգտվելու հանրային պաշտպանի ծառայություններից:

Խնդիր բ) Սահմանված չէ անձին որպես վկա ներգրավելու կարգը (անձի նախաձեռնությամբ տվյալ դեպքի վերաբերյալ վկայություն տալու կամ քննիչի կողմից որպես վկա կանչվելու և հարցաքննվելու մասով):

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով նախատեսված է, որ վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող անձինք են դատավարության մասնակիցները, ընթերական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, վկան: Հատկանշական է, որ մասնակցող անձանց գործում ներգրավվելու համար քննիչը որոշում է կայացնում (բացառություն են կազմում գործին մասնակցող հետևյալ անձինք, որոնց գործին ներգրավվելու համար քննիչը որոշում չի կայացնում՝ ընթերական, ով մասնակցում է քննիչի որոշման հիման վրա իրականացվող քրեադատավարական գործողությանը և դատական նիստի քարտուղարը, ով մասնակցում է դատաքննությանը՝ ի կատարումն իր աշխատանքային պարտականությունների), բացառությամբ վկայի: Նման վերաբերմունքը որևէ կերպ հիմնավորված չէ, ավելին, այն չարաշահումների տեղիք կարող է տալ:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որով նախատեսվի, որ վկան գործով ներգրավվում է քննիչի որոշման հիման վրա:

Խնդիր գ) Սահմանված չեն նյութերի նախապատրաստման փուլում անձի կողմից բացատրություններ տալու կարգը, բացատրություն տվող անձին բացատրություններ տալու համար կանչելու կարգը, բացատրություն տվող անձի իրավունքները:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածը նախատեսում է. «1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգվելու

անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: 2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ...»: Այս դրույթի ընդհանրական բնույթը չարաշահումների տեղիք կարող է տալ, քանի որ նյութերի նախապատրաստման փուլում անձից, առանց իրավական կարգավիճակի, վերցնում են բացատրություններ, սակայն այդ պահին բացատրություն տվող անձը փաստացի վկայի կարգավիճակում է՝ զրկված վկայի համար նախատեսված իրավունքներից, մասնավորապես՝ բացատրություններ տալուն փաստաբանի հետ ներկայանալու իրավունքից: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը որևէ ընթացակարգ չի սահմանում, թե ինչպես է անձը կանչվում ոստիկանություն բացատրություններ տալու համար, արդյոք վկան իրավունք ունի՞ հրաժարվելու բացատրություն տալուց, ով, որտեղ և ինչ տևողությամբ կարող է բացատրություններ վերցնել անձից, ով կարող է հանդիսանալ բացատրություններ տվող անձ և այլն: Նման չկարգավորվածությունն ինքնին չարաշահումների տեղիք է տալիս, և չնայած նրան, որ բացատրությունները չեն դրվում ապացույցների հիմքում, փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նյութերի նախապատրաստման փուլում կարգավիճակ, հետևաբար և դատավարական որևէ իրավունք չունեցող անձից վերցված բացատրություններով նախաքննության մարմինը կառուցում է քրեական գործ, ինչն ինքնին օրինական և իրավաչափ չէ:

- | | |
|---------------------|---|
| Օրենսդրական առաջարկ | ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որը կբացառի նախաքննության փուլում անձից բացատրություններ վերցնելը՝ առանց իրավական կարգավիճակի և հստակ սահմանված իրավունքների: |
| Խնդիր | դ) Սահմանված չէ քննչական բաժին անձանց, մասնավորապես՝ վկաների մուտքի և ելքի գրանցումը: |
| Ազդեցություն | Վկաների ելումուտը քննչական բաժիններ չի գրանցվում: ՀՀ օրենսդրությունը նման պահանջ չի էլ սահմանում, սակայն հաշվի առնելով ներկայիս պրակտիկան, երբ անձը կարող է տարվել ոստիկանություն, այնտեղ պահվել ժամեր կամ մի քանի օր շարունակ՝ առանց որևէ գրանցման, և այն դեպքերում, երբ քաղաքացին փորձում է վիճարկել իր նկատմամբ վատ վերաբերմունքի փաստը, որևէ արձանագրություն չի ունենում այն մասին, որ տվյալ ժամանակահատվածում գտնվել է ոստիկանության քննչական բաժնում կամ բաժանմունքում: |
| Օրենսդրական առաջարկ | ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որով քննչական բոլոր բաժիններ մուտք գործող և բաժիններից դուրս |

եկող բոլոր անձինք, մասնավորապես՝ վկաները կգրանցվեն համապատասխան անցակետում՝ ստանալով անցագիր, որի վրա հստակ նշված կլինի անձի մուտքի և ելքի ժամերը, այցի նպատակը, ում մոտ գնալը և ինչպես (ներկայացել է, թե բերվել է ոստիկանության աշխատակցի, փաստաբանի կամ այլ անձի ուղեկցությամբ):

Խնդիր ե) Սահմանափակ են վկայի փաստաբանի՝ որպես պաշտպանի լիազորությունները նախաքննության փուլում վկայի հարցաքննությանը մասնակցելիս:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Սակայն ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունը նաև ներառում է քրեական գործերով պաշտպանությունը: Ինչը ենթադրում է, որ իր գործունեության բնույթով փաստաբանը իրականացնում է անձանց իրավունքների պաշտպանություն ցանկացած պարագայում և գործում է որպես պաշտպան: Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսում է, որ «եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, որը հրավիրվում է վկայի կողմից՝ վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները»: Այս դրույթով փաստաբանի՝ որպես պաշտպան հանդես գալու գործառնությունների սահմանափակումը անհիմն է և տարբերակված վերաբերմունք է դրսևորում քրեական դատավարության մասնակից այլ կարգավիճակ ունեցող անձանց համեմատ:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որը հնարավորություն կընձեռի փաստաբանին վկայի համար ևս հանդես գալու որպես պաշտպան:

Խնդիր զ) Սահմանված չէ հարցաքննությանը մասնակցելու նպատակով վկայի կրած ծախսերի, մասնավորապես՝ ճանապարհաճախսի հատուցման ընթացակարգը:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ կետի 8-րդ մասի համաձայն՝ վկան իրավունք ունի ստանալու քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում: Այսպիսի ծախսերի մեջ է մտնում, մասնավորապես, վկայի՝ հարցաքննության մասնակցելու

համար կրած ճանապարհաձախսը: Այնուամենայնիվ, օրենսդրությունը չի նախատեսում, թե ում է ներկայացվում դիմումը ճանապարհաձախսի փոխհատուցման պահանջով, ով է այդ մասին կայացնում որոշում, ինչ միջոցների հաշվին է այդ փոխհատուցումը կատարվում և այլն: Գործնականում վկան դիմում է ներկայացնում գործով քննիչին՝ պահանջելով ճանապարհաձախսի փոխհատուցում: Սովորաբար քննիչներն այդ գումարը քաղաքացուն վճարում են կա՛մ սեփական միջոցների հաշվին, կա՛մ էլ գրությամբ հայտնում են, որ վկայի ճանապարհաձախսի հարցը կլուծի դատարանը գործով վերջնական վճիռ կայացնելիս: Այնուամենայնիվ, հարց է առաջանում՝ իսկ ինչպես է լուծվում վկայի ճանապարհաձախսի խնդիրն այն դեպքերում, երբ հարուցված քրեական գործը կարճվում է, օրինակ, նախաքննության փուլում:

- Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որով հստակ կսահմանվի քննիչի կողմից պարտադիր որոշման կայացումը պետական միջոցների հաշվին վկայի՝ հարցաքննությանը մասնակցելու համար կրած ծախսերի փոխհատուցման վերաբերյալ:
- Խնդիր Է) Քրեական դատավարությանը մասնակցող անձանց, մասնավորապես՝ վկայի պաշտպանության ապահովման համար ընթացակարգերը սահմանված չեն:
- Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25.05.06 ՀՕ-91-Ն փոփոխությամբ օրենսգիրքը համալրվել է 981 հոդվածով, որով սահմանվել է, մասնավորապես, վկայի պաշտպանության միջոցների ցանկ: Նույն հոդվածում նշվում է, որ պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Ինչը ենթադրում է, որ պետք է հստակ սահմանվի, թե ով, ինչ հանցագործությունների կապակցությամբ, ինչ ընթացակարգով և ում է իրավասու դիմելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 981 հոդվածով նախատեսված պաշտպանություն ստանալու նպատակով: Ինչպես նաև պետք է հստակ սահմանվի, թե ով է իրավասու որոշում կայացնելու պաշտպանության միջոցի կիրառման մասին, ում միջոցով է իրականացվում ընտրված պաշտպանության միջոցի ապահովումը, ինչ ֆինանսական միջոցների հաշվին և այլն: Ավելին, տվյալ օրենսդրությունը պետք է նաև սահմանի այն ընթացակարգը, որով նախատեսվում է պաշտպանության միջոց կիրառած անձի հարցաքննությունը պաշտպանական կողմի համար: Քանի որ նման օրենսդրություն մինչ օրս ՀՀ-ում չի ընդունվել, բաց են մնում այն բոլոր ընթացակարգային հարցերը, որոնք պետք է կարգավորվեն ընդունվելիք օրենսդրությամբ:

Օրենսդրական առաջարկ Հայաստանի Հանրապետությունում ընդունել վկաների պաշտպանության մասին օրենք՝ համապատասխան ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի կողմից ընդունված «Տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին» մոդելային օրենքին:

Խնդիր ը) Անչափահաս վկայի հարցաքննության համար սահմանված չէ հատուկ ընթացակարգ:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի համաձայն՝ «անչափահաս վկան ... անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ»: Սակայն օրենսդիրը չի մասնավորեցնում, թե անչափահաս վկան ինչ կարգով է կանչվում հարցաքննության: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկան հարցաքննության է կանչվում ծանուցագրով: Նույն հոդվածի 4-րդ մասում ասվում է, որ արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: Նշված հոդվածը, սակայն, հայեցողական է և պարտադիր չէ: Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքում բացահայտված այն հանգամանքը, որ վկաները կանչվում են հարցաքննության հիմնականում հեռախոսագանգով, կարելի է ենթադրել, որ ավելի է մեծանում օրինական ներկայացուցչի անտեղյակության պայմաններում անչափահաս վկային հարցաքննության կանչելու հավանականությունը: Տվյալ պարագայում անչափահաս վկային, որը չի կարող գիտակցել իր քաղաքացիական, այսինքն՝ ցուցմունք տալու պարտականությունը, ինչպես նաև ցուցմունք չտալու կամ տալու հետևանքները, իրավաչափ չէ անձամբ ծանուցել հարցաքննության ներկայանալու պահանջի մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը ... իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան»: Այնինչ կարևոր է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը նախատեսում է, որ քաղաքացու՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու ունակությունը լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ 18 տարեկան դառնալու պահից: Ենթադրվում է, որ օրենսդիրը նման դրույթ է սահմանել՝ հաշվի առնելով որոշակի տարիքային խմբի

առանձնահատկությունները, մասնավորապես՝ նրանց՝ իրենց իրավունքների պարտականությունների ողջ ծավալը գիտակցելու կարողությունը, ինչպես նաև ցանկացած գործողության հետևանքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 16 տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին: Այս դրույթից կարելի է հետևություն անել, որ անչափահաս վկան տեղեկացվում է միայն ցուցմունք տալու պարտականության մասին, անտեսվում են մյուս բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Նման իրավիճակում անչափահաս վկան, չգիտակցելով իր գործողությունների հետևանքները և չօգտվելով իր իրավունքներից (օրինակ՝ իր հարազատների դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու և այլն), ինչպես նաև հարցաքննվելով առանց իր օրինական ներկայացուցչի մասնակցության, կարող է ենթարկվել հոգեբանական և այլ ճնշումների և տալ պարտադրված ցուցմունքներ:

Օրենսդրական
առաջարկ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ, որոնցով կսահմանվեն հստակ ընթացակարգեր անչափահաս վկայի հարցաքննության համար, մասնավորապես կնախատեսվի որ՝

- 1) անչափահաս վկան հարցաքննության է կանչվում միայն իր օրինական ներկայացուցչի միջոցով, պատշաճ ծանուցմամբ,
- 2) անչափահաս վկայի հարցաքննությունը պարտադիր է իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի և ծնողի կողմից հրավիրված մանկավարժի մասնակցությունը,
- 3) անչափահասի հարցաքննությունն անընդմեջ չի կարող տևել ավելին քան 2 ժամ
- 4) անչափահաս վկայի հարցաքննությունն սկսելուց առաջ նրան և նրա օրինական ներկայացուցչին երեխային հասկանալի լեզվով բացատրվում են վկայի բոլոր իրավունքները և պարտականությունները:

Խնդիր

թ) Քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում բերման ենթարկված վկայի իրավունքները, իրավունքների սահմանափակման սահմանները և սահմանափակման կարգը:

Ազդեցություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ ծանուցագրով հարցաքննության կանչված վկան,

առանց հարգելի պատճառի, խուսափում է ներկայանալ հարցաքննության, քննիչը իրավունք ունի նրան բերման ենթարկելու վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնել: Վկայի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցի հետևանքով նա զրկվում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքից: Մինչդեռ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ-----հոդվածի համաձայն՝ ազատազրկումը պիտի իրականացվի բացառապես դատարանի որոշման հիման վրա: Բացի այդ, քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է, որ նման դեպքում քննիչի կողմից վկայի իրավունքները ենթակա են սահմանափակման: Սակայն օրենսդրությունը չի սահմանում, թե որ իրավունքները, ինչ կարգով, ինչ հիմնավորմամբ և ինչ ժամանակահատվածում կարող են սահմանափակվել: Օրենսդրական նման կարգավորումների բացակայության պարագայում քննիչի կողմից հաճախ դրսևորվում են չարաշահումներ թե՛ վկային բերման ենթարկելու, թե՛ նրա իրավունքների սահմանափակման առումով:

Օրենսդրական առաջարկ 22 քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որի շնորհիվ վերացնել քննիչի՝ վկային բերման ենթարկելու համար որոշում կայացնելու լիազորությունը, և վկային բերման ենթարկելը թույլատրել միայն դատարանի որոշման հիման վրա:

Խնդիր ժ) Սահմանված չեն վկայի հարցաքննության նվազագույն պայմանները:

Ազդեցություն 22 քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ վկան հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, սակայն չի հստակեցնում, թե որտեղ: Դիտարկումների արդյունքում հստակ է դարձել, որ հարցաքննությունները (բացառություն են կազմում ձերբակալված և կալանավորված անձանց հարցաքննությունները, քանի որ դրանք անցկացվում են ձերբակալված անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում) իրականացվում են քննիչների աշխատասենյակում: Հատկանշական է, որ հարցաքննությունների ժամանակ որոշ քննիչներ ներսից կողպում են դուռը, ինչն ինքնին հոգեբանական ճնշում է գործադրում վկաների վրա, իսկ այն դեպքերում, երբ դուռը չի կողպվում, ապա ցանկացած անձ, այդ թվում նաև տուժողը, կասկածյալը կամ մեղադրյալը, կարող է բացել քննիչի աշխատասենյակի դուռը և տեսնել այդ պահին հարցաքննվող վկային, ինչը հենց վկայի անվտանգության տեսանկյունից կարող է մտահոգություն առաջացնել:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ, որոնք կսահմանեն վկայի հարցաքննության իրականացումը հարցաքննության սենյակներում: Միաժամանակ անհրաժեշտ է, որ բոլոր քննչական բաժիններում/բաժանմունքներում ստեղծվեն հարցաքննության սենյակներ, որտեղ տեղադրված կլինեն տեսաձայնագրող համակարգեր (այդ համակարգը պետք է գործի կենտրոնացված և չի կարող անջատվել քննչական բաժնի ներսից), որոնց ձայնագրատման առկայությունը անհրաժեշտ նախապայման է սովյալ ցուցմունքը քրեական գործով թույլատրելի համարելու համար:

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

Խնդիր ի) Վկաները հարցաքննության են կանչվում առանց ծանուցագրի հիմնականում՝ հեռախոսազանգով:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վկան ... քննիչի մոտ կանչվում է ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև՝ անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները: Գործնականում վկաները հարցաքննության են կանչվում հեռախոսազանգի միջոցով, և անձին միայն հայտնվում է քննիչի մոտ հարցաքննության մասին: Դեռ ավելին, լայնորեն օգտագործվում է տեղամասային տեսուչների միջոցով վկաներից հարցաքննության ներկայանալու մասին պարտավորագրեր վերցնելու պրակտիկան: Նման իրավիճակում վկան, բացարձակապես անտեղյակ լինելով իրեն քննչական բաժնի կանչելու հիմքերի մասին, արդեն իսկ հայտնվում է հոգեբանորեն ճնշված վիճակում: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ վկան կարող է կանչվել քննչական բաժնի և հարցաքննվել մի քանի տարբեր գործերի փաստական հանգամանքների կապակցությամբ, երբ շատերի հետ անձը երբևէ որևէ առնչություն չի էլ ունեցել:

Գործնականի հետ կապված առաջարկ Քրեական գործի նյութերին պարտադիր կցել վկային հարցաքննության կանչելու ծանուցագիրը, որի առկայության պայմաններում միայն վկայի ցուցմունքը կհամարվի թույլատրելի:

Խնդիր լ) Վկան բերման է ենթարկվում հարցաքննության առանց իրավական հիմքերի:

Ազդեցությունն Օրենսդրությունը չի հստակեցնում վկային բերման ենթարկելու հիմքերը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը սահմանում է անձին բերման ենթարկելը: Մասնավորապես նշվում է, որ «1. Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող ... վկային ... հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է...: 2. Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա»: Այստեղ կարևոր է ընդգծել, որ ամրագրված է՝ «առանց հարգելի պատճառի քննության չներկայացող» հասկացությունը, սակայն չի նշվում, թե հարցաքննության մասին ինչ կարգով (պատշաճ կարգով, այն է՝ ծանուցագրով տեղեկացված) տեղեկացված վկան է, ով հրաժարվում է ներկայանալ քննչական բաժին և կարող է բերման ենթարկվել: Մտահոգությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ դեպքերում, երբ քննիչը հեռախոսազանգով վկային կանչում է հարցաքննության, իսկ վերջինս հայտնում է, որ պահանջում է ծանուցագիր որպես վկա ցուցմունք տալու հրավիրվելու մասին, քննիչը, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասին վրա և պնդելով, որ վկան առանց հարգելի պատճառի չի ներկայացել հարցաքննության, նրան բերման ենթարկելու մասին որոշում է կայացնում: Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես՝ այն դրույթը, համաձայն որի՝ «բերման ենթարկելը կատարվում է ...պատճառաբանված որոշման հիման վրա», մեծ հիմնականում անտեսվում է, և բերման ենթարկելու որոշումները սովորաբար ունենում են միանման բովանդակություն:

Գործնականի հետ կապված առաջարկ Բերման ենթարկելու որոշումը համարել օրինական, եթե դրան կցված են օրենքով սահմանված կարգի խախտումը հավաստող փաստաթղթեր:

Խնդիր իս) Վկային չի բացատրվում իր և իր հարազատների վերաբերյալ ցուցմունք չտալու իրավունքը:

Ազդեցությունն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը, համապատասխանաբար, սահմանում են, որ վկան իրավունք ունի հրաժարվելու իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց և հրաժարվելու նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե դրանք քրեական գործով կարող են օգտագործվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ: Այնուամենայնիվ, դիտարկումները և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փորձը ցույց են տալիս, որ բազմաթիվ են այնպիսի դեպքերը, երբ քննիչը վկային հարցաքննությունից առաջ հիշեցնում է նրա՝ որպես վկայի,

ցուցմունք տալու պարտականությունը և պատշաճ կերպով չի պարզաբանում վկայի՝ իր հարազատի դեմ ցուցմունք չտալու սահմանադրական իրավունքը, կամ այնպիսի դեպքերը, երբ քննիչը նույնիսկ բացատրում է օրենսդրության այդ դրույթը, սակայն վկային վստահեցնում է, որ նրա ցուցմունքներն իր հարազատի կամ ամուսնու օգտին են, այնինչ այդ ցուցմունքները հետագայում օգտագործվում են մեղադրանքի հիմքում:

Գործնականի հետ կապված առաջարկ Այն դեպքերում, երբ վկան հարցաքննվում է իր հարազատի կամ մերձավորի գործով, տեսաձայնագրատվող սենյակում վկայի հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը պետք է վկային բացատրի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված իրավունքները և վկայի համաձայնությունը ստանալուց հետո միայն սկսի հարցաքննությունը:

Խնդիր ծ) Առանց հրատապ անհրաժեշտության վկայի հարցաքննությունն իրականացվում է գիշերային ժամերին⁶⁷, ոչ աշխատանքային օրերին:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188¹ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում, բացառությամբ անհետաձգելի դեպքերի: Օրենսդիրը, սակայն, չի անդրադառնում ոչ աշխատանքային օրերի ընթացքում քննչական գործողությունների, մասնավորապես՝ վկաների հարցաքննության թույլատրելիության մասին: Հետևաբար ենթադրվում է, որ դրանով ամբողջությամբ բացառվում է ոչ աշխատանքային օրերին վկային հարցաքննության կանչելը: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188¹ հոդվածի 1-ին մասում հիշատակված «անհետաձգելի դեպքերի» ցանկը նույնպես օրենսդրությամբ չի սահմանվում, ինչը չարաշահումների տեղիք է տալիս: Միաժամանակ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատ դեպքերում, առանց անհրաժեշտության, վկաների հարցաքննություններն իրականացվում են հենց գիշերային ժամերին և ոչ աշխատանքային օրերին:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ, որոնցով կսահմանվեն այն «անհետաձգելի դեպքերը», երբ թույլատրվում է վկայի հարցաքննությունը գիշերային ժամերին և ոչ աշխատանքային օրերին, բացառությամբ անհետաձգելի դեպքերի:

Խնդիր կ) Չի պահպանվում վկաներին իրարից անջատ հարցաքննելու

⁶⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 48-րդ մասը գիշերային ժամ է սահմանում ժամը 22.00-ից մինչև 7.00-ն:

սկզբունքը:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վկան հարցաքննվում է այլ վկաներից անջատ: Ընդ որում, քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի նույն գործով կանչված վկաները մինչև հարցաքննության ավարտը հաղորդակցություն չունենան միմյանց հետ: Այնուամենայնիվ, օրենսդիրը չի սահմանում, թե ինչ կարգի միջոցառումներ պետք է ձեռնարկվեն քննիչի կողմից, որպեսզի մինչև հարցաքննության ավարտը վկաները չհաղորդակցվեն միմյանց հետ: Մինչդեռ, օրինակ, այն դեպքերում, երբ նույն գործով վկաները հանդիսանում են ոստիկանության նույն բաժնի աշխատակիցներ, որպես կանոն, նրանց ցուցմունքները լինում են բառացիորեն նույնական:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն, որով կնախատեսվի այն միջոցառումների ցանկը, որոնք քննիչը պետք է ձեռնարկի՝ ապահովելու համար վկաների չհաղորդակցվելը մինչև հարցաքննությունների ավարտը:

Խնդիր հ) Վկայի հարցաքննության ժամանակ ցուցմունքները թելադրում է քննիչը կամ քննիչը սեփական շարադրմամբ գրառում է ցուցմունքները:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ վկայի հարցաքննությունն սկսվում է նրանով, որ առաջարկվում է վկային պատմել գործով իրեն հայտնի ամեն ինչ, որից հետո նրան կարող են հարցեր տրվել: Միաժամանակ նույն օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ կետի 6-րդ մասը սահմանում է, որ վկան իրավունք ունի անձամբ շարադրելու մինչդատական վարույթի ընթացքում տրվող իր ցուցմունքները: Այնինչ գործնականում վկան ցուցմունքները գրի է առնում քննիչի թելադրմամբ, կամ քննիչն է գրառում վկայի ցուցմունքները սեփական շարադրմամբ:

Գործնականի հետ կապված առաջարկ Վկայի հարցաքննությունն իրականացնել տեսաձայնագրատվող սենյակում և վկայի գրավոր ցուցմունքներին կցել վկայի հարցաքննության տեսաերիզը:

Խնդիր ձ) Փաստաբանների հազվադեպ ներգրավումը վկայի հարցաքննությանը:

Ազդեցություն 2006 թ. մայիսի 23-ի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածում կատարված փոփոխությամբ վկային իրավունք է վերապահվել քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ⁶⁸: Այնուամենայնիվ, դիտարկումների արդյունքում հստակ է դարձել, որ հատկապես փոքր համայնքներում վկայի

⁶⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդվ. 86, մաս 5, կետ 10:

հարցաքննությանը փաստաբանի մասնակցության եզակի դեպքեր են արձանագրվում: Սակայն հարկ է նկատել, որ փաստաբանի մասնակցությամբ վկայի հարցաքննության իրականացումը մեծապես նպաստում է տարաբնույթ իրավախախտումների կանխարգելմանը: Միաժամանակ խնդրահարույց է անվճարունակ քաղաքացիների համար պետության միջոցների հաշվին փաստաբանի ներգրավման անհնարինությունը: Այդ պատճառով շատ անձինք, ի վիճակի չլինելով հոգավ փաստաբանական ծախսերը, չեն կարողանում իրականացնել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված դրույթը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Օրենսդրական առաջարկ 1. ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություն, որով ՀՀ փաստաբանների պալատի անդամ յուրաքանչյուր փաստաբան պարտավոր է տարվա ընթացքում 40 ժամ անվճար փաստաբանական ծառայություններ մատուցել (pro bono):

2. ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություն, որը հնարավորություն կընձեռի անվճարունակ վկաներին օգտվելու հանրային պաշտպանի ծառայություններից:

Խնդիր Դ) Որոշ քննչական բաժիններում վկայի իրավունքների մասին միակ հիշատակումն իրականացվում է հարցաքննության արձանագրության ձևաթղթում (երբեմն շարադրվում են վկայի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հոդվածների տեքստերն ամբողջությամբ, երբեմն էլ պարզապես հիշատակվում են վկայի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հոդվածների համարները):

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարցաքննությունից առաջ քննիչը ... տեղեկացնում է վկային ... ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Վկային հաղորդվում է, որ նա պարտավոր չէ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունքներ տալ: Դրանից հետո քննիչը պարզում է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի հետ վկայի փոխհարաբերության բնույթը և սկսում է հարցաքննությունը: Օրենսդիրը, սակայն, չի պարզաբանում, թե քննիչը վկային ինչ կարգով է տեղեկացնում (բանավոր, գրավոր) նրա իրավունքների մասին: Գործնականում քննիչը վկային ստորագրել է տալիս վկայի հարցաքննության արձանագրության այն հատվածում,

որտեղ հիշատակվում են վկայի իրավունքները, ինչը ձևական առումով համարվում է պատշաճ կերպով տեղեկացված: Եվ սա այն պարագայում, երբ իրավաբանական կրթություն չունեցող անձի համար հեշտ չէ հասկանալ շարադրված հոդվածների նշանակությունը:

Օրենսդրական առաջարկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որով կնախատեսվի հարցաքննությունից առաջ քննիչի կողմից վկային ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված նրա իրավունքների գրավոր ծանուցումը, որի համար վկան պետք է ստորագրի:

Խնդիր ճ) Վկայի իրավունքների բացատրություն կամ պարզաբանում հետաքննության մարմնի կողմից չի իրականացվում:

Ազդեցություն Որոշ քննչական բաժիններում վկայի իրավունքների մասին միակ հիշատակում իրականացվում է հարցաքննության արձանագրության ձևաթղթում (երբեմն շարադրվում են վկայի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հոդվածների տեքստերն ամբողջությամբ, երբեմն էլ պարզապես հիշատակվում են վկայի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հոդվածների համարները): Շարքային քաղաքացին, կարդալով քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի համապատասխան կետի մասերը⁶⁹, ի վիճակի չէ հասկանալու դրանցով իր համար առաջացող հետևանքները: Ավելին, այն դեպքերում, երբ վկայի հարցաքննության արձանագրության մեջ պարզապես նշում է կատարված, որ վկան ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, անձն անգամ պատկերացում չի ունենում, թե որ իրավունքների ու պարտականությունների մասին է խոսքը: Այդ իսկ պատճառով ձևականորեն վկայի իրավունքների մասին ծանոթության տակ ստորագրելով՝ վկան փաստացի չի տեղեկացվում իր իրավունքների մասին:

Գործնականի հետ կապված առաջարկ Տեսաձայնագրառվող սենյակում վկայի հարցաքննությունը սկսելուց առաջ քննիչը վկային կետ առ կետ ներկայացնում և բացատրում է վկայի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված պարտականությունները և 5-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված իրավունքները:

Խնդիր մ) Բացակայում են ճանաչման իրականացման համար անվտանգ պայմանները:

⁶⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 1-9-րդ կետերը սահմանում են վկայի պարտականությունները, իսկ 5-րդ մասի 1-10-րդ կետերը՝ իրավունքները:

Ազդեցություն	<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ քննիչի հայեցողությամբ կամ ճանաչողի ցանկությամբ անձի ճանաչումը կարող է կատարվել ճանաչվողի տեսողական դաշտից դուրս: Մակայն գործնականում ստեղծված չեն այնպիսի պայմաններ, որոնք կարող են ապահովել ճանաչողի անվտանգությունը անձի ճանաչման ներկայացնելու ժամանակ: Ավելին, օրենսդիրը չի սահմանում այն պայմանները, ընթացակարգը, ինչպես նաև այն դեպքերը, որոնց պարագայում ճանաչումը կարող է կատարվել ճանաչվողի տեսողական դաշտից դուրս: Կարևոր է նկատել, որ գործնականում ճանաչողի անվտանգության անվտանգությունը չապահովելը նվազեցնում է ճանաչողի, այսինքն՝ վկայի՝ նախաքննությունն իրականացնող մարմնի հետ համագործակցելու ցանկությունը:</p>
Օրենսդրական առաջարկ	<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություն, որով կսահմանվեն այն պայմանները, ընթացակարգը, ինչպես նաև այն դեպքերը, որոնց պարագայում ճանաչումը կարող է կատարվել ճանաչվողի տեսողական դաշտից դուրս:</p>
Խնդիր	<p>յ) Վկան կարող է հարցաքննվել տուժողի տանը:</p>
Ազդեցություն	<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ վկան հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում: Մակայն օրենսգիրքը չի սահմանում այն ընթացակարգային պահանջները, որոնց պահպանմամբ վկան կարող է հարցաքննվել իր բնակության վայրում: Փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն դեպքերում, երբ վկայի հարցաքննությունն իրականացվում է քննչական բաժնից դուրս, այն տեղի է ունենում նաև տուժողի տանը: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությունն արգելք չի սահմանել վկայի հարցաքննությանը տուժողի ներկայությամբ, այնուամենայնիվ վկային տուժողի տանը հարցաքննելն ինքնին հոգեբանական ճնշում է: Ավելին, օրենսդիրը վերոհիշյալ հոդվածում նախատեսելով, որ հարցաքննությունը կարող է անհրաժեշտության դեպքում կատարվել նաև վկայի գտնվելու վայրում, չի հստակեցնում, թե որն է այն «անհրաժեշտությունը», որի պայմաններում քննիչը պետք է վկային հարցաքննի տուժողի տանը (բացառություն է, եթե վկան տուժողի տան անդամն է, բնակվում է տուժողի հետ և ծերության կամ ծանր հիվանդության պատճառով չի կարող գնալ քննչական բաժնի հարցաքննության. նրան հարցաքննելու նպատակով քննիչն ինքն է այցելում վկայի բնակության/գտնվելու վայր և հարցաքննում այնտեղ):</p>

Օրենսդրական առաջարկ	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ, որոնցով կնախատեալեն. 1.այն իրավիճակները, որոնց դեպքում քննիչը կարող է վկային հարցաքննել նրա գտնվելու վայրում, 2. վկայի հարցաքննության պայմանները քննչական սենյակից դուրս:
Խնդիր	ն) Վկաների հարցաքննությունն իրականացվում է սահմանված թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար:
Ազդեցություն	Վկաների հարցաքննությունն իրականացվում է սահմանված թույլատրելի ժամանակահատվածից ավելի երկար: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2051 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի, այնուամենայնիվ, որոշ քննիչներ նույնիսկ նշում են, որ իրենք սիրում են մանրամասն հարցաքննել վկաներին և հաճախ մի վկային կարող են հարցաքննել ամբողջ օրը կամ մի քանի օր: Ստեղծված պայմանները հոգեբանական ճնշումների և վատ վերաբերմունքի դրսևորման տեղիք են տալիս:
Գործնականի հետ կապված առաջարկ	Հարցաքննությունն իրականացնել տեսաձայնագրատվող սենյակում, որի ձայներիզը կցել հարցաքննության արձանագրությանը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ

Խնդիր	շ) Համայնքներում տեղադրված չեն քաղաքացուն դեպի քննչական բաժին ուղղորդող ցուցանակներ:
Ազդեցություն	Մոնիթորինգի իրականացման ընթացքում դիտորդներն անանագրել են, որ համայնքներում ոստիկանություն/քննչական բաժին ուղղորդող ցուցանակներ տեղադրված չեն: Բացի այդ, որոշ համայնքներում փողոցների անունները փոփոխվել են, սակայն շենքերի վրա պահպանվել են փողոցների հին անվանումները: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանվում է հարցաքննության կանչելու կարգը, և թե ինչ տեղեկություններ պետք է պարունակի ծանուցագիրը: Օրենսգրքի համաձայն՝ ծանուցագրում պետք է նշվի, թե ուր պետք է ներկայանա կանչվողը: Չնայած այս հանգամանքին՝ գործնականում ծանուցագրում չի նշվում ոստիկանության/քննչական բաժնի գտնվելու հասցեն: Թե՛ ցուցանակների, թե՛ ծանուցագրում ոստիկանության/քննչական

բաժնի գտնվելու վայրի հասցեի բացակայությունը բավականին նվազեցնում է քաղաքացիների համար ոստիկանության/քննչական բաժինների հասանելիությունը, առավել ևս, երբ հարցաքննության կանչված վկան տվյալ համայնքի բնակիչ չէ:

Գործնականի հետ կապված առաջարկ Հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունները՝ պարտադիր ոստիկանություն/քննչական բաժիններ ուղղորդող ցուցանակներ տեղադրել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ծանուցագրի համար սահմանված պահանջների արդյունավետ իրականացման համար ծանուցագրում պարտադիր նշել հարցաքննության վայրի հասցեն:

Խնդիր n) Ոստիկանության շենքում քննչական բաժինները/բաժանմունքները չունեն որպես ստորաբաժանում առանձնացված տարածք՝ համապատասխան ցուցանակով:

Ազդեցություն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ քննիչները համարվում են ոստիկանության աշխատակիցներ: Մրանով է բացատրվում, թերևս, այն հանգամանքը, որ քննչական բաժինները տեղակայված են ոստիկանության շենքում: Մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ նույն շենքում են հիմնականում տեղակայված ոստիկանության դիտարկված բաժինները, անձնագրերի և վիզաների վարչությունը, ճանապարհային ոստիկանությունը:

Կան ոստիկանության շենքեր, որտեղ նշված բաժիններն առանձնացված չեն, բացի այդ, առանձնացված լինելու պարագայում էլ բաժանմունքի մուտքի մոտ տվյալ բաժնի վերաբերյալ տեղեկատվություն չկա: Այս պարագայում ևս քաղաքացիների համար դժվարանում է քննչական բաժնի տեղը գտնելը:

Գործնականի հետ կապված առաջարկ Ոստիկանության շենքում դեպի քննչական բաժիններ քաղաքացիների շարժն ավելի մատչելի դարձնելու համար քննչական բաժինների համար առանձնացնել հատուկ հարկաբաժիններ և դրանց մուտքի մոտ տեղադրել համապատասխան ցուցանակներ:

Խնդիր չ) Քննիչները տարբերակող համազգեստ չեն կրում կամ հարցաքննությունից առաջ չեն ներկայացնում իրենց վկայականը:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննության կանչելու համար կազմված ծանուցագիրը պետք է պարունակի նաև տեղեկություն այն մասին, թե ում մոտ է ներկայանալու

հարցաքննության կանչված անձը: Միաժամանակ, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ոստիկանության ծառայողին տրվում է հանդերձանք, ներառյալ՝ համազգեստ, անձնական համար և սահմանված ձևի վկայական: Օրենսդրության նման սահմանումներից կարելի է ենթադրել, որ հարցաքննության կանչված անձը պետք է հնարավորություն ունենա ճանաչելու իրեն հարցաքննության կանչած ոստիկանության աշխատակցին նրա վկայականի կամ անձնական համարի միջոցով: Մինչդեռ մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր բաժիններում քննիչները համապատասխան համազգեստ չեն կրում, քննիչների անձնական համարը կամ վկայականը փակցված կամ դրված չէ որևէ տեղ: Տարբերակման միակ հնարավորությունը քննիչների աշխատասենյակների դռան վրա փակցված ցուցանակներն են, նույնիսկ այն դեպքերում, երբ մեկ աշխատասենյակը հատկացված է երկու և ավել քննիչների:

Ոստիկանության աշխատակցին ճանաչելու և տարբերակելու հնարավորության բացակայությունը նվազեցնում է վստահությունը, բացի այդ, իր նկատմամբ կիրառված ոչ իրավաչափ գործողությունների դեպքում անձը չի կարող ճիշտ մատնանշել ոստիկանության՝ խախտում թույլ տված աշխատակցին:

Գործնականի հետ կապված առաջարկ Անհրաժեշտ է ապահովել քննիչների համազգեստ հագնելը, նրա անձնական համարը և վկայականը փակցնել կա՛մ համազգեստի, կա՛մ աշխատասեղանի վրա:

Խնդիր պ) Նյութական և տեխնիկական ռեսուրսների բացակայություն, մասնավորապես՝ վառելիքի, գրենական պիտույքների, սարքավորումների, կահույքի և այլն:

Ազդեցություն Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ոստիկանության բաժիններում նյութական և տեխնիկական ռեսուրսների բացակայությունը բացասական ազդեցություն է թողնում աշխատանքի արդյունավետության վրա: Մասնավորապես, վառելիքի բացակայության պատճառով քննիչները խնդիրներ են ունենում, երբ ստիպված են հարցաքննությունն իրականացնել վկայի փաստացի գտնվելու վայրում կամ փորձաքննության համար նյութերը տեղափոխել մայրաքաղաք: Բացի այդ, կան ոստիկանության բաժիններ, որտեղ 4-5 քննիչի աշխատանքների համար հատկացված է մեկ համակարգիչ, և քննիչները ստիպված են հերթագրվել համակարգչից օգտվելու համար, ինչը բացասական ազդեցություն է թողնում օրենքով սահմանված ժամկետների պահպանման վրա:

Գործնականի հետ կապված առաջարկ Անհրաժեշտ է ՀՀ պետական բյուջեով նախատեսել անհրաժեշտ ֆինանսավորում ոստիկանության վարչական ծախսերի, գույքի, վառելիքի ձեռքբերման համար:

Խնդիր ջ) Քննիչների հաստիքների քանակը և աշխատավարձերը համափաշ չեն աշխատանքների ծավալին⁷⁰, մասնավորապես՝ հաստիքների անբավարար քանակը հանցագործությունների թվին:

Ազդեցություն Ոստիկանության բաժիններում իրականացված մոնիթորինգի ընթացքում պարզվել է, որ ոստիկանության բաժինների կեսից ավելիի դեպքում մեկ բաժինը սպասարկում է միջինը 18-20 հարակից համայնքներ, և այդ բաժիններում աշխատում է 3-6 քննիչ⁷¹: Պարզ չէ՝ քննիչների հաստիքների բաշխման սկզբունքը պայմանավորված է սպասարկվող համայնքների թվով, տվյալ համայնքներում հանցագործությունների տարածման աստիճանով, թե՞ հանցագործությունների բնույթով: Ըստ երևույթին, գործերը բաշխվում են ըստ օրվա հերթապահության, երբեմն՝ ըստ քննիչների փորձառության: Բացի այդ, քննիչների վարձատրության չափը կախված չէ նրանց կողմից քննվող գործերի քանակից, գործերի թվի ավելացման դեպքում աշխատավարձի հավելումներ սահմանված չեն: Նշված գործոնների ազդեցությամբ՝ ոստիկանության միևնույն բաժնում, ինչպես նաև ոստիկանության տարբեր բաժիններում քննիչների հաստիքների և ծանրաբեռնվածության ոչ համաչափ բաշխվածություն գոյություն ունի, որն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում գործերի քննության արդյունավետության վրա:

Գործնականի հետ կապված առաջարկ Նման խնդրի կարգավորումը հնարավոր կլինի, եթե ոստիկանության բաժիններում քննիչների հաստիքները սահմանելիս հաշվի առնվի սպասարկվող համայնքների թիվը: Քննիչների համար նախատեսել ըստ հանցագործության ոլորտի մասնագիտացում:

Սահմանել աշխատավարձի նվազագույն շեմ և ըստ գործերի թվի աշխատավարձի հավելվածարներ:

Խնդիր ռ) Փոքր համայնքներում վկաների իրավագիտակցության ցածր մակարդակը:

Ազդեցություն Մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ վկայի՝ առանց

⁷⁰ Կան համայնքներ, որտեղ քննիչը տարվա ընթացքում քննում է միջինը 10 գործ, կան նաև համայնքներ, որտեղ տարվա կտրվածքով քննվող հանցագործությունների թիվը հասնում է 50-ի: Առաջին տիպի համայնքներում նաև հաճախ է անհրաժեշտություն առաջանում, որ քննիչն իր միջոցների հաշվին գնա մարզկենտրոն կամ Երևան՝ փորձաքննության կամ այլ միջոցառումներ կազմակերպելու համար, սակայն աշխատավարձի չափը երկու դեպքերում էլ նույնն է:

⁷¹ Բացառություն են կազմում ոստիկանության Վանաձորի և Գյումրու բաժինները, որոնք սպասարկում են միայն նշված համայնքները, ինչպես նաև Բագարատաշենի, Աշոցքի, Անիի և Ամասիայի բաժինները, որտեղ աշխատում են մեկական քննիչներ:

փաստաբանի մասնակցության հարցաքննությունները շատ հաճախ պայմանավորված են այն հանգամանքով, որ վկաները տեղեկացված չեն օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքների մասին: Այս հանգամանքը, թերևս, պայմանավորված է նրանով, որ համայնքներում ոստիկանության գործողությունների, մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ գրեթե չեն իրականացվում: Ոստիկանության ոչ մի բաժանմունքում հարցաքննության կարգի, հարցաքննվող անձի իրավունքների, ինչպես նաև ոստիկանության դերի, ոստիկանության աշխատակիցների գործողությունների վերաբերյալ տեղեկություններ փակցված չեն: Դրա հետևանքով քաղաքացիները չեն կարողանում իրականացնել իրենց իրավունքները, խուսափում են ոստիկանության հետ առնչությունից, այդ թվում նաև՝ որպես հանցագործության մասին վկայություն տվող անձ հանդես գալուց, իսկ քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարադակը չարաշահումների և խախտումների առիթ է դառնում:

Գործնականի հետ կապված առաջարկ

Բարձրացնել բնակչության իրավագիտակցության մակարադակը՝ իրականացնելով իրազեկման աշխատանքներ. տեղական ՁԼՄ-ներով նկարահանել և հեռարձակել հեռուստատեսադրոյուզներ ոստիկանություն-քաղաքացի հարաբերությունների մասին:

Անհրաժեշտ է ոստիկանության բաժիններում փակցնել տեղեկություններ ոստիկանության գործողությունների, ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների մասին, մասնավորապես՝ վկաների դերի և իրավունքների մասին:

Օրենսդրական առաջարկ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածում կատարել լրացումներ, որոնցով, մասնավորապես, ծանուցագրի մեջ կավելացվի հարցաքննության կանչվող անձի, այդ թվում նաև վկայի իրավունքների և պարտականությունների մասին ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված տեղեկատվությունը:

Խնդիր

ա) Ամեն կարգի փորձաքննությունների կենտրոնացումը մայրաքաղաքում:

Ազդեցություն

Մոնիթորինգի ընթացքում գործերի քննության արդյունավետության վրա ազդող գործոնների շարքում առանձնացվել են նաև փորձաքննությունների հետ կապված դժվարությունները: Այն հանգամանքը, որ փորձաքննությունների համար գործում է միայն մեկ հաստատություն՝ Փորձաքննությունների ազգային բյուրոն, որն էլ

գտնվում է մայրաքաղաք Երևանում, բացասաբար է ազդում գործերի քննության համար սահմանված ժամկետների պահպանման վրա: Բացի այդ, այն դեպքերում, երբ պահանջվում է փորձաքննություն իրականացնել հանցագործության իրականացման վայրում, հնարավոր չի լինում անմիջապես արձագանքել:

Գործնականի հետ կապված առաջարկ Նման գործոնների ազդեցությունը քրեական գործերի քննության վրա նվազեցնելը հնարավոր կլինի մարզերում Փորձաքննության ազգային բյուրոյի մասնաճյուղերի հիմնադրմամբ:

Խնդիր վ) Դատախազության մեծ ազդեցությունը քննչական բաժնի գործողությունների նկատմամբ:

Ազդեցություն ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացվում դատախազության կողմից: Այդ հսկողությունը զգալի ազդեցություն է թողնում գործերի օբյեկտիվ քննության, այդ թվում նաև վկայի հարցաքննության գործընթացի վրա: Շատ գործերի քննությունն ընթանում է մարզային դատախազների ուղղակի ցուցումներով⁷²: Հազվադեպ են նաև վերահսկող դատախազների կողմից ոչ օբյեկտիվ քննության հիմքով գործերը վերադարձնելու դեպքերը:

Գործնականի հետ կապված առաջարկ Նման ազդեցությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է քննիչներին օժտել անկախության ավելի լայն շրջանակներով:

Օրենսդրական առաջարկ Օրենսդրական փոփոխության արդյունքում անհրաժեշտ է հստակեցնել նախաքննության ընթացքի նկատմամբ դատախազության հսկողության սահմանները:

Խնդիր տ) Վկան կամ կարգավիճակ չունեցող անձը հարցաքննությունից հետո կարող է ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ:

Ազդեցություն Որպես վկայի փաստաբան ներգրավված պաշտպանները, հղում անելով իրենց գործերին, մոնիթորինգի ընթացքում նշել են, որ հանդիպել են դեպքերի, երբ որպես վկա հարցաքննվող անձը կամ մինչև քրեական գործի հարուցումը՝ նյութերի նախապատրաստման փուլում, բացատրություն տվող անձն այնուհետև ներգրավվում է որպես տվյալ գործով կասկածյալ կամ մեղադրյալ: Նման դեպքերը զգալի ազդեցություն են թողնում գործի քննության օբյեկտիվության վրա, մասնավորապես՝ ապացույցների ձեռքբերման գործում, քանի որ մեղադրանքի հիմքում հիմնականում դրվում են հենց այդ ապացույցները: Ցավոք, նման ապացույցները դատարանի կողմից

⁷² Որպես նախաքննության վրա զգալիորեն ազդող գործոն՝ մատնանշվել է հարցված փաստաբանների գերակշռող մասի կողմից:

անթույլատրելի չեն ճանաչվում, և դրանց վրա հիմնվելով՝ դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ:

Օրենսդրական առաջարկ Նման դրսևորումները կանխելու համար անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների շնորհիվ ընդլայնել որպես վկայի փաստաբան հանդես եկող պաշտպանների լիազորությունները, ինչպես նաև նախատեսել անձի կողմից ոստիկանությունում բացատրություններ տալու ժամանակ փաստաբանի մասնակցության օրենսդրական հնարավորությունը:

Խնդիր ր) Վկաների համար սպասասրահներ չկան:

Ազդեցություն Մոնիթորինգի արդյունքում ոստիկանական բաժանմունքների շենքային պայմանների շարքում, որպես քննության վրա ազդող գործոն, առանձնացվել է նաև վկաների համար ոստիկանության շենքերում սպասասրահների բացակայությունը: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությամբ սահմանված է, որ վկաները պետք է քննվեն իրարից անջատ և չպետք է հաղորդակցվեն միմյանց հետ, հարցաքննության կանչված վկաները ստիպված են միջանցքներում սպասել ոստիկանության այլ բաժիններ՝ անձնագրերի և վիզաների բաժին, ճանապարհային ոստիկանություն եկած անձանց, ինչպես նաև հարցաքննության կանչված այլ վկաների, կասկածյալների և մեղադրյալների հետ: Բացի այն, որ օրենսդրական այս պահանջը խախտվում է համապատասխան շենքային պայմանների պատճառով, սպասասրահի բացակայությունը և ոստիկանության շենքի քննչական բաժնում այլ անձանց տեսանելի լինելու հանգամանքը փոքր համայնքներում լրացուցիչ պատճառ է հարցաքննությունից որոշ վկաների խուսափելու համար:

Գործնականի հետ կապված առաջարկ Հարցաքննությանը վկաների մասնակցելը խոչընդոտող նման հանգամանքները վերացնելու համար անհրաժեշտ է ոստիկանության շենքերի քննչական բաժիններում կառուցել համապատասխան կահավորանք ունեցող սպասասրահներ:

7. Հավելվածներ

7.1 Հավելված 1

Մոդելային օրենք տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին

Ընդունվել է ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական ասամբլեայի 10-րդ լիագումար նստաշրջանում (Ռոտշում թիվ 10-14, 1997 թ. 6 դեկտեմբերի):

Սույն օրենքը նախատեսում է տուժածների, վկաների և քննչական մարմինների հետ համագործակցող այլ անձանց թե՛ անվտանգության ապահովման, թե՛ սոցիալական պաշտպանության պետական միջոցներ: Սույն օրենքով սահմանված միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ այլ միջոցներն անձի անվտանգության ապահովման համար բավար չեն:

Ում վրա է տարածվում

Սույն օրենքը տարածվում է՝

- այն անձանց վրա, ովքեր իրավապահ մարմիններին տրամադրում են տեղեկություններ կամ այլ կերպ նպաստում, աջակցում են հանցագործության հայտնաբերմանը,
- տուժողի և նրա օրինական ներկայացուցչի վրա,
- վկայի վրա,
- կասկածյալի, մեղադրյալի, նրանց փաստաբանների և օրինական ներկայացուցիչների, ինչպես նաև դատապարտյալների վրա,
- փորձագետի, մասնագետի, թարգմանչի և ընթերակայի վրա,
- քաղաքացիական հայցվորի, քրեական գործով քաղաքացիական պատասխանողի (վնասների փոխհատուցման պահանջով) վրա:

Անվտանգության միջոցներ կարող են կիրառվել նաև պաշտպանվող անձի հարազատների նկատմամբ, իսկ բացառիկ դեպքերում՝ այն անձանց նկատմամբ, ում նկատմամբ կիրառվել են հակաիրավական գործողություններ:

Ով է ապահովում պաշտպանությունը

- Անվտանգության միջոցի ապահովման վերաբերյալ որոշում կայացնող մարմինը.
- Անվտանգության միջոցի կիրառումն ապահովող մարմինը:

Անվտանգության միջոցի ապահովման վերաբերյալ որոշում է կայացնում դատարանը, դատախազը, իսկ դատախազի թույլտվությամբ՝ հետաքննության մարմինը կամ քննիչը, որոնց վարույթում է գտնվում տվյալ քրեական գործը:

Անվտանգության միջոցների կիրառումն ապահովվում է ներքին գործերի, անվտանգության, մաքսային և հարկային ոստիկանության մարմինների կողմից այն պաշտպանվող անձնաց նկատմամբ, ովքեր, համաձայն ներպետական օրենսդրության, թվարկված մարմինների իրավագործության ներքո են: Վերոհիշյալ մարմիններում նման գործառույթ իրականացնելու նպատակով պետք է ստեղծվեն առանձին ստորաբաժանումներ: :

Պաշտպանության միջոցների ձեռնարկման վերաբերյալ որոշում կայացնող մարմիններն իրենց իրավագործության ներքո իրավունք ունեն՝

- հարցում անել և անհրաժեշտ տվյալներ ստանալ, կատարել դատավարական գործողություններ կամ համապատասխան հանձնարարականներ տալ անվտանգության միջոցներ իրականացնող մարմինին,
- անվտանգության միջոցներ իրականացնող մարմնից պահանջել պաշտպանության հավելյալ միջոցների ապահովում,
- անվտանգության միջոցներ իրականացնող մարմնի հետ համաձայնեցնելով՝ դադարեցնել պաշտպանության միջոցառման իրականացումը:

Պաշտպանության միջոցներ իրականացնող մարմիններն իրավունք ունեն՝

- ընտրելու պաշտպանության անհրաժեշտ միջոց, ինչպես նաև իրականացնելու, հարկ եղած դեպքում փոփոխելու կամ լրացնելու իրականացվող պաշտպանության միջոցը,
- պաշտպանվող անձանցից պահանջել հետևել պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ նախապայմաններին,
- միջնորդություն ներկայացնել քննչական մարմին, դատախազին կամ այն դատարան, որի վարույթում է գտնվում տվյալ քրեական գործը՝ միջնորդելով պաշտպանվող անձի նկատմամբ կիրառել համապատասխան անվտանգության միջոցը կամ դադարեցնել գործող անվտանգության միջոցը:

Անվտանգության միջոցների վերաբերյալ որոշումներ կայացնող մարմինը և այդ միջոցներն իրականացնող մարմինը պարտավոր է՝

- անմիջապես արձագանքել պաշտպանվող անձի նկատմամբ իրենց հայտնի դարձած հակաօրինական գործողություններին,
- տվյալ օրենքով սահմանված կարգով իրականացնել անվտանգության այնպիսի միջոցներ, ինչպիսին է կյանքի, առողջության և սեփականության պաշտպանությունը,
- կանխավ տեղեկացնել պաշտպանվող անձին անվտանգության միջոցների կիրառման կամ կիրառումը դադարեցնելու մասին:

Պետական պաշտպանության տեսակները

Սույն օրենքը նախատեսում է պետական պաշտպանության հետևյալ տեսակները.

- Պաշտպանվող անձի մասին տվյալների չբացահայտում: Դա ապահովվում է հետևյալ կերպ.
 - Սահմանափակել կամ փոփոխել պաշտպանվող անձի մասին տեղեկությունները: Մասնավորապես, հետաքննության մարմինը կարող է քննչական գործողության արձանագրության մեջ, որում մասնակցել է պաշտպանվող անձը, նրա ներկայացուցիչը կամ հարազատը, չնշել տվյալ անձի մասին տեղեկությունները: Նման դեպքերում քննչական մարմինը որոշում է կայացնում, որում մանրամասն նկարագրվում են այն պատճառները, որոնց հիման վրա կայացվել է անձի տվյալների գաղտնագրում, ինչպես նաև տրամադրվում է պաշտպանվող անձի ստորագրության նմուշը, որն այնուհետ օգտագործվում է տվյալ անձի կողմից իր մասնակցությամբ իրականացվող բոլոր քննչական գործողությունների ժամանակ: Վերոհիշյալ որոշումը պահվում է կնքված ծրարի մեջ, և դրա բովանդակությանը իրավունք ունեն ծանոթանալու միայն քննչական մարմնի ղեկավարը, վերադաս դատախազը և դատավորը:

- Ճանաչվող անձին պաշտպանվող անձին ճանաչման ներկայացնել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են ճանաչվողի տեսողական դիտարկումը ճանաչողին:
 - Տուժածի կամ վկայի հարցաքննությունն անվտանգության ու անանունության պայմաններում:
- Դոնփակ դատական նիստ: Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանի որոշմամբ գործը կարող է քննվել դոնփակ դատական նիստում:
 - Անձնական պաշտպանություն, բնակարանի և սեփականության պահպանություն, որն իրականացվում է անվտանգությունն ապահովող մարմնի կողմից: Պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ՝ նրա բնակության վայրը կամ այլ սեփականությունը կարող է ապահովվել հակահրդեհային համակարգով, փոխվել հեռախոսահամարը կամ տրանսպորտային միջոցի համարանիշը:
 - Պահպանվող անձի հեռախոսագանգերի գաղտնալսում: Գործող օրենսդրության համաձայն և պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա պաշտպանություն իրականացնող մարմինը կարող է գաղտնալսել պաշտպանվող անձի հեռախոսագրույցները:
 - Պաշտպանվող անձին զենքի, անձնական պաշտպանության, ինչպես նաև հատուկ միջոցների տրամադրում: Պաշտպանության միջոցներն իրականացնող մարմինը, դատախազի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ, կարող է պաշտպանվող անձին տրամադրել ծառայողական կամ մարտական զենք, ինչպես նաև՝ անհատական պաշտպանության հատուկ միջոցներ: Պաշտպանվող անձին տրամադրվող զենքի տեսակը և տրամադրման կարգը սահմանվում է ներպետական օրենսդրությամբ և կառավարության կողմից կայացված որոշման հիման վրա: Պաշտպանվող անձի կողմից տրամադրված զենքի կիրառման կարգը սահմանվում է ներպետական օրենսդրության համաձայն:
 - Տեղեկատվական կենտրոնների կողմից պաշտպանվող անձի վերաբերյալ տվյալների և տեղեկությունների տրամադրման վրա ժամանակավոր արգելանքի սահմանում: Անվտանգությունն իրականացնող մարմնի որոշման հիման վրա կարող է ժամանակավոր արգելանք դրվել պաշտպանվող անձի վերաբերյալ տվյալների և տեղեկատվության տրամադրման վրա հետևյալ հաստատություններից.
 - հասցեների համասփյուռներ,
 - անձնագրային և վիզաների ծառայություններ,
 - ավտոմոբիլային տեսչության պետական գերատեսչություններ,
 - հեռախոսահամարների համասփյուռ,
 - այլ տեղեկատվական կենտրոններ:

Բացառիկ դեպքերում, այլ քրեական կամ քաղաքացիական գործի դատաքննության հետ կապված, նմանատիպ տվյալներ կարող են տրամադրվել միայն նախաքննություն իրականացնող մարմնին կամ դատարան՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Պաշտպանվող անձի բնակության վայրի փոփոխում: Պաշտպանվող անձը կարող է տեղափոխվել ժամանակավոր կամ մշտական բնակության այլ վայր: Պաշտպանվող անձին մշտական բնակության այլ վայր տեղափոխելու դեպքում նրան աջակցություն

է ցույց տրվում բնակարան ձեռք բերելու հարցում: Տրամադրվում է նաև նյութական աջակցություն, ինչպես նաև օգնություն է ցույց տրվում աշխատատեղ գտնելու հարցում: Ժամանակավոր բնակության այլ վայր տեղափոխվելու դեպքում պաշտպանվող անձը պահպանում է իր նախկին բնակարանի սեփականության իրավունքը:

- Պաշտպանվող անձի փաստաթղթերի փոխարինում և արտաքին տեսքի փոփոխում: Բացառիկ դեպքերում կարող է փոխարինվել պաշտպանվող անձի անձը հաստատող փաստաթուղթը, մասնավորապես՝ նրա անուն, ազգանուն, հայրանունը կամ այլ տվյալներ, ինչպես նաև կարող է փոփոխվել անձի արտաքին տեսքը: Պաշտպանության այս միջոցը կարող է կիրառվել միայն պաշտպանվող անձի գրավոր դիմումի և գլխավոր դատախազի կամ դատարանի որոշման հիման վրա, այն դեպքերում, երբ պաշտպանության այլ միջոցները չեն կարող ապահովել պաշտպանության արդյունավետությունը:
- Պաշտպանվող անձի աշխատանքի (ծառայության) կամ ուսման վայրի փոփոխություն: Պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա անձին կարող է օժանդակություն ցույց տրվել նոր աշխատավայր (ծառայության) կամ ուսման վայր տեղափոխվելու կապակցությամբ:
- Պաշտպանվող անձի ժամանակավոր բնակեցումն անվտանգ վայրում: Եթե պաշտպանվող անձը չափահաս է, ապա նրա գրավոր դիմումի հիման վրա, այն դեպքերում, երբ պաշտպանվող անձն անչափահաս է, ապա նրա ծնողների կամ օրինական ներկայացուցիչների գրավոր դիմումի հիման վրա անձը կարող է տեղափոխվել անվտանգ վայր, որտեղ կապահովվի նրա անվտանգությունը:

Պաշտպանության միջոցների ցանկը կարող է փոփոխվել միայն օրենքով:

Սոցիալական պաշտպանության միջոց

Այն դեպքերում, երբ քրեական գործի շրջանակներում համագործակցելու հետևանքով պաշտպանվող անձին մահ է պատճառվում, ապա նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին, ներառյալ նրա խնամքի տակ գտնվող անձանց, անվտանգության միջոցներ կիրառելու մասին որոշում կայացնող մարմնի որոշման հիման վրա համապատասխան բյուջեից տրամադրվում է միանվագ վճար՝ նվազագույն աշխատավարձի _____ ապատիկի չափով, իսկ կերակրողին կորցնելու դեպքում, գործող օրենսդրության համաձայն, նշանակվում է թոշակ:

Այն դեպքերում, երբ քրեական գործի շրջանակներում համագործակցելու հետևանքով պաշտպանվող անձին մարմնական վնասվածք է պատճառվում, ապա անվտանգության միջոցներ կիրառելու մասին որոշում կայացնող մարմնի որոշման հիման վրա նրան վճարվում է միանվագ գումար՝ նվազագույն աշխատավարձի _____ ապատիկի չափով, իսկ եթե աշխատունակության երկարատև կորուստ կա, ապա, գործող օրենսդրության համաձայն, նշանակվում է հաշմանդամության թոշակ:

Այն դեպքերում, երբ քրեական գործի շրջանակներում համագործակցելու հետևանքով անձի գույքային իրավունքներին վնաս է պատճառվում, ապա այդ վնասը ենթակա է փոխհատուցման սույն օրենքով սահմանված կարգով:

Պետական պաշտպանության ձեռնարկման հիմքերը և իրականացման կարգը

Պաշտպանվող անձի նկատմամբ անվտանգության միջոցների ձեռնարկման հիմք կարող է լինել պաշտպանության միջոցի կիրառման վերաբերյալ որոշում կայացնող մարմնի կողմից այնպիսի հավաստի տեղեկությունների տրամադրումը, որոնք վկայում են, որ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը, սեփականությանը վտանգ է սպառնում:

Նախաքննության մարմինները, քննիչը, դատախազը կամ դատարանը պաշտպանվող անձին սպառնացող վտանգի վերաբերյալ տեղեկություն (հայտարարություն) ստանալով՝ պարտավոր են ստուգել այդ տեղեկությունը առավելագույնը 72 ժամվա ընթացքում, իսկ անհետաձգելի իրավիճակներում՝ անմիջապես որոշում կայացնել անվտանգության միջոցների ապահովման կամ դրանց ապահովումը մերժելու վերաբերյալ: Կայացված որոշումը պետք է լինի հիմնավորված, որը կայացման օրն ուղարկվում է անվտանգության միջոցն իրականացնող մարմին: Անվտանգության ապահովման կամ մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով, դատախազին կամ դատարան:

Պաշտպանվող անձի նկատմամբ առկա սպառնալիքի վերաբերյալ հայտարարության հիման վրա, քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, կարող է որոշում կայացվել քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ կամ այդ հայտարարությունն ուղարկվել ըստ ընդդատության: Դիմողը տեղեկացվում է կայացված որոշման մասին:

Անվտանգության միջոցներն իրականացնող մարմինը տվյալ օրենքով սահմանված անվտանգության միջոցներից ընտրում է անհրաժեշտը և սահմանում է դրանց իրականացման ձևերը՝ ղեկավարվելով յուրաքանչյուր գործի առանձնահատկություններով:

Անհրաժեշտության դեպքում, համաձայն սույն օրենքի և քաղաքացիական օրենսդրության, անվտանգության միջոցներն իրականացնող մարմինը կարող է պայմանագիր կնքել փոխադարձ պարտականությունների, անվտանգության միջոցների իրականացման պայմանների և կողմերի փոխադարձ պատասխանատվության վերաբերյալ:

Պաշտպանության միջոցների ապահովման դադարեցումը

Պաշտպանվող անձի նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցները կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ վերացել են առկա սպառնալիքները, ինչպես նաև այն դեպքերում, երբ պաշտպանվող անձի հետագա պաշտպանությունն անհնար է դարձել նրա կողմից պաշտպանության կանոնների խախտման հետևանքով:

Անվտանգության միջոցները կարող են նաև դադարեցվել պաշտպանվող անձի գրավոր դիմումի հիման վրա:

Անվտանգության միջոցների ապահովումը կարող է դադարեցվել միայն այն նախաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշման հիման վրա, որի քննությանն է ներկայացվել հանցագործության վերաբերյալ հայտարարությունը (դիմումը) կամ որի վարույթում է գտնվում տվյալ քրեական գործը: Այդ որոշման մեջ պետք է նաև լուծվի պաշտպանվող անձի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների հարցը, որոնք

պաշտպանվող անձն ունեցել է նախքան անվտանգության միջոցների իրականացումը:

7.2 Հավելված 2

Աշխարհագրական տարածքը



Սույն ծրագրի շրջանակներում դիտարկումներ են իրականացվել Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի ուստիկանության 17 քննչական բաժիններում: Այդ բաժինները գտնվում են հետևյալ բնակավայրերում.

Լոռու մարզ

Վանաձորի

Գուգարք

Թումանյան

Տաշիր

Ստեփանավան

Սպիտակ

Տավուշի մարզ

Դիլիջան

Նոյեմբերյան

Բերդ

Բագրատաշեն

Իջևան

Շիրակի մարզ

Աշոցք

Ամասիա

Գյումրի

Անի

Արթիկ

Ախուրյան

7.3 Հավելված 3

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

վկայի հարցաքննության

« _____ » _____ 2011 թ. _____

ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզային քննչական բաժնի /ավագ/ քննիչ

ՀՀ քր. դատ. օր-ի 206-209 հոդ. հոդ. պահանջների պահպանմամբ _____
շենքում որպես վկա հարցաքննեցի ներքոհիշյալին՝

Հարցաքննությունը սկսվել է ժամը __ անց __ ժամը և ավարտվել է ժամը __ անց __ ժամը

Հարցաքննությունը ընդմիջվել է ժամը __ անց __ ժամը և վերսկսվել է ժամը __ անց __ ժամը

- 1. Ազգանուն, Անուն, Հայրանուն _____
- 2. Ծննդյան տարեթիվը _____
- 3. Ծննդավայրը _____
- 4. Ազգությունն ու քաղաքացիությունը _____
- 5. Կրթությունը _____
- 6. Ընտանեկան դրությունը _____
- 7. Աշխատանքի վայրը _____
- 8. Զբաղեցրած պաշտոնը _____
- 9. Նախկին դատվածությունը _____
- 10. Բնակության վայրը _____
- 11. Փոխհարաբերությունները կասկածյալի, տուժողի և մեղադրյալի հետ _____

Վկա _____ *հայտնված է, որ նա կանչվել է*

_____ գործով որպես վկա

հարցաքննվելու

ՀՀ քր. դատ. օր-ի 206 հոդվածի կարգով, հարցաքննությունից առաջ վկա _____
բացատրվել են ՀՀ քր. դատ. օր-ի 86 հոդվածով սահմանված վկայի իրավունքներն ու
պարտականությունները, այն է՝

Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից
կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք:

1.Որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝

- 1) անծինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթական հանգամանքները,
- 2) փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ մնալ օգնություն ցույց տալու հետ,
- 3) անծինք, որոնց տվյալ քրեական գործին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել քրեական գործով որպես պաշտպան, տուժողի, քաղաքացիական հայցերի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ մասնակցելու կապակցությամբ,
- 4) դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը և դատական նիստի քարտուղարը կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները. բացառությամբ տվյալ գործի վարույթի ընթացքում թույլ տրված սխալների և չարաշահումների քննության, նոր ի հայտ եկած հանգամանքներով տվյալ գործի նորոգման կամ կորցրած վարույթի վերականգման դեպքերի
- 5) ձեռնարկված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանանքից իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին:

Վկան պարտավոր է.

- 1) ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.
 - 2) տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ամբողջ հայտնի դարձած և պատասխանել առաջադրված հարցերին, ստորագրությամբ՝ հաստատել քննչական կամ այլ դատավարական գործողության, դատական նիստի արձանագրության մեջ իր տված ցուցմունքների գրառումների ճշտությունը.
 - 3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով տրամադրել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը, ինչպես նաև մուշներ՝ համեմատական հետազոտման համար.
 - 4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման.
 - 5) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության, ստուգելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա այդպիսի ունակությունը.
 - 6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին.
 - 7) չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության կամ առանց քրեական հետապնդման մարմնին իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու.
 - 8) առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը կամ դատարանի շենքը.
 - 9) դատական նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն.
- 3. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:**

Վկան իրավունք ունի

- 1) իմանալ, թե որ քրեական գործով է կանչվում,
 - 2) հրաժարվել իրեն, ամուսնուն կամ իր մերձավոր ազգականներին հանցանքի կատարման մեջ մերկացնող ցուցմունքներ տալուց.
 - 3) հրաժարվել նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե դրանք քրեական գործով կարող են վկայել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ.
 - 4) ցուցմունքներ տալիս քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ օգտվել փաստաթղթերից և իր գրավոր նշումներից.
 - 5) ցուցմունքներ տալիս կազմել պլաններ, սխեմաներ և գծագրեր.
 - 6) անձամբ շարադրել մինչդատական վարույթի ընթացքում տրվող իր ցուցմունքները.
 - 7) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և իր ցուցմունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.
 - 8) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում.
 - 9) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները:
 - 10) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալ փաստաբանի հետ:
- Միաժամանակ վկային պարզաբանվեց ՀՀ քր. դատ. օր-ի 205¹ հոդվածով սահմանված հարցաքննության տևողությունը, այն է՝
1. Հարցաքննությունը չի կարող անընդմեջ տևել չորս ժամից ավելի

2. Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ ժամը:

3. Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել նախատեսված հարցաքննության ժամկետից ավելի կարճ ժամկետներ:

Վկայի իրավունքների և պարտականությունների հետ ծանոթացա _____ / _____ /

Նույն ժամանակ վկային պարզաբանվեց, որ ՀՀ քր. դատ. օր-ի 206 հոդվածի համաձայն, եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, որը իրավիքում է վկայի կողմից՝ վերջինիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, ապա փաստաբանն իրավունք ունի ներկա գտնվելու հարցաքննությանը, սակայն իրավասու չէ հարցեր տալու վկային կամ մեկնաբանելու նրա պատասխանները: Վկայի՝ ՀՀ քր. դատ. օր-ի 86 հոդվածով նախատեսված իրավունքները խախտող հարցեր տալու կամ գործողություններ կատարելու դեպքում փաստաբանն իրավունք ունի անելու հայտարարություններ, որոնք ներառվում են հարցաքննության արձանագրությունում:

Հարցաքննությունից առաջ վկա _____ հայտարարվեց

Իրեն ամուսնուն կամ իր մերձավոր ազգականներին հանցագործության կատարման մեջ մերկացնող ցուցմունքներ տալու պարտականությունից ազատ լինելու կապակցությամբ

_____ / _____ /

Ցուցմունք տալու լեզվի և իր իրավունքները անհատույց թարգմանչի օգնությամբ իրականացնելու կապակցությամբ

_____ /

Ցուցմունքը իր ձեռքով գրելու իրավունքն իրականացնելու կապակցությամբ _____

_____ /

Քրեական վարույթն իրականացնող մարմին փաստաբանի հետ ներկայանալու և նրա ներկայությամբ հարցաքննվելու իրավունքն իրականացնելու կապակցությամբ

_____ / _____ /

Այլ հայտարարություններ

_____ / _____ /

Հարցաքննության ընթացքում կիրառվել են _____

_____ տեխնիկական

միջոցները, որոնց մասին վկային նախազգուշացվել է

_____ / _____ /

Վկա _____ նախազգուշացված է ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու և ցուցմունքներ տալուց խուսափելու կամ հրաժարվելու համար ՀՀ քր. օր-ի 338 և 339 հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԻ ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹՅԱՆ

« _____ » _____ 200 թ. _____
քաղաք, շրջան

քննչական մարմնի անվանումը, քննիչի պաշտոնը, կոչումը և ազգանունը

Մկսվել է ժամը _____

Ավարտվել է ժամը _____

Պահպանելով ՀՀ քր. դատ. օր. 29, 205, 206-209 հոդ. հոդ. պահանջները

վարույթիս տակ գտնվող № _____ քրեական գործով, որպես վկա հարցաքննեցի՝

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____

2. Տարիքը _____

3. Ծննդավայրը _____

4. Քաղաքացիությունը _____

5. Կրթությունը _____

6. Ջրադնունքի տեսակը, աշխատանքի վայրը և պաշտոնը _____

7. Ընտանեկան դրությունը _____

8. Բնակավայրը և հեռախոսը _____

գրանցման վայրը կամ փաստացի բնակավայրը

9. Դատվածությունը _____

10. Անձը հաստատող փաստաթուղթ _____

անձնագրի տվյալները

11. Ինչպիսի փոխհարաբերությունների մեջ է գտնվում տվյալ գործով կասկածյալի, մեղադրյալի և տուժողի հետ

ՀՀ քր. դատ. Օր-ի 101. 167. 170-172 հոդ. հոդ. համաձայն _____
վկայի անունը, ազգանունը

պարզաբանվել է ՀՀ քր. դատ. Օր-ի 20 և 86 հոդ. հոդ. սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները ներառյալ՝ ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալու պարտավորություն չունենալու մասին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ փաստաբանի հետ ներկայանալու իր իրավունքը: Միաժամանակ նախազգուշացվել է սուտ ցուցմունք տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ քր. Օր-ի 338-339 հոդ. հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

վկայի ստորագրությունը

Հարցաքննությունից առաջ _____ տեղեկացվել է, որ նա հարցաքննության է կանչվել
վկայի ազգանունը

գործի էությունը

փաստի առթիվ հարուցված գործով:

Գործով իրեն հայտնի հանգամանքների մասին վկա _____ հայտնեց՝
ազգանունը

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՉԱՓԱՀԱՍ ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

« _____ 2010 թ.

թ. Վանաձոր

Հարցաքննությունը սկսվել է ժամը _____-ին

Ավարտվել է ժամը _____-ին

ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ, ոստիկանության
ավագ լեյտենանտ պահպանելով ՀՀ քր. Դատ. Օր. -ի 28, 206 եւ 209 հոդվածների
պահանջները, թիվ _____ քրեական գործով Ստեփանավանի քննչական բաժանմունքում որպես վկա
հարցաքննեցի

Ա.Ա.Հ-

տարիքը-

ծննդավայրը-

քաղաքաց.-

կրթությունը-

աշխատավայրը-

բնակավայրը-

փոխհարաբերությունները գործով կասկածյալի, մեղադրյալի եւ տուժողի հետ-
առողջական վիճակը-

ծնողների առկայությունը-

հարցաքննությանը մասնակցում է մանկավարժ, ուսուցչուհի

_____ -եւ անչափահասի

_____ որին բացատրվել է ՀՀ քր. Դատ. Օր. -ի 207 հոդ. 3-րդ կետով
նախատեսված նրա իրավունքները՝ ներկա գտնվելու հարցաքննությանը, քննիչի
թույլտվությամբ իր դիտողությունները շարադրել եւ հարցեր տալ, ինչպես նաեւ նրա
պարտականությունները:

Տասնվեց տարին չլրացած վկային բացատրվել է գործին վերաբերող ամեն ինչի մասին
ճշմարտացի պատմելու նրա պարտականությունը եւ միաժամանակ բացատրվել է ՀՀ քր.
դատ. օր. -ի 86 հոդվածով նախատեսված նրա իրավունքները:

վկայի ստորագրությունը

Տասնվեց տարին լրացած անչափահաս վկային պարզաբանվել է ՀՀ քր. Դատ. օր-ի 86
հոդվածով սահմանված նրա իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝
քննության ներկայանալու փաստաբանի հետ եւ միաժամանակ նախազգուշացվել է
սուտ մատնության տալու, ցուցմունք տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար ՀՀ
քրեական օրենսգրքի 338-339 հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին ,

ինչպես նաև ՀՀ քր. Դատ. օր-ի 20 հոդվածով սահմանված նրա իրավունքը՝ իր, ամուսնու եւ մերձավոր ազգականների դեմ ցուցմունք տալու պարտավորություն չունենալու մասին:

վկայի ստորագրությունը
Անչափահաս վկա _____ տեղեկացվեց, որ
հարցաքննության է

Անչափահաս վկա _____ եւ
մանկավարժ _____ նախազգուշացվել են, որ հարցաքննության ընթացքն
արձանագրվում է, համակարգչային տեխնիկայի միջոցով եւ առարկություններ չեն արվել:
Այնուհետեւ անչափահաս վկա _____ առաջարկվեց պատմել իրեն հայտնի
հանգամանքների մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անչափահաս վկայի հարցաքննության

« »200 թ.

քաղ.

Հարցաքննությունն սկսվել է ժամը-ին,
ավարտվել ժամը-ին

Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ

ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ,86-րդ,87-րդ,101-րդ,205¹ -209-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ,
ներկայությամբ՝

որպես անչափահաս վկա հարցաքննեցի՝

Ազգանուն,անուն հայրանուն.....

Ծննդյան տարեթիվը.....

Ծննդավայրը.....

Ազգությունը և քաղաքացիությունը.....

Կրթությունը.....

Ընտանեկան դրությունը.....

Աշխատավայրը,պաշտոնը և հեռախոսահամարը.....

Դատվածությունը

Բնակության վայրը և հեռախոսահամարը.....

Հարաբերությունները կասկածյալի,մեղադրյալի և տուժողի հետ.....

Նախքան քննչական գործողությունն սկսելը՝ սույն հարցաքննությանը մասնակցող անձանց պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նրանց իրավունքները և պարտականությունները,ապահովվել է նույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը:

Իմ ստորագրությամբ հաստատում եմ, որ՝

- տեղեկացվել եմ,թե,որ գործով եմ կանչվել վկա.
- ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով,ներառյալ ՀՀ քր. դատ. օր-ի 86 հոդ.սահմանված վկայի իրավունքները և պարտականությունները,պարտականություններս չկատարելու,ինչպես նաև ընտրածս դիրքորոշման իրավական հետևանքները,իմ մասնակցությամբ կատարվող սույն քննչական գործողության նշանակությունն ու իրականացման ընդհանուր կարգը,
- նախազգուշացվել եմ գործով ինձ հայտնի ամեն ինչ պատմելու իմ պարտականության մասին.
- ինձ պարզաբանվել է, որ պարտավոր չեմ տալ ինձ,ամուսնուս կամ մերձավոր ազգականներիս հանցագործության մեջ մերկացնող ցուցմունքներ.
- նախազգուշացվել եմ սուտ ցուցմունք տալուց հրաժարվելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ և 339-րդ հոդ.նախատեսված քրեական պատասխանատվության մասին.
- ինձ պարզաբանվել է,որ իրավունք ունեմ ցուցմունքներս գրել իմ ձեռքով.
- ինձ բացատրվել է սույն արձանագրությունում լրացումներ և ուղղումներ կատարելու իրավունքս.
- քրեական վարույթն իրականացնող մարմինն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իմ իրավունքների և պարտականությունների իրականացման հնարավորությունը:

8. Նամակներ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՈՒԿ ԲՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0010 քաղ. երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. /37410/ 511-601, ֆաքս /37410/ 511-601

№ 18-բ-11
«13» 07 2011 թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Ա.Սաբունցին

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննարկվել են վկաների
պաշտպանության հետ կապված Ձեր կազմակերպության կատարած
ուսումնասիրության արդյունքները:

Հարկ է նշել, որ մանրակրկիտ և համակողմանի այդ
ուսումնասիրության արդյունքում ներկայացված է բավականին հետաքրքիր
զեկույց, իսկ դրանում առաջ քաշված հարցերն ու առաջարկներն արդիական
են, հատկապես, որ վերաբերում են քրեական դատավարության իրավունքի
այնպիսի կարևոր ինստիտուտի, ինչպիսին է քրեական դատավարությանը
մասնակցող անձանց, մասնավորապես՝ վկաների պաշտպանությանը:

Ուշագրավ է, որ Ձեր կազմակերպության կատարած
ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են նախաքննական մարմինների
շենքային պայմանները, այդ մարմինների վարչական շենքեր վկաների
մուտքի և ելքի կարգը, վկաներին հարցաքննության կանչելու կարգը և ինչը
առավել կարևոր է՝ վկաների հարցաքննության պայմանները: Կատարված
ուսումնասիրություն արդյունքները ևս մեկ անգամ փաստում են այն մասին,
որ անհրաժեշտություն է դարձել նախաքննական մարմինների շենքային
պայմանների բարելավումը, այդ մարմինների շենքերում
հարցաքննությունների, առերեսումների, անձին ճանաչման ներկայացնելու
համար նախատեսված, հատուկ տեխնիկական միջոցներով և
սարքավորումներով հագեցված, տարբեր մուտքերով և ելքերով սենյակներ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ԲՆՆՉԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԵԼՔ
13-07 2011

ինչպես նաև վկաների սպասասենյակներ նախատեսելը և կահավորելը: Նման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ քրեադատավարական օրենքով նախատեսված՝ դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության մի շարք միջոցներ ուղղակի հնարավոր չէ կիրառել առանց նախաքննական մարմիններում նման պայմաններ ստեղծելու:

Կարծում ենք, ներկայացվող զեկույցն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն:

Հարգանքով,

*Արդարադատության երկրորդ դասի
պետական խորհրդական*

 Ա. Միրզոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

№ 47/4-07-11

«15» հունիսի 2011 թ.

**«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Արթուր Սաքունցին**

Ի պատասխան Ձեր 02.07.2011թ.
թիվ Ե/2011-02/07/169 գրության

Հարգելի պարոն Սաքունց,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը ուսումնասիրել է 2010թ., օգոստոս-դեկտեմբեր ամիսներին «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վկաների պաշտպանության ծրագիրը»:

Հայաստանի Հանրապետությունում վկաների պաշտպանության տեսական ու գործնական ուսումնասիրությունը ընդգրկել է քրեական դատավարության այդ ինստիտուտի, համարյա, բոլոր կողմերը, բացահայտվել են այդ բանգավառում առկա խնդիրները, ներկայացվել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Միևնույն ժամանակ ՀՀ գլխավոր դատախազությունը համաձայն չէ ուսումնասիրության այն հետևությանը, թե դատախազությունը մեծ ազդեցություն ունի քննչական բաժինների գործողությունների նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն դատախազությունը
հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության
նկատմամբ: Դատախազությունը սահմանադրական այդ լիազորությունն իրականացնում
է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությանը խիստ համապատասխան, որը
նպաստում է գործի օբյեկտիվ քննությանը:

Ընդհանուր առմամբ, վկաների պաշտպանության ինստիտուտի այս
հետազոտությունը ուսանելի, օգտակար նախաձեռնություն է, որը կարող է նպաստել
քրեական դատավարությունում վկաների պաշտպանության արդյունավետության
բարձրացմանը: ՀՀ գլխավոր դատախազությունն իր պատրաստակամությունն է
հայտնում հետազոտության արդյունքում ձևավորված մի շարք առաջարկություններ
կենսագործելու համար:

Հարգանքով՝

**ՀՀ գլխավոր դատախազի
խորհրդական՝**



Հ. Ստեփանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-772, Ֆաքս: (00374 10) 511-757

№ ԴԴ-2 Ն-4116

«20» հուլիսի 2011թ.

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ
ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱԶՈՒՆՅԻՆ**

Ի պատասխան Ձեր 02.07.2011թ.
քիվ Ե/2011-02/07/070 գրության.

Հարգելի պարոն Սարունց,

Ձեր կազմակերպության կողմից կատարվել է «Վկաների պաշտպանության» ինստիտուտի խորը հետազոտական աշխատանքներ: Այս ծրագրի իրականացումը դատախիրավական բարեփոխումների ներկայիս փուլում խիստ կարևոր է, ուստի մենք ողջունում ենք նման ուսումնասիրության կատարումը Ձեր կազմակերպության կողմից: Վկաների պաշտպանության հիմնահարցը ընդգրկված է 2012-2014 թվականների դատախիրավական բարեփոխումների ռազմավարության ծրագրի նախագծում, որպես առանձին միջոցառում: Բացի այդ, Ձեր ուսումնասիրության արդյունքներն անպայմանորեն հաշվի կառնվեն նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներում:

Ինչ վերաբերում է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից զեկույցի վերաբերյալ մեկնաբանություններին և առաջարկություններին, տեղեկացվում է, որ այն դուրս է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի լիազորությունների շրջանակից:

**ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ԶԱՐՏՈՒՂԱՐ**

ՆՈՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

9.SUMMARY OF THE REPORT ON THE PROTECTION OF WITNESSES

Introduction

Since it was founded the Helsinki Citizens' Assembly Vanadzor Office (HCAV) has been providing free legal advice and assistance to anyone who has applied to the organization and whose rights have been violated or may be violated by state agents.

The idea of studying the state of witness protection came to us as early as 2006. The main aim of conducting the study through the HCAV was the detection of legislative and practical possibilities of the participants of criminal proceedings, as well as the identification of problems that obstruct the provision of such protection in an effective manner.

It was for the identification of these problems that the HCA Vanadzor Office initiated the Witness Protection Programme with the assistance of the Organization for Security and Co-operation in Europe Office in Yerevan.

The Witness Protection Programme aims to explain an important institute of the criminal justice system of the Republic of Armenia such as the protection of witnesses. In particular, this study aims to analyze existing legislation and practice and, through the study and comparison of international practice, identify the current possibilities of witness protection and offer options for improvement.

Thus, in conformity with the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the legal status of the witness is laid down by Article 86 which was amended and supplemented in 2006 and 2007 to provide broader rights to witnesses. In particular:

1. According to the amendments of 1 June 2006, the Human Rights Defender may not be summoned as a witness and interrogated on the circumstances that became known to him/her in connection with the performance of his/her duties.
2. By the amendment of 23 May 2006 the witness may appear before the body in charge of the criminal proceedings with his/her advocate.
3. As a result of the amendments of 15 November 2006, it was laid down that no one may testify against himself/herself, his/her spouse or family members. The legislation also stipulated the provisions, according to which the witness may refuse to testify against himself/herself, his/her spouse or family members.

These amendments were a substantial contribution to enhanced legal protection of witness. However, this is not always the case.

The amendments to the RA Criminal Procedure Code dated 25 May 2006 added a new Article 98¹, which envisages legal remedies. At the same time, according to the same Article, the procedure and conditions for the use of these legal remedies must be defined by the legislation of the Republic of Armenia. However, no such legislation has been developed so far and the application of Article 98¹ has become unrealistic.

Meanwhile, many countries around the world have state witness protection programmes, which are an important precondition for effective administration of justice and for establishing an atmosphere of trust.

This report contains the following sections:

1. The legislation of other countries in the field of witness protection, which will allow for improvements to the system of criminal justice through taking into consideration more effective witness protection mechanisms and tools. In particular, the legal mechanisms of witness protection foreseen by the United States of America, the Russian Federation, the United Kingdom, Australia, the Federal Republic of Germany and Italy are presented.

2. An analysis of domestic legislation: this section analyzes the RA legislation and practice based on the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, the case law of the European Court of Human Rights and the Recommendations of the Council of Europe. Recommendations are made in areas in need of improvement.

This section first of all identifies the autonomous concept of the “witness” which includes anyone whose testimony can underlie the indictment and the judgment. It further presents the elements of the witness “in danger”, the objective criteria of the imminence of the danger, the limits of using anonymous witnesses and other limitations on the right of the accused to interrogate the witness testifying against him/her. It also contains recommendations for improvements of the RA domestic witness protection regulation taking into consideration both the legislation and practice.

3. A study of the practical application of the witness protection mechanisms defined by the national legislation encompassing the monitoring of police units, the analysis of the practice of advocates and investigators, as well as the study of the employment conditions of investigators in the regions of Lori, Tavoush, and Shirak.

Problems Identified in the Area of the Protection of the Rights of Witnesses and Recommendations for their Solution

IN THE AREA OF THE CURRENT LEGISLATION

Problem	1) There is no possibility for an insolvent witness to avail himself/herself of the services of the public defender
Impact	Article 41 of the RA Law on Advocacy stipulates that “Public defence is the provision of free legal aid in cases envisaged by Article 6 of this Law”. Article 6 of the same Law states, in particular, that, “the State guarantees free legal aid in criminal cases in the manner and in cases prescribed by the Criminal Procedure Code of the Republic of Armenia...” Paragraph 5 of Article 10 of the RA Criminal Procedure Code foresees that the body in charge of the criminal proceedings may make a decision on the provision of free legal aid to the suspect or accused taking into consideration the latter’s proprietary situation. In this case the possibility of someone such as a witness benefiting from the defender’s services by other participants of the criminal case ⁷³ , such as the victim and the civil plaintiff/defendant or participants ⁷⁴ , is neglected. The studies, however, do show that in some cases the pressure on witnesses and victims by the police or other parties who have an interest in the case is greater than on the suspect or accused.
Recommendation on the legislation	<u>Make the relevant amendment to the RA Criminal Procedure Code, which will enable insolvent witnesses in particular to make use of the services of the public defender.</u>
Problem	2) The procedure for involving a person as a witness is not defined (in its section related to giving evidence on a particular case at one’s own initiative

⁷³ Paragraph 31 of Article 6 of the RA Criminal Procedure Code: “the parties of the proceedings: the prosecutor, the investigator, the body of inquiry, as well as the victim, civil plaintiff, their legal representatives and representatives, the suspect, the accused, their legal representatives, the defence counsel, the civil defendant and his/her representative”.

⁷⁴ Paragraph 32 of Article 6 of the RA Criminal Procedure Code: “persons participating in criminal proceedings: the parties of the proceedings, the investigation witness, the registrar of the court sitting, the interpreter, the specialist, the expert, the witness”.

or when being summoned and interrogated by the investigator).

Impact

Article 86 of the RA Criminal Procedure Code foresees that the witness is the person summoned by the party or the body in charge of the criminal proceedings to testify, who may be aware of a circumstance subject to identification within the case. In conformity with Paragraph 32 of Article 6 of the RA Criminal Procedure Code, the persons participating in criminal proceedings are the parties of the proceedings, the investigation witness, the registrar of the court session, the interpreter, the specialist, the expert and the witness. Interestingly, the investigator adopts a decision on involving the participants in the case (exclusively for the investigation witness who becomes a participant of the investigative action taken on the basis of the decision and the court registrar that participates in the trial to perform his/her professional responsibilities), except for the witness. This approach is by no means justified. Moreover, this makes it vulnerable to abuse.

Recommendation on the legislation

Make the relevant amendment to the RA Criminal Procedure Code which will foresee that the witness may be involved in the case on the basis of the investigator's decision.

Problem

3) The procedure for providing explanations by a person at the stage of preparation of materials, the procedure for summoning the person providing explanations for giving explanations, the rights of the person providing explanations are not defined.

Impact

Article 180 of the RA Criminal Procedure Code foresees that “1. Reports on crimes must be discussed and resolved without delay, and, when necessary to check the legality of the cause of instituting the case and the sufficiency of the grounds, within 10 days following their receipt. 2. In this period, additional documents, explanations ...may be required”. The generalist nature of this provision is vulnerable to abuses since, at the stage of preparation of the materials, explanations are taken from any person. Yet the actual status of the person providing explanations is that of a witness being deprived of the rights foreseen for witnesses, in particular, the right to appear with an advocate for providing explanations. Furthermore, the RA Criminal Procedure Code does not define any procedure as to how a person is summoned to the police to provide explanations, whether the witness has a right to refuse to provide explanations; who, where and for how long explanations may be taken from a person, who may be a person providing explanations, etc. This lack of regulation does create some scope for abuse and despite the fact that the explanations are not included as evidence, the study of the practice has revealed that at the stage of preparation of the materials the investigative body builds the case with the help of explanations provided by persons with no status and, consequently, no procedural rights, which is illegal and unlawful.

Recommendation on the legislation

